



Հերոսական սերունդ



Հայոց Պետ Հրատ

891.99(082) 13831
З-56 Հերոսական
սերունդ..
5
29/XI 2|3|

891.99-93
Հ-56

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԵՐՈՒՆԴ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Հ II 13834
Հ 30856

Կազմեցին և խմբագրեցին
Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Ս. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ
1948

ГЕРОИЧЕСКОЕ ПОКАЛЕНИЕ

(Сборник на армянском языке)

Армгиз, Ереван, 1948

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սրանից երեք տասնյակ տարի առաջ, քաղաքացիական կռիվների փոթորկալի օրերին, Սովետական իշխանության համար մղված մարտերի բոցերում ծնվեց Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միությունը։ Սոցիալիստական Մեծ Հեղոլուցիայի առաջնորդներ Լենինն ու Ստալինը հանդիսացան կոմերիտմիության ստեղծողները։

Անցած երեսուն տարիների ընթացքում Համամիութենական Լենինյան—Ստալինյան կոմերիտմիությունն իրեն ցուցաբերեց որպես բոլշևիկների պարտիայի հավատարիմ օգնական և մարտական ռեզերվ։ Նա մեծագույն նվիրվածությամբ պաշտպանեց մեր Սովետական Հայրենիքը իմպերիալիստական գիշատիչների հարձակումներից և ակտիվորեն մասնակցեց ու մասնակցում է մեր երկրում ծավալվող սոցիալիստական շինարարությանը։ Կոմերիտմիությունը հանդիսացավ սոցիալիստական մրցության նախաձեռնողը։ Սովետական կառավարությունը բարձր գնահատելով Համամիութենական Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միության և նրա ղեկավարած ողջ երիտասարդության մարտական ու աշխատանքային ձեռքբերումները՝ Համկկեմ-ը պարգևատրեց Կարմիր դրոշի, Աշխատանքային Կարմիր Դրոշի և Լենինի երկու շքանշաններով։

Այս ժողովածուի մեջ զետեղված բանաստեղծությունները ու ակնարկները,—որ գրել են մեծ մասամբ ներկա և նախկին կոմերիտականները—նկարագրում են Համկկեմ մարտական ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմերիտմիության սաների անթառամ ավանդները՝ Հայրենական Մեծ պատերազմի ռազմադաշտերում և նրանց անձնվեր պայքարը եռպատերազմյան հնգամյակը ժամկետից շուտ կատարելու, սովետական մեծ տերության հզորությունն էլ ավելի ամրապնդելու համար։

«Կոմերիտմիությունը մեզ մոտ միշտ կանգնած է եղել մեր մարտիկների առաջին շարքերում: Ես չգիտեմ որևէ դեպք, որ նա մեզ մոտ ետ մնար մեր ռեվոլուցիոն կյանքի իրադարձություններից»:

ՍՏԱԼԻՆ

Աշխարհն ահա մի աչք դառած
քեզ է նայում բյուրակնահյուս,
Դու իր դալիքն առավոտող
հորիզոնն ես հազարալույս,

Խորտակված են մահախուճապ
դարպասները Բեռլինի դոռ,
Զորքդ հաղթած ներս է մտել,
ինչպես գարունն ամենաղոր։

Քեզ արևը պիտի լինի
հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է
քո մեծ սրտով իմաստության։
Դու ինձ հանիր քարի տակից
Ինչպես աղբյուր և ես ահա
Քեզ եմ երգում Զանգու դառած
լեռների մեջ մեր բյուրակնյա,
Դու հայրենիք տվիր հային,
որ դրախտ է աչքիս թվում,—
Դու չես թողնի մեր Արարատ
Լեռն էլ պանդուխտ մնա հեռվում։

Քեզ արևը պիտի լինի
հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է
քո մեծ սրտով իմաստության։

ՄԵՐ ՓՈԹՈՐԿՈՏ ՈՒԼԻՆ

Կոմերիտմիությա փառապանծ 30-ամյակին

Երբ սուլել են կուվի մրրիկները հրե՝
«Ավրորայից» թռչող արկերի խուլ երգով,
Երբ Իլյիչն է ոտքն իր զրահապատին դրել
Ու երբ հեռուն պարզած իր հանճարեղ ձեռքով
Հին պատյան է փոխել այս հին մոլորակի,
Ծնվել ենք մենք։

...Եվ յուրտ
Խրամատն է դարձել մեզ օրորոց,
Եվ օրորել է մեզ պայքարի երգը բոց։
Մեզ փորձել է դնդակն ու յուրտն է մեզ այրել,
Ջյան ալիքն է ծածկել մեզ ամայի դաշտում
Եվ արյունից մեր տաք սառույցներն են հալվել,
Երբ մարտնչել ենք մենք Կրոնշտադտում։
Բայց սրտերում մեր ջերմ պահած հույս ու հավատ,
Իսկ ուսերիս՝ բախտը համայն հողագնդի,
Փոթորիկի միջով մենք անցել ենք առաջ
Եվ դրոշն ենք տարել լենինյան մեծ գնդի։
Այդ դրոշով ենք մենք հաղթանակը կոփել,
Նրա բոցում թրծել մեր սիրտը տաք,
Եվ երբ հարկ է եղել փակել ենք մեր կոպերն
Ու ընկել ենք նրա ծփանքի տակ։
Իսկ երբ հաղթանակած վերադարձել ենք մենք
Լենինը՝ հայրը մեր ու խիղճը մեր դարի
Սմոլնիի առջև ողջունել է մեզ ջերմ,
Ու դեպ հեռուն պարզած նույն հանճարեղ ձեռքով
Նոր ընթացքն է նշել մեր նոր ճանապարհի։
Ու մենք տարերքն ենք խոլ մեր ձեռներով սանձել,

Փոխել ենք դետերի ընթացքը հորդ,
Եվ չոր անապատում, ուր արևն է խանձել,
Գարուններ ենք փռել մենք ծաղկավոր։
Մենք բևեռն ենք առել կամքով մեր անխորտակ,
Եվ ծովերում կապույտ նոր ճամփաներ բացել.
Մենք ընկել ենք փառքով Մոսկվայի տակ,
Կարպատների վրա՝ հերոսացել։
Մեզ Ստալինն է մեծ իր հանճարով կռվել,
Պայքարի մեջ թրծել մեր սիրտը տաք.
Եվ երբ հարկ է եղել փակել ենք մեր կոպերն
Ու ընկել ենք նրա ղրոշի տակ։
Մենք շարքային ու քաջ Մատրոսովի սրտով
Հրակնատն ենք փակել արհավիրքի պահին,
Զոյայի պես կանգնել ենք անվրդով
Եվ բարձրից ենք նայել թշնամուն ու մահին։
Եվ արդ, երբ մեր կապույտ կամարների ներքո
Լույս գարունն է ճախրում ծիծառների թևով,
Եվ մենք մեր հայրենի ակոսների մեջ խոր
Բախտի սերմն ենք ցանում մեր լիաբուռ ձեռով,
Այնտեղ, Ուլյանովսկում, օվկիանոսից անդին
Նյութում են նոր դավեր ու ատոմը կիսում,
Որ նոր աղետ բերեն հողագնդին,
Եվ նոր աղետ բերեն Հայրենիքին իմ սուրբ։
Բայց լսեցե՛ք, քուրմեր, արնատենչ ու ագահ,
Մեզ չի սարսի երբեք ձեր ձայնը վայրագոչ,
Եվ իմացե՛ք, որ մեր զինվորական
Հագուստն է լոկ փոխվել, իսկ սիրտը՝ ոչ։
Եվ իմացե՛ք, մե՛րն են գալիքները ոսկի,
Մե՛րն է օրը վաղվա, մեր աշխարհի մարդուն,
Եվ իմացե՛ք, քանդի անվրեպ է խոսքն իմ,
Ինչպես իմ դնդակն էր երեկվա խոլ մարտում։

———

ԱՍՏՂԸ

Գիշեր. ահա աստղերն են
Երկնակամարում։
Գիշեր. ահա աստղերն են
Վառվում ու մարում։

Երկինքը չինջ է, կապույտ,
Փռված դորգի պես,
Հովը տալիս է համբույր,
Ամ որ հանդիպես։

Ես նայում եմ երկնքին,
Երկնակամարին.
—Ո՞ւր ես, տատիկ իմ անգին,
Իմ հե՛զ, իմ բարի՛...

Երբ ծնվեցի մեր գյուղում,
Մեր հին խրճիթում,
Տատս ալյուր էր մաղում
Ու մեղմ աղոթում։

Երկինքն ամպոտ էր ու թաց
Եվ շունն էր հաչում...
Երբ ծնվեցի, նա ասաց
Ջայնով դողդոջուն...

—Ոչ մի աստղ չի շողում,
Երկինքը մութ է,

Անտեղ չունես, իմ գառնուկ,
Աստված անգութ է...

Այսպես եկա ես աշխարհ
Մեր հին տնակում,
Ու մեծացա ինչպես ծառ
Երկնքի տակ լուռ...

Հորս հետ հանդ գնացի
Մերկ ու ոտաբաց,
Երկնքի տակ քնեցի,
Աստղերով հարբած։

Ինչպես քամուց քշված ամպ
Տարիներն անցան,
Ու ես հասա խնդությամբ
Օրերին պայծառ...

2

Գիշեր. ահա աստղերն են
Երկնակամարում.
Գիշեր. ահա աստղերն են
Վառվում ու մարում։

Երկինքը ջինջ է, կապույտ,
Փռված դորգի պես,
Հովը տալիս է համբույր,
Ուր որ հանդիպես։

Ես նայում եմ երկնքին,
Երկնակամարին,
Ել ասում եմ—իմ անդի՛ն,
Տատի՛կ, իմ բարի,—

Իմ աստղը ամենից
Պայծառ է շողում,
Ողջ աշխարհն է իր անբիծ
Լույսով ողողում։

Իմ աստղը Կրեմլի
Աստղն է անմար,
Որ շողում է, լույս տալիս
Ամբիչ ու վառ։

Իմ աստղը նա է, նա
Վառվող աստաղի,
Որ շողում է Կրեմլյան
Մեծ աշտարակից։

Միլիոնների ա՛ստղ, դո՛ւ,
Վառվի՛ր, հուրհրա՛,
Երջանկության դու մարդու,
Դու ցնծության ջա՛հ։

ՀԵՏԱԽՈՒՅՔԸ

Սուլում, մոլեգնում էր արդեն փետրվարը,
Սառույց էր ու սառը քամի,
Յրտից հեծկլտում էր հեռու այն անտառը,
Պարզկա գիշերվա ուշ ժամին։

Վերից լուսնկան իր պաղ լույսը ցողում էր,
Կարծես նա դողում էր ահից,
Լույսով մի փարթամ ծառ վախով ողողում էր,
Հեռու իր, հեռու իր գահից։

Ծառից պինդ կապված էր խիզախ ռուս զինվորը,
Այն քաջ հետախույզը տոկուն,
Որին չարչարել ու տանջել են ողջ օրը,
Անզոր տիրելու իր հոգուն։

Գունատ էր։ Սառել էր դեմքին լուսնի լույսը,
Ու բուքն էր ծառերն օրորում.
Ախ ի՞նչ էր, ախ ի՞նչ էր խորհում հետախույզը,
Եվ ի՞նչ էր մտքով որոնում։

Կանգնել են քարի պես դերման զինվորները,
Խոժոռ սպառնում է սպան.
Ու հողմը հեծում ու ծեծում է ծառերը,
Թափում փաթիլները ձյան։

—Լսո՞ւմ ես, հասել է արդեն քո վախճանը—
Ասում ու նայում է սպան.—
Կարող է փրկել քեզ լոկ քո պատասխանը,
Քո խոսքը, քո կամքը միայն։

Ասա ռազմական ձեր բոլոր դաղտնիքները,
Ահա իմ խոստումը հաստատ—
Իսկույն կարձակեմ քո տանջող կապանքնե՛րը,
Կապրես աշխարհում այս ազատ։

Անշարժ է դինվորը, դեմքին լուսնի լույսը,
Անտառն է բուքից ճռնչում.
—Հիմա էլ ազատ եմ—դոչից հետախույզը,
Դուք լոկ իմ մարմինն եք տանջում։

Ազատ իմ հոդին դեռ թռչում, սավառնում է,
Ինչպես սրաթև մի արծիվ.
Խիզախ մեր դնդերը հեռվից նա տեսնում է,
Նրանց հետ նետվում է կրոիվ։

Քարի պես կանգնել են գերման դինվորները.
Մթնում, մոայլվում է սպան.
Յասկուա կրծոտում է նա իր շրթունքները,
Նորից նա դիմում է նրան.

—Լսո՞ւմ ես, կարող եմ վառել ես այս ծառը,
Այրել, հրդեհել քեզ խաչատ,
Լույսով քո ցրել այս դիշերն ու խավարը,
Քամուն տալ մոխիրդ, հիմա՛ր։

—Կորչի թող խավարը—դոչից հետախույզը,—
Հենց այդ է մեր խղճը մխակ՝
Կռվել, որ աշխարհը պահի միշտ իր լույսը,
Յրվի ձեր խավարը վայրագ։

Սպան ցասումով լի թողնում ու գնում է,
—Մընա, չարշարվի թող, սառի.
Իսկ թե չըսառի նա—մոքում մոլեգնում է—
Ծառի հետ նրան կըվառի։

Վերից լուսնկան իր պաղ լույսը ցողում էր,
Կարծես թե դողում էր ահից,

Լույսով մի փարթամ ծառ վախով ողողում էր
Հեռու իր, հեռու իր դահից։

Իսկ ծառը, իսկ ծառը թափում էր իր ճյունը,
Նվ բուքը ոռնում էր, հեծում,
Թռչում գալարվում էր, պարում հողմի սյունը,
Ծառերն էր, ծառերն էր ծեծում։

Ճչում, ճռնչում էր, փնչում էր անտառը,
Ջինվորը մրսում էր, դողում,
Ախ, մոր պես գրկել էր կարծես նրան ծառը
Ջյունի փաթիլներ էր ցողում։

Մտքով սլանում էր զինվորը իր տունը,
Ջեռներն ու ոռները կապած,
Իսկ ծառը ճչում ու թափում էր իր ճյունը,
Ճերմակ իր վարսերը փետած։

Այնպես հարազատ էր թվում իրեն ծառը,
Հեռու անտառում այդ տրտում,
Գուցե թե հենց այդ էր, հենց այդ էր պատճառը,
Ծառի հետ խոսում էր մտքում.

—Հայրենի ծառ, հայրենի ծառ,
Ես չեմ տրտնջում.
Դիմում եմ քեզ մարմնով տրկար,
Հոգով անդիջում։

Կապվել եմ քեզ մի շար ճեռքով,
Հեռու բոլորից,
Իմ քույրն ես դու, եղբայրն եմ քո,
Մնված նույն հողից։

Կարող ես՝ ինձ ջերմություն տուր
Մարմնով քո ծառի,
Պահպանիր ինձ, հարազատ քույր,
Կյանքըս չըսառի։

Իսկ թե սառեմ, քո ճյուղերով
Թեքվես երբ վրաս,
Գիտցիր՝ մեռա քաջի մահով,
Որ կանաչ մնաս։

Եվ երբ գարուն գա հոգեթով,
Ծաղկես դու կրկին,
Իմ աչքերով ու իմ սրտով
Նայիր աշխարհքին։

Խորհում էր. իսկ բուքը ճոճում էր ծառերը,
Ձյունի փաթիլները թափում,
Լուսնի շողերի տակ սառցե ավազները
Փայլում պսպղում են օդում։

Խորհում էր։ Կարծես թե աչքերը մարում են,
Գլուխը թեքվում է կրծքին,
Կարծես անտառի ողջ ծառերը պարում են,
Կարծես թե հանդչում է հոգին։

Կարծես ականջին իր հասնում է հին երգը,
Կարծես թե տեսնում է պայծառ,
Կարծես թե ցրվում է մշուշն ու մեգը,
Վառվում, բոցկլտում է մի ծառ։

Ծառի բոցերի մեջ կարծես երևում է...
Տեսնում է զինվորն իր դիմաց...
Ա՜խ, սիրտը կարծես թե դողում ու հևում է...
Իր կինն էր՝ մանկանը գրկած...

Իր կինն էր... Տեսիլքը ցնդում ու մարում է
Ու բուքն է խլվում իր դեմքին,
Կարծես անտառի ծառերը պարում են...
Հանդչում է, հանդչում իր հոգին...

Բայց դեռ գալարվում է այնտեղ բուքի այոնը
Սառել է զինվորը տրտում,

Թակ ծառը ճչում է, թափում է իր ճյունը,
Ճերմակ իր վարսերը փետում։

Պատռեց առավոտը մութի շղարշները,
Մեր զորքը անցավ հարձակման,
Անցան անտառով այդ խիզախ մեր դնդերը,
Կորած ընկերոջը գտան։

Սառել էր։ Նայում էր գունատ արեգակը։
Տխուր թաղեցին ու անցան,
Մնաց սրտերի մեջ նըրա հիշատակը,
Ու ծառը՝ իբրև հուշարձան։

. . . . . .

Ասում են՝ հիմա երբ ծաղկում է անտառը
Ամեն մի, ամեն մի գարուն,
Ուրախ շորորում է, փայլում է այն ծառը,
Նայում է ծաղկով զարդարուն։

Կարծես սոսափում է այն հին, այն հին երգը,
Փարվում են ճյուղերը իրար,
Գալիս ու երգում են այնտեղ աղջկերքը,
Ծիծաղը հնչում է վարար։

Ու երբ ճառագում է հաղթության մեծ օրը,
Ծաղկունքը նայում են ծառից,
Ժպտում է նրանց մեջ զոհված այդ զինվորը,
Թրթում է՝ ապրում է նորից...

1948. 15. 1

ԱՆՄԱՀՆԵՐԸ

***

...Անցնում են ժամանակները... Անցնում են ժամանակները և գնալով ավելի սիրելի, ավելի պայծառ են դառնում սովետական քաջերի կերպարները, նրանց հայրենասիրական սխրությունները, այն անձնուրաց հերոսական գործերը, որ ֆաշիզմի դեմ մղված մեծագույն մարտերի տարիներին հիացրին ամբողջ աշխարհը և որ այժմ ոգեշնչման ու աշխատանքային խիզախումների մշտահոս աղբյուր են դեպի կոմունիզմ քայլող մեր սերնդի համար...

Շա՜տ, շա՜տ են այն հերոսները, որոնք իրենց երիտասարդ կյանքը նվիրաբերեցին սրբազան հայրենիքին, որպեսզի Բուխալը շպատի նրա պայծառ երկնակամարը և սովետական ժողովուրդներն ապրեն կապույտ երկնքի տակ, ազատ ու երջանիկ...

Հայրենական Մեծ պատերազմի դաժան օրերին Կերչի թերակղզում անհավասար մարտեր մղող, Կովկասը պաշտպանող և Բեռլինի վրա գրոհող բազմազգ մարտիկների քաջագործություններն մասին բազմաթիվ էջեր են գրված զինվորական Թղթակցի իմ հուշատետրում։ Թերթում եմ այդ էջերը։ Դրանք ռազմի դաշտում կատարված հսկաձեռ, անսխալական նշումներ են մեր երիտասարդ հերոսների մասին։ Այդտեղ նշումներ կան Բշնամու թիկունքում՝ Վլադիկավկազի անտառներում իր գործողություններով աշքի ընկած սովետական ռազմիկների մասին, որոնց գլխավորում էին վրաց ժողովրդի զավակ մայոր Գեորգի Նարիմանիձեն և Հայաստանի Կոմերիտմիության սան Սանդրո Սարգսյանը։ Այդտեղ նշումներ կան ռուս կոմերիտական հետախույզ Վասիլի Ռիչկովի, ուկրաինացի Իվան և Դմիտրի Օստապենկո եղբայրների (որոնք մի օրում ոչնչացրին գերմանական 12 տանկ), կրասեր լեյտենանտ Իդրիս Սուլեյմանովի, գնդացրորդ Մուրադ Արշակունու, ականանետային մարտկոցի հրամանատար Հայկ Կիրակոսյանի, Սովետական Միության Հերոսի կոչման արժանացած Հունան

П 30857

Ավետիսյանի, Սուրեն Առաքելյանի, Ջհան Կարախանյանի և ուրիշ շատ ռազմիկների մասին, որոնց բոլորն էլ ժամանակին կրել են պիոներական կարմիր փողկապը և Լենինյան կոմերիտմիության նվիրական տոմսը։

Ահա նրանցից մի քանիսը։

ԳՐՈՂԻ ՈԳԻՆ

Սովետական բանակի մյուս զորամասերի հետ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը ևս Կուբանի ազատագրման մարտերին մասնակցելով՝ հասել էին «Դոլգայա» լեռան և «Սախարնայա գոլովկա» բարձունքի ստորոտները։

Բանակի հրամանատարությունը հայկական դիվիզիայի զորամասերի առաջ ևս խնդիր դրեց գրոհել թշնամու այդ պաշտպանական գծերի վրա և ճանապարհ հարթել դեպի Նովոռոսիյսկ։

Հունանը ներքևից հայացքն ուղղեց դեպի լեռնակատարները, որտեղից գերմանական պաշտպանության «Կապույտ գիծն» էր անցնում։

«Այդ բարձունքները շուտով մերը պետք է լիննեն»,— մտածեց նա և ուղղվեց դեպի վաշտի հրամանատարի դիտակետը։

Այնտեղ չերմ զրույց տեղի ունեցավ վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Ջուրաբ Վարդանյանի և դասակի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի միջև։

Վարդանյանը մտածում էր բարձունքը գրավելու համար կազմված հատուկ գրոհային խմբի հրամանատար նշանակել համարձակ ու անվեհեր մի ռազմիկի՝ Գաբրիել Հասրաթյանին։

Հունանն առարկում էր հրամանատարին.

— Արի դու ինձ նշանակիր։ Ես կվերցնեմ բարձունքը։ Միայն թույլ տուր, որ ինքս ջոկեմ գրոհային խմբի անդամներին։

Վաշտի հրամանատարը տեղի տվեց Հունանի խնդրանքին՝ նրան իրավունք վերապահելով իր ցանկացած մարտիկներից կազմել գրոհային խումբ և պատրաստվել գրոհելու Նովոռոսիյսկի մոտ «Դոլգայա» լեռան № 137 բարձունքի վրա։

Այդ անտառապատ և ապառաժոտ բարձունքները հիտլերականները մեկ տարուց ավելի իրենց ձեռքը պահելով՝ վերածել էին պաշտպանության ամուր հանգույցի, ստեղծել էին դոտերի, դզոտերի, ականապատ դաշտերի, հակահետևակային արգելակների,

խիտ փշալարերի մի ամբողջ ցանց։ Այդ բոլոր ինժեներային— պաշտպանական կառուցումներն իրար էին միացած խոր ու երկար խրամուղիներով։

Այդ բոլորը գիտեր Հունանը։ Նա գիտեր, թե ինչ է նշանակում դրոհել այդ բարձունքի վրա, հաղթահարել թշնամու հզոր, անառիկ համարված ամրությունների այդ մի օղակը։ Սակայն նա ուզում էր հաղթահարել այդ դժվարությունները, կատարել իր պարտքը և հերոսանալ իր ժողովրդի, իր Հայրենիքի առաջ։

***

Անձրևային, խավար մի գիշեր, անձայն ու անշշուկ, «Գոլգոթա» լեռան գերմանական ամրությունների վրա էին դրոհում մի խումբ մարտիկներ։ Նրանց բոլորի առաջից, ավտոմատը ձեռքին և նռնակներով բեռնված՝ քայլում էր դրոհային խմբի հրամանատարը՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։ Նրան անմիջապես հետևում էին պարթևահասակ, Միկենեղ, սև ու խոշոր աչքերով մի երիտասարդ—Լոռվա սեդ լեռնաշխարհի զավակ Վասիլ Սաքանյանը, ձեռքի գնդացրորդ չաֆարաբադցի Ծերուն Գրիգորյանը, ալավարսեցի Գրիգոր Բաբայանը, զափանցի անտյալեր Հրանտ Հարությունյանը, ելդովանցի Սարգիս Խաչատրյանը, եղվարդցի Նահապետ Առաքելյանը, զազախեցի Հայկազ Սաֆարյանը, Ջավեն Գևորգյանը, Սիամոսը, Հարեթը և ուրիշներ, բոլորն էլ կոմերիտական, երիտասարդ տղաներ։

Արդեն նրանք առաջացել էին սարն ի վեր, երբ կարմիր, կապույտ, դեղնավուն ու կանաչավուն հրթիռներ արձակվեցին երկնակամարի խավար օվկիանոսի մեջ և լուսավորեցին ռազմադաշտը։

Հունանն անմիջապես մեխվեց գետնին։ Նրա օրինակին հետևեցին Վասիլը, Ծերունը, դրոհային խմբի բոլոր անդամները։ Սակայն բուռ երեսկրին թշնամին նկատել էր սավերների շարժումներ։ Գերմանական դոտերից ու դզոտերից հաստոցավոր ու ձեռքի գնդացիրներն սկսեցին սանրել այն տեղամասը, որտեղ դրոհային խմբի մարտիկներն էին պառկել։

— Տղե՛րք, շատ եմ խնդրում՝ վիրավորվելու դեպքում ձայն ու ծպտուն չհանենք, թե չէ կմատնվենք բոլորս էլ,—մարտիկներին նախազգուշացնում էր հրամանատարը։

Հունանը օգտվելով հրթիռների մարելուց՝ մի րոպե առուգեց

ին նրա աչքերը, նա իր վրա հառած տեսավ զորամասի հրամանատարի ժպտացող հայացքը: Ապա Գառնիկ Մանուկյանը տեսավ իր կողքին պառկած Վարդան Վարդանյանին, որի աչքերում նա կարդաց երախտագիտություն՝ իր կյանքը փրկելու համար:

Այդպես արդեն դրվել էր նրանց ընկերության հիմքը. ռազմաճակատն արյամբ միացրել էր նրանց:

Մի քանի ժամ հետո, երբ նրանք հրամանատարին հայտնեցին իրենց հետախուզության արդյունքները, հրամանատարը համբուրեց նրանց, և ղպաց, որ այդպես ջերմ նա առաջին անգամն է համբուրում իր կյանքում մի ուրիշ մարդու:

լով ռազմիկներն արդեն մոտեցել էին № 137 բարձունքի լանջերին գտնվող թշնամու դզօտիներին։ Հասել էր անմիջական գրոհի ժամանակը։ Այդ րոպեին մարտիկ Սահակյանը Հունանից առաջ անցնելով՝ մոտեցավ մի դզօտի և դռնակից ներս շպրտեց հակատանկային նռնակներ։ Դզօտը գերմանացիների հետ հօդս ցնդեց, բայց հերոսաբար զոհվեց նաև մարտիկ Սահակյանը։ Ճիշտ այդ ժամանակ, ձախակողմյան դզօտից թշնամին կրակ բացեց գրոհողների վրա։ Կատաղի ճարճատում էին գնդացիրներն ու ավտոմատները։ Հունանը մի ոստյունով ալացավ այն դզօտի վրա, որտեղից ուղիղ կրակում էր գնդացիրը, և իրար հետևից մի քանի նռնակ նետեց այնտեղ։ Գնդացիրը լռեց։ Իրենց հրամանատարի հետևից գնացող մարտիկները մի պահ ոտտանվեցին անելանելի դրության առաջ։ Հենց այդ րոպեին հնչեց մի խրոխտ ու առնական մարտակոչ.

— Տղե՛րք իմ հետևի՛ց...

Եվ Հունանը մի ակնթարթ նկատեց, որ իր հետևից անմիջապես գրոհում էր Վասիլ Սաքանյանը։

Ապա նա, կարծես երազում, լսեց մի ծանոթ ձայն.

— Ընկե՛ր հրամանատար, դուք վիրավորված եք...

Ավետիսյանը չպատասխանեց։ Նա ոչինչ չէր զգում, ո՛չ վերք, ո՛չ արյուն։ Իր կյանքով խիզախում էր միայն լռեցնել գնդացիրը, թույլ չտալ, որ նա խլի իր կարիճների կյանքը, վիժեցնի հաղթանակը։

Հանկարծ նրա աչքին երևացին արյունաշաղախ գետին ընկած մարտիկները։

Պղտորվեցին ու վրեժով վառվեցին ծանր վիրավոր Հունանի աչքերը։

Նա մի ակնթարթում դիտեց իր սիրելի ռազմիկներին, որոնք կռվում էին առյուծի քաջությամբ ու՝

— Տղե՛րք, ընկե՛ր մարտիկներ,— դողդողաց նրա ձայնը,— այլևս այս դզօտը չի դիմելու։ Հրամայո՛ւմ եմ, հանո՛ւն Մատլինի, առա՛ջ...

Այսպես գոռալով՝ նա նետվեց դեպի դզօտը, մոտեցավ գնդացրի փողին, բռնեց՝ թեքելու համար նրա ուղղությունը, սակայն չհաջողվեց։ Գնդացիրն ամբացված էր, իսկ ինքը նռնակ չուներ գնդացիրը լռեցնելու համար։ Այդ միջոցին Հունանն ամբողջ մարմնով թեքվեց գնդացրի փողի վրա և իր կրծքով փակեց հրակնատը...

Թշնամին կուրացավ։ Ծածկվեց նրա կրակային տեսադաշտը։

Գնդակները ծակծկեցին հերոսի կուրծքը։ Լռեց Հունանի ձայնը, լռեց և գնդացիրը։

Իրենց սիրելի հրամանատարի այդ դյուցազնական մահը տեսնելով, մարտիկները վրեժով բորբոքուն՝ անզուսպ առաջ նետվեցին, ոչնչացրին դշմնում գտնվող հիտլերականներին։ Վասիլն իր հսկայի ամբողջ հասակով ծառացավ ֆաշիստական ճիվաղների դեմ և Հունանի փոխարեն լսվեց նրա խրոխտ մարտակոչը...

Արդեն հաղթանակի ճանապարհը հարթվել էր։ Ավետիսյանի կործիճներն օգտվելով գնդացրի լռելուց, շեշտակի նետվեցին գերմանական խրամատների մեջ, ոչնչացրին հիտլերականներին, անողոքաբար լուծելով իրենց սիրելի հրամանատարի, իրենց զոհված ընկերների նվիրական արյան վրեժը...

Չկար այլևս հայ ժողովրդի դյուցազուն զավակ Հունան Ավետիսյանը՝ հայկական Մատրոսովը...

***

...Հաղթանակի դիշերը, ռումբերի և ականների որոտի տակ, զորամասում տարածվեց հերոսի դյուցազնական մահվան կսկծալի լուրը։ Վրեժի զդացումը ցնցեց հայ մարտիկներին։ Ինչպի՞սի սիրտ էր ունեցել հայ ժողովրդի այդ համեստ զավակը, այդ հասարակ, հողի մարդը։

Հունանի մահվան բոմբը խորապես ցնցեց նաև դիվիզիայի հրամանատարին։ Հուզված և միաժամանակ հպարտ իր մարտիկի անմահ սխրագործությամբ՝ դիվիզիայի հրամանատար, գեներալ Ն. Սաֆարյանը ռազմաճակատային թերթում գրեց.

«Ընդմիշտ կպահպանվի հայ ժողովրդի քաջարի զավակ, մեր դիվիզիայի ռազմիկ Հունան Ավետիսյանի հիշատակը, որը Սովետական Միության լեգենդար հերոս Մատրոսովի նման իր մարմնով փակեց թշնամու դզոտի ամբրազուրը և հաղթությամբ ավարտեց գրոհը»։

Նույն այդ ժամանակ գետնափորում, ծխապատ լամպի աղոտ լույսի տակ, պարտկազմակերպիչն իր գրպանից հանեց մի փոքր թուղթ և մշուշոտ աչքերով կարդաց.

«Ծնվել եմ 1914 թվին Ղափանի շրջանի Մալ գյուղում, չքավոր

գյուղացու ընտանիքում։ Մինչև ռազմաճակատ գալս աշխատում էի Միկոյանի անվան սովխոզում որպես բրիգադիր։ Կոմերիտական եմ։ Իմ ցանկությամբ այս գիշեր գնում եմ դրոհի։ Բարձունքն անպայման կվերցնեմ։ Թող հրամանատարությունը վստահ լինի դրան։

Ջերմորեն ցանկանում եմ լինել Լենինի—Ստալինի մեծ պարտիայի անդամ, այսուհետև կռվել որպես կոմունիստ և եթե հարկ լինի՝ մեռնել որպես կոմունիստ։

1943 թ. սեպտեմբերի 9»։

***

Այո՛, նա կռվեց որպես կոմունիստ և մեռավ որպես կոմունիստ, որպես դյուցազուն։ Նա անմահության իր հուշարձանը կանգնեցրեց հարազատ ժողովրդի մեծ սրտում։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թ. մայիսի 16-ի Հրամանագրով Հունան Ավետիսյանին շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Թամանյան 89-րդ եռակի շքանշանակիր հայկական դիվիզիայի ամեն մի ռազմիկի սրտում վառ է ապրում իր զինքի ընկերոջ՝ Հունանի հերոսական պատկերը, նրա անմահ սխրագործության հուզիչ հուշը։

Դյուցազնի ընկերները ոչ մի օր չեն մոռանում նրան։ Ամեն առավոտ, երբ Ավետիսյանի ընկերները շարքի են կանգնում սուդմանի համար, վաշտի ավագը խրոխտ ձայնով արտասանում է առաջին նվիրական անունը.

— Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հունան Ավետիսյան։

Եվ վաղորդյան խոր լռության մեջ լսվում է մի հուզիչ պատասխան-արձագանք.

— Ընկավ դյուցազնի մահով՝ Սովետական Հայրենիքի համար...

Ա Ն Ց Ա Ն

Քառասուներկու թվի վերջերին ռազմաճակատից վերադառնալիս՝ ծովափնյա Տ. քաղաքի մոտակա երկաթուղային կայարանում

ես հանդիպեցի մի փոքրակազմ, թուխ աղջկա, որ հենակները թևատակին մտոնելով սանիտարական գնացքին՝ ուրիշների օգնությամբ վագոն բարձրացավ։ Նրա երկու ոտներն էլ պարուրված էին սպիտակ փաթաթաններով։

Անծանոթ այս աղջկա հետ ես էլ վագոն բարձրացա և տեղավորվեցի ուղիղ նրա դիմացը։

Դժգույն էր նա։ Նիհար դեմքին վառվում էին մութ աչքերը և մեկ-մեկ կծկվում դեմքի մկանները։ Ըստ երևույթին ցավեր էր զգում։

«Ցրտահարվել են ոտները»—մտածեցի ես, բայց ոչինչ չհարցրի։

Շոտով գնացքը շարժվեց, բոլորովին դադարեց աղմուկը։ Թիկունքային հիվանդանոց փոխադրվող աղջիկներն ու տղաները մի պահ լուռ, հայացքներն ուղղած վագոնի լուսամուտից դուրս՝ դիտում էին Կովկասյան ձյունածածկ լեռներն ու անտառները։ Լսվում էր միայն գնացքի ուժգին հևոցը, որ արձագանքում էր ձորում։

Քիչ անց, մի վիրավոր աղջիկ մեղմ ձայնով սկսեց երգել մարտիկների սիրած երգը, որին ամբողջ վագոնը ձայնակցեց.

В тоске и тревоге
Не стой на пороге,
Я вернусь, когда растает снег...

. . . . . .

Ես ուշադիր դիտում էի դիմացս նստած աղջկան։ Նրա դիմագծերն այնքան ծանոթ էին թվում ինձ։

Երգը դադարեց, և զանազան դեղերի հոտով հագեցած վագոնում սկսվեց աշխույժ խոսակցություն։ Խոսում էին կռիվներից, պատմում իրենց վիրավորվելու հանգամանքները, դաստղություններ անում պատերազմի ընթացքի ու վախճանի մասին։ Այս ծանր օրերին էլ հաղթանակի հավատը չէր լքում նրանց։

— Ըստ երևույթին ցուրան է տարել ձեր ոտները, ընկե՛ր սանիտարուհի,—հետաքրքրվեցի ես դիմացս նստած աղջկանից, որ իր մտքերով տարված՝ չէր խոսում ոչ ոքի հետ։

Նրա աչքերում խաղաց մելամաղձոտ մի ժպիտ։ Մի պահ ոչինչ չպատասխանեց։ Հետո տեսնելով, որ ես սպասում եմ պատասխանի՝ ակամա խոսեց.

— Նախ, ընկե՛ր լեյտենանտ, ես սանիտարուհի չեմ, ապա տոներս ոչ թե ցուրտն է տարել, այլ տաքը...

Տարօրինակ թվաց լուրջ տոնով տրված այդ պատասխանը։ Ինչպե՞ս թե տաքը...

Կրկնապատկված հետաքրքրությամբ ես նորից հարց տվի.

— Չհասկացա, ինչպե՞ս թե տաքն է տարել...

Այս անգամ աղջիկը խորամանկորեն ժպտաց և խորհրդավոր շեշտով ավելացրեց.

— Պարզապես տաքը, կրա՛կը, խարո՛ւյկը, հասկացա՞ք...

— Ո՛չ, ներեցե՛ք, նորից չհասկացա,—կրկնեցի՝ ուշադիր և հարցական նայելով նրա աչքերին։

Արդեն զգում էի, թե ինչ-որ արտասովոր պատմություն կար այս աղջկա հետ կապված, մի հետաքրքիր պատմություն, որն ինձ՝ որպես ռազմաճակատային թերթի թղթակցի, անհրաժեշտ էր անպայման իմանալ։ Ննջարելով, որ նա հայուհի կլինի, ես հայերեն մտերմաբար հարցրի.

— Կարծեմ դուք հայ եք։

— Այո՛,—աշխուժացավ նա։

— Հայաստանի՞ց։

— Այո՛։ Լոռուց։

— Դե ուրեմն հայրենակիցներ ենք. հիմա խնդրում եմ ասացեք,—թե ինչպես կրակը տարավ ձեր տները։

Աղջիկը նեղն ընկավ։ Մտերիմ խոսակցություններից հետո, տեղի տվեց իմ խնդրանքին։ Նա լուռ ու լարված լսում էր նրան։

...Պատերազմի սկզբին նա Մոսկվայում սովորում էր Տեխնոլոգիական ինստիտուտում։ Շուտով հրաժարվում է սովորելուց և կամավոր մեկնում ռազմաճակատ։ Զորամասում ցանկանում են օգտագործել որպես սանիտարուհի։ Աղջիկը բողոքում է և պահանջում, որ իրեն սովորեցնեն գնդացիր կրակել։

— Չապաևի դիվիզիայի գնդացրորդ Անկան էր միշտ իմ աչքի առաջ և ես, ինչ գնով էլ լինի, ուզում էի անպայման գնդացրորդ դառնալ,—պատմում էր նա։

Հրամանատարությունը բավարարում է նրա համառ պահանջը. և կարճ ժամանակամիջոցում զորամասում հռչակվում է նա որպես խիզախ և հմուտ գնդացրորդ։ Իր անձնուրաց, հանդուգն գործերի ու մոկունության համար նրան սիրում էին մարտիկներն ու հրա-

մանատարները և Չապաևի անվախ գնդացրորդուհուն հիշելով անվանում Անկա, թեև 19 տարի շարունակ Սոնյա էր կոչվել։

Պաշտպանական բազմաթիվ արյունահեղ մարտերի է մասնակցում փոքրիկ հայուհին։ Նրա գնդացրի դիպուկ կրակը հնձում է թշնամու շատ զինվորներ։

Սակայն մի անգամ այնպես է պատահում, որ թշնամուն հաջողվում է շրջապատել Սոնյայի գնդացիրը։ Աղջիկը կրակում է մինչև վերջին փամփուշտը, ապանված ընկերոջ ամոոմատում մնացած բոլոր փամփուշտները, բայց գերմանացիները կարողանում են նրան կենդանի բռնել և որպես «լեզու» տանել իրենց հրամատարի մոտ։ Հենց այստեղից էլ սկսվում է նրա ոռների պատմությունը։

— Դուք ո՞ր դիվիզիայից եք,— կեղծ քաղաքավարությամբ և իր ձայնի մեջ քնքշություն մտցնելով՝ հարց է տալիս գերմանական սպան։

Գնդացրորդ աղջիկը լռում է։

Սպան այս անգամ ոռնը մի քիչ բարձրացնելով կրկնում է իր հարցը։

Աղջիկը նորից է լռում։

Թաքցնելով դայրույթը՝ սպան համբերատար շարունակում է իր հարցը.

— Ասացեք խնդրեմ, ի՞նչքան զորք կա ձեր հատվածում... զումարտա՞կ, գո՞ւնդ, դիվիզիա՞...

— Չեմ հաշվել, կարիք չեմ ունեցել հաշվելու,— վերջապես չոր-չոր պատասխանում է աղջիկը։

Գերմանական սպան դեռատի աղջկա այս արհամարհական, հանդուգն պատասխանից գազազած՝ ոտքի է ելնում ու ձեռը խփելով սեղանին.

— Խո՛զ, կեղտո՛տ խոզ,— ճչում է նա,— նման պատասխաններին համար ես քեզ անմիջապես կգնդակահարեմ։ Բայց կա՛ց, սատանա՛, նախ քան այդ՝ ես քեզ խոսեցնել կտամ. հիմա կխոսե՛ս։

Քիչ հետու հիտլերականները խարույկ էին վառել՝ տաքանալու համար։ Սպան հրամայում է իր զինվորներին՝ աղջկան քարշ տալ դեպի խարույկը։

— Ուրեմն կամ կպատասխանեք իմ հարցերին, կամ կայրվեք

խարույկի վրա. այժմ կատարեցեք ընտրություն,—հաղթական ասնով հայտարարում է ֆաշիստական սպան։

Սոնյային տանում են խարույկի մոտ, հանում են նրա կոշիկները և ոտները մատեցնում կրակին։ Այրվածքի սուր ցավերից աղջիկը ճչում է.

— Հիմա կասե՞ս ամեն ինչ,—հարց է տալիս գլխին կանգնած սպան։ Սոնյան զզվանքով նայելով մարդակերպ գազաններին՝ լուռ մի բառ է արտասանում.

— Ո՛չ...

Անասնացած ֆաշիստները նորից սկսում են այրել աղջկա ոտները։

Այդ պահին մերոնք անակնկալ կերպով հրետանային ու ականանետային կրակ են բացում խարույկի ուղղությամբ։ Խարույկին շատ մոտիկ պայթում են ականները ու արկերը։ Գերմանացիները շտապ թողնում են խարույկը և խուճապահար թաքնվում այս ու այն կողմ։ Սոնյան էլ իսկույն նետվում է մոտակա փոսի մեջ և այրվածքի պատճառած սուր ցավերից ուշաթափվում։

— Չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել,—հուզված պատմում է աղջիկը,—մեկ էլ աչքուկից գլուխս բարձրացրի և ի՞նչ տեսնեմ. մերո՞նք, իմ ընկերները կանգնել էին գլխիս և ուրախությունից դողդողացող ձայնով աղաղակում էին.

— Անյա՛, Անի՛չկա, դու կենդանի՞ ես...

Նրանք փաթաթվում էին վզովս ու համբուրում։ Սա հրաշք չէր, երազ չէր, այլ իրականություն։ Ես փրկված էի։

Ինչպես տեսնում եք, ընկե՛ր լեյտենանտ, ոչ միայն ցուրտը, այլև տաքն էլ է տանջում ոտքը,—վերջացրեց իր պատմությունը մեր լեռնաշխարհի դուստր Սոնյա Չիլինգարյանը։

***

...Վաղ առավոտյան թեթակղին կարծես ծխում էր։ Արևածագին սպիտակ գոլորշի էր բարձրանում թաց գետնից, ծովի գորշ ջրերի վրայից։ Այդ սպիտակավուն քողի միջով սովետական տանկերն առաջ էին սլանում դեպի Թաման։ Տանկերի ետևից շարժվում էին մեր հետևակայինները։ Այդ մարտիկների շարքում, Հայկական 89-րդ դիվիզիայի № զորամասի հետ, առաջ էր վազում լեյտենանտի ուսադիրներով մի փոքրիկ աղջիկ։ Այդ աղջիկը դա-

ակի հրամանատար Սոնյա Չիլինգարյանն էր։ Առաջին հայուհին, որ սպայական դասընթացն ավարտելով դարձել էր մարտական հրամանատար։

Սոնյան Սովետական Բանակի զորամասերի հետ մտավ Բամման։ Քշնամին ոչնչացվել կամ շպրտվել էր ծովի մյուս ափը։ Առաջին աղատարարը լինելու բերկրանքից ավելի էր պայծառացել Սոնյայի արևավառ, կենսուրախ դեմքը։

Հաղթանակի գիշերը քունը չէր կպչում նրա աչքերին։ Աղջիկն ապրում էր հաղթանակի քաղցրությունը և ապագայի վառ հեռանկարներ գծում։

Այո՛, շուտով կվերջանա արհավիրքը, ինքը կվերադառնա Մոսկվա, նորից կշարունակի ուսումը, բայց այս անգամ արդեն բոլորովին ուրիշ տեղ։

Սոնյայի քաղցր մտորումներն ընդհատեց ընկերուհու անակնկալ հարցը.

— Սոնեչկա, պատերազմը որ վերջանա՝ էլի՞ կդնաս Տեխնոլոգիական ինստիտուտ։

Տարօրինա՞կ զուգադիպություն։ Հենց ինքն էլ այդ մասին էր մտածում.

Պայծառացած, ուրախությունից վառվող սև աչքերը հառելով ընկերուհուն՝ նա պատասխանեց.

— Ի՛նչ։

— Բա հրաժարվո՞ւմ ես ինժեներ դառնալուց։

— Այո, սիրելիս։

— Ապա ի՞նչ ես ուզում դառնալ։

— Առաջին կին գեներալը,—պատասխանեց Սոնյան՝ հպարտ ժպտալով։

ԼԵՌՆԵՐԻ ՋԱՎԱԿԸ

«ՍԱԿՐԱՎՈՐ ԸՆԿ. ՂԱԶԱՐՈՎԸ ԹՇՆԱՄՈՒ ԹԻԿՈՒՆՓՈՒՄ ՊԱՅԹԵՑՐԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԱՑԻՆ ԵՐԿՈՒ ԿԱՄՈՒՐՋ».

(Սովետական Ինֆորմբյուրոյի 1942 թ. հոկտեմբերի 3-ի հաղորդագրությունից)։

Երկաթբետոնե զույգ կամուրջների տակից հոսում էր լեռնային ահեղավազ գետը։ Այդ կամուրջներից մեկի վրայով անցնում էր ֆաշուղին, իսկ մյուսով՝ երկաթուղագիծը։ Դա միակ ճանապարհն

էր, որով իրենց զորքերի համար դաշամաթերք, վառելանյութ և համալրում էին փոխադրում գերմանացիները։

Չնայած թշնամու խաշաձև կրակին՝ մեր սակրավորները կամուրջն ականապատել էին, սակայն չէին կարողացել պայթեցնել։ Գերմանացիներն ուժեղացրել էին կամուրջի պաշտպանությունը, պահակներ էին նշանակել և գնդացիրներ դրել։

Թշնամուց ոչ հեռու, գիշերով հավաքվել էին սակրավոր մարտիկները։ Հրամանատար Դոլդոուկովը ջերմորեն զրուցում էր նրանց հետ, բացատրում, թե ինչ կարևոր նշանակություն ունի այդ կամուրջների պայթեցումը՝ թշնամու ուժերը չլատելու դործում։

Սակրավորները լուռ լսում էին իրենց հրամանատարին։

— Ընկե՛ր մարտիկներ,—ասաց նա,—այս գիշեր մենք պետք է պայթեցնենք կամուրջը. ձեր մեջ ո՞վ է այն հերոսը, որ պատրաստ է մարտական այդ առաջադրանքը կատարել։

Խավարի մեջ բոլորից առաջ լսվեց մի ձայն.

— Ե՛ս, ընկե՛ր հրամանատար։

Եվ սակրավոր մարտիկների միջից առաջացավ անահեր մի երիտասարդ։

— Ձեր անո՞ւնը։

— Մեսրոպ Ղազարյան։

— Որտեղի՞ց եք։

— Լեռնային Ղարաբաղից։

— Ազգությո՞ւնը։

— Հայ։

— Կոմերիտակա՞ն եք.

— Այո։

Հուզիչ հարցաքննությունը երկար չտևեց։ Հրամանատարն ու կոմիսարը պինդ սեղմեցին նրա ձեռքը, մտերիմ ընկերները ջերմ համբուրվեցին հետը և նա արդեն պատրաստ էր մարտական առաջադրանքը կատարելու։

Սակայն չափազանց դժվար էր այդ առաջադրանքի կատարումը։ Կամուրջի վրա միշտ շրջում էր գերմանական պահակը և հրակոմ շրջապատին, որ ոչ ոք չմոտենա կամուրջին։ Այդ մասին մի պահ մոածեց Ղազարյանը և արագ կայացրեց իր որոշումը։ Հնարամտությունը պայծառացրեց նրա դեմքը։

Ղազարյանն իր հետ վերցրեց մի եղեգն ու մացառուտների արանքով զգույշ և անշշուկ սողաց դեպի գետափ։ Ապա սուզվեց

ջրի մեջ։ Շնչելով եղեգնափողով՝ նա հետզհետե շարժվեց դեպի կամուրջը, աննկատ բարձրացավ կամրջակապի վրա, մի ացրեց լարը, կրակ տվեց և նույն րոպեին սուզվեց ջրի մեջ։

Մթության մեջ հանկարծ բարձրացավ մի վիթխարի բոցեղեն լեզու ու ապա լսվեց ուժգին պայթյուն։ Գետինը սաստիկ ցնցվեց և կամուրջը գերմանական պահակի հետ փուլ եկավ։ Երկաթբետոնի բեկորները թափվեցին լեռնային գետի մեջ։

Հետախուզության տվյալներով թշնամու թիկունքում կատարված այդ պայթյունից հետո գերմանացիները հարևան կամուրջի վրա նշանակեցին ուժեղացրած պահակախումբ։ Կամուրջի պաշտպանությունը հանձնվեց մի քանի սպաների և 30 ավտոմատավորների։ Նրանց տրամադրվեց 4 հաստոցավոր գնդացիր։

Այժմ խիստ դժվարացավ երկրորդ կամուրջը պայթեցնելու գործը։ Բայց գերմանական բանակը սնող այդ կամուրջը ևս ամեն գնով պետք էր պայթեցնել։

Կոմիսարը նպատակահարմար գտավ, որ այդ ծանր առաջադրանքի կատարումը դարձյալ հանձնվի խիզախ ու հնարամիտ հայ մարտիկին։

— Ղազարյ՛ան, այս անգամն էլ քեզ ենք վստահում մարտական առաջադրանքի կատարումը,—Մեսրոպին իր մոտ կանչելով՝ ասաց սակրավորների վաշտի հրամանատարը։

Ղարաբաղցին շնորհակալություն հայտնեց հրամանատարին՝ իրեն վստահելու համար, ողջագուրվեց մարտական ընկերների հետ և դիշերը՝ պայթուցիկ նյութերով բեռնավորված, սողաց դեպի երկաթուղային կամուրջը։ Ռելսերի և շպալների արանքով, ուրվականի թեթևությամբ նա հասավ նպատակակետին և պատրաստվում էր լարը վառել՝ կամուրջը պայթեցնելու համար։ Բայց մի րոպե կանգ առավ։ Գերմանական պահակը շատ մոտ էր և մինչև լարի այրվելը անպայման կնկատեր կրակը և կհանգցներ. այդպիսով չէր հաջողվի մարտական խնդիրը կատարել։ Ի՞նչ աներ ուրեմն։ Մահվան երկուղից ավելի ուժեղ մի զգացում փոթորկեց նրա սիրտը, և նա արագ կերպով կայացրեց ամենածանր որոշումը՝ կարճացնել լարը և դրանով իսկ վայրկենական դարձնել պայթյունը։ Այո՛, այո՛, վայրկենական դարձնել։ Այս մտքից բոցավառվեցին նրա սևորակ աչքերը։ Նա մի վայրկյան կանգ առավ, շտապ հանեց ծոցատետրը և հուզված գրեց.

«Մնա՛ք բարով, իմ հայրենիք, իմ ծնողներ, իմ մարտական ընկերներ, այլևս երբեք ձեզ չեմ տեսնելու։ Կարճացրի շնուրը և իմ կյանքի թելը։ Չեմ ափսոսում, ընկերնե՛ր։ Հաղթանակը մերը կլինի. հիշեք ձեր Մեսրոպ Ղազարյանին»։

Նա շտապ կողքից հանեց տափաշիշը, գրությունը դրեց մեջը, պինդ փակեց թիրանը և գցեց գետափ։ Մերոնք կգրավեն այստեղը, կգտնեն հրաժեշտի իր խոսքերը...

Ապա վերջին անգամ նայեց աստղազարդ երկնքին, ականջ դրեց լեռների խաղաղությանը, հիշեց հայրենի Ղարաբաղը, որն այլևս երբե՛ք չէր տեսնելու և... կրակ տվեց լարին։

Ահարկու և ցնցող պայթյուն լսվեց։ Երկաթուղային կամուրջի կամարները փուլ եկան աղմուկով, սուզվեցին գետի մեջ՝ իրենց հետ տանելով Մեսրոպ Ղազարյանին...

Մարտական առաջադրանքը կատարված էր...

ԱՄԵՆԱԿՐՏՍԵՐԸ

Քառասունհինգ թվի ապրիլի երեքին գերմանացիները հակագրոհի անցան՝ գետը թափելու համար Օդերի ափին փոքրիկ պլացդարմում դեռ նոր ամրացած Հայկական դիվիզիայի մի խումբ ռազմիկներին։ Կատաղի կռիվներ տեղի ունեցան։ Պաշտպանվողների առաջին շարքում ավտոմատը ձեռքին համառ կռիվ էր մղում դիվիզիայի ամենակրտսեր զինվորը՝ Քոլատակ գյուղացի Նիկոլ Խաչյանը։

Վերջապես թշնամին մեծ կորուստներով ետ շպրտվեց։

Օդերի ափին անցան մարտական սխրագործություններով հարուստ օրեր։ Ապրիլի 18-ին, Ֆրանկֆուրտի մոտ, տանկերի պաշտպանությամբ գերմանացիները նորից հակագրոհի անցան։ Թշնամու գերակշռող ուժերին հաջողվեց շրջապատել սովետական փոքրաթիվ մարտիկներին։ Ոչնչանալու անմիջական վտանգ էր սպատնում, սակայն նրանք ոչ մի քայլ ետ չէին քաշվում։ Նիկոլը խրամատից վեր էր բարձրանում ու նռնակներ նետում մոտեցող գերմանացիների վրա։

Արյունահեղ մենամարտը նորից վերջացավ սովետական մի քուռ մարտիկների հաղթանակով։

Հակառակորդի հակագրոհը ետ էր շպրտվել արդեն, երբ մի

արկ պայթեց Նիկոլի շուրջ։ Նա անգիտակից ընկավ գետին և ծածկվեց հողով։

Պատանի մարտիկն ուշքի եկավ ավազ ընկերների շրջապատում։ Նրկինքը դեռ պատյտ էր գալիս գլխավերևում, իսկ ընկերների դեմքերը կարծես մառախուղի միջից էին երևում։

Նիկոլը ուզեց խոսել, հարցնել մարտիկներին, թե ի՞նչ է պատահել իրեն, բայց չկարողացավ արտասանել ոչ մի բառ։ Ցնցվում էին նրա դեմքի մկանները, ամբողջ մարմինը։

Ասես մշուշի միջից նա նկատեց, որ ընկերների շրթունքները շարժվում էին։ Սակայն նրան թվում էր, որ այդ բոլորն անխոս, համր շարժումներ են...

Արկի պայթյունից խլացել ու համրացել էր Նիկոլը։

Գումարտակի հրամանատար մայոր Բաբայանը հուզված դիմելով պատանուն՝ կարգադրեց անմիջապես ճակատամերձ հիվանդանոց փոխադրել նրան։

Քանչորս ժամ Նիկոլն անգիտացրեց հիվանդանոցում։ Հետևյալ օրը նրա լսողությունը մի քիչ վերականգնվեց։ Այդ անշափ ուրախացրեց պատանուն։ Նա փորձեց խոսել, բայց կրծքից, բացի խուլ ու անորոշ ձայներից, ոչինչ դուրս չեկավ։ Դրանից շատ հուզվեց նա։ Ինչպե՞ս թե։ Ուրեմն ընդմիշտ կորցրե՞լ էր խոսելու ընդունակությունը, ընդմիշտ համ՞ր էր մնալու։

Տասնվեց տարեկան հասակում նա կամավոր գնացել էր բանակ՝ ուղղակի Ստալինգրադի ռազմաճակատը։

Ստալինգրադից մինչև Բեռլինի մատույցները պատանի ռազմիկն անցել էր հրափոթորիկների միջով, ամառվա կիզիչ շոգերին ու ձմեռվա դաժան սառնամանիքներին ոտով անցնել մոտ 4 հազար կիլոմետր մարտական ճանապարհ և միշտ տեսել արյուն ու ավեր, սովետական ծխացող ու ամայացած գյուղեր ու քաղաքներ։ Եվ որոշել էր վրեժ լուծել մարդկային այդ մեծ վշտի համար՝ երազելով հաղթանակով մուտք գործել Բեռլին, շքերթ կատարել նրա փողոցներով։ Ու ահա այժմ, երբ արդեն հասել էր իր իղձերի դարպասին՝ Բեռլինի մատույցներին, նրան մարտաշարքից դուրս էին բերել և պատրաստվում էին թիկունքային հիվանդանոց ուղարկել։

Ճակատամերձ հիվանդանոց փոխադրելու երկրորդ օրը Նիկոլն այլևս չէր կարողանում համբերել։ Բժշկական քրոջ գուրգուրանքը չէր հանգստացնում նրա չղերը։

Պատանի մարտիկի խոսելու բոլոր փորձերն անհաջող էին անցնում։

Խոր մտածմունքների մեջ, Նիկոլը կանգնել էր հիվանդանոցի բաց լուսամուտի առաջ։ Նա արդեն լսում էր սովետական բազմահազար հրանոթների խուլ որոտները։ Օդերի այն կողմը՝ ֆաշիզմի ավազակային որջում մոլեգնում էր ամեն ինչ մաքրող ու պայծառացնող գարնանային ամպրոպը։ Հիվանդանոցի կողքից, Օդերի ուղղությամբ անվերջ հեղեղով հոսում էին սովետական տանկերն ու ավտոմեքենաները։ Անցնող տանկերից մեկի վրա Նիկոլը կարողացավ կարդալ մեծ, սպիտակ տառերով գրված մի մակագրություն՝ «Мы из Сталинграда. Трепещи, Берлин!»։

Կարդաց և հպարտությամբ լիացավ պատանի սերժանտի սիրտը. երջանկության արցունք փայլեց մոայլ աչքերին... Ու հենց այդ րոպեին Նիկոլն անզուսպ ցանկությամբ կայացրեց թաքուն ու անվերադարձ մի որոշում...

Երրորդ օրը, վաղ առավոտյան հերթապահ բժիշկը հիվանդների ստուգատեսը կատարելիս մոտեցավ Նիկոլի անկողնին և դատարկ գտավ։ Հերթապահը շրջեց հիվանդանոցի բոլոր մասերը. բայց պատանին չկար ու չկար։ Արտասովոր այդ դեպքի մասին նա զեկուցեց հիվանդանոցի պետին։

Բայց ո՞ւր կարող էր գնալ հազիվ անելեզու մարտիկը։

***

Գերմանացիների մի նոր հակագրոհ ձեռնամարտով ետ շպրտելուց հետո, գումարտակի հրամանատար մայոր Բաբայանը երեկոյան ստուգում էր իր մարտիկներին։ Հանկարծ նա կանգ առավ անակնկալի եկած.

— Դու այստե՞ղ, Նիկո՛լ...

Նիկոլը ոչինչ չկարողացավ պատասխանել։

— Արդեն լավացե՞լ ես։

Նիկոլը նորից լուռ էր, գլուխը կախ, կարծես դիտելու համար իր կուրծքը զարդարող Կարմիր Աստղի և Փառքի շքանշանները։

— Պատասխանի՛ր, ինչո՞ւ չես խոսում,—մտերմորեն շշնջաց հրամանատարը։

Նիկոլը մի ճիգ ևս արեց խոսելու, պատասխանելու իր սիրելի հրամանատարին, բայց միայն կակազեց և անիմաստ ձայներ

դուրս եկան նրա կոկորդից։ Այն ժամանակ նա մատիտը վերցրեց և ջղայնությունից դողացող ձեռքով գրեց.

«Ընկե՛ր հրամանատար, մի՛ նեղանաք, ես ինձ շատ լավ եմ զգում, լավ եմ լսում ձեզ... կլսեմ ու կկատարեմ Ձեր բոլոր հրամանները...»

Հրամանատարը չպատասխանեց։ Գրեց ձեռքը Նիկոլի ուսին ու դուրդուրանքով լի աչքերը երկար դիտում էին իր ամենակրտսեր մարտիկին...

***

Հինգ-վեց օր անց Բեռլինի վրա կատարված վճռական գրոհներին մասնակցում էր Նիկոլը։ Գերմանացիներն ամրացել էին մի շենքի վլատակների հետևը և իրենց կրակով խանգարում էին մեր մարտիկների առաջխաղացումը։ Նրանց ոչնչացնելու համար պատակը գրոհի հրաման ստացավ։ Նիկոլը ավտոմատը ձեռքին առաջ սլացավ գրոհողների առաջին շարքերում։ Ու նրա սրտի խորքերից անդիմադրելի հորձանքով պոռթկաց մի հաղթական կանչ՝ մի հզոր «ուռ՜ա»...

Կոնատուպիայից հետո Նիկոլի արտասանած առաջին բառն էր այդ։

«Այժմ արդեն ես պիտի կարողանամ խոսել», մտածեց ավերժանտ Նիկոլ Նապոյանը և երջանկությունից բաբախող սրտով դողաց.

— Հանուն Ստա՛լինի, առա՜՛ջ...

ԳՈՒԿԱՍ ԳՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Որպես հերոս մի վիթխարի, դրանիտե պատվանդանին
Նա կանգնած է արիադեմ, մեր պայքարի դրոշն ուսած,
Լուրթ աչքերը հանդիսատ հառած՝ նայում է նոր Երևանին,
Ուր շենքերը ճերմակափայլ խոյանո՜ւմ են թևատարած։

Նրա դիմաց քաղաքն է նոր—Նորքից ձգված մինչև Զանգուն,
Փողոցները հարթ ու ողորկ, էլեկտրական լույսով պայծառ
Ողողվել են ուրախության, ուր եռում է կյանքը արթուն,
Ուր մուրճերի զարկերը նուրբ նվագում են ու երգում հար։

Բարձրանում է արևը միշտ ու հրճվում քաղաքը դորշ,
Որի ներքո մրգերն առատ, ուռճանում են, հասունանում,
Ու նրա հորդ ճաճանչներում բազմանում են այնքան որոշ
Աշխատանքի հույզերը հորդ ու հերոսներ պայծառանում։

Ուր շատերը ճերմակազգեստ, շրջում են լույս փողոցներում,
Սրտում պահած աշխատանքի ու նոր սիրո կիզիչ կրակ,
Նրանց սրտում իմաստության մշտաբորբոք հուրն է վառվում,
Ու գիտության գետերը հորդ հոսում են ու խնդում անհագ։

Նայում է նա բոլշևիկը, սիրտը լինդում է խնդությամբ,
Մի պահ չափում անցած ճամբան բոլշևիկյան Երևանի,
Որը կռվով նվաճեցին, հերոսական արիությամբ,
Ուր խնդությամբ փողփողում է արևգակի հուրը ոսկի։

Օ՜, Երևա՛ն բոլշևիկյան, բոլշևիկը քո պայքարի՝
Կանգնած քարե պատվանդանին հսկում է քեզ վեհ ու արթուն,
Նրա դեմքին փողփողում են ճաճանչները քո արևի,
Քո վաղքի հետ նա քայլում է, քո հաղթությամբ սիրտը լինդում։

ՆԱ ՉԻ ՄՈՌԱՑՎԻ

Հերոսուհի Զոյա Կոսմոդեմյանսկայայի
հիշատակին

Նա չի մոռացվի, որ ծնվել, աճել
Ու բոյ էր քաշել մեր երկրի ծոցում,
Որ սեղմած բարակ շուրթերը ջահել,
Դիմել էր դեպ մահ և անմահություն։

Նա չի մոռացվի մի սովորական
Նրբիրան աղջիկ, հայացքով անմար,
Որ ընկավ մահով վեհ, հերոսական,
Իր հայրենիքի սուրբ գործի համար։

Որ տանը թողած անդորրը ծանոթ,
Իր հայրենիքի վտանգի պահին,
Դեպի մարտ դիմեց ճամփեքով ձյունոտ,
Երբ մրրիկն էր ժանտ պարում մոլեգին։

Նա չի մոռացվի, որ կռվի ժամին
Չկնճռեց իր նուրբ ճակատը մարմար,
Երբ բոցի փոխեց հյուսիսի քամին
Նրա աչքերի կրակն անմար։

Երբ նա կախաղանելավ անվարան,
Եվ պարանը պիրկ, նման նենգ օձի,
Լուռ գալարվելով օդում ձմեռվա
Փաթաթվեց ճերմակ կույս պարանոցին,

Նա կախաղանից իր խրոխտ ձայնով
Դիմեց քաջարի իր ժողովրդին
Եվ երիտասարդ փոթորկվող հոգով
Կոտակեց պայքար մայր—Հայրենիքին։

Նա չի մոռացվի դալիք դարերում,
Այն աղջիկը պարզ, հոգով անսասան,
Եվ չի մոռացվի ձյունոտ դաշտերում
Մի նվիրական փոքրիկ գերեզման։

Վրան կապտաշյա բյուր անմոռուկներ
Կփթթեն խոտում ամառվա պահին,
Եվ հաղթանակի ծփացող երգեր
Մեր նոր աշխարհից կբերի քամին։

Այդ հողաթմբին կնայեն սիրով
Բյուրավոր թախծոտ հարազատ աչքեր,
Սերունդներ կգան ու կանցնեն մոտով
Բերելով հարգանք և ծաղկեփնջեր։

Նա չի մոռացվի, որ ծնվել, աճել
Ու բոյ էր քաշել մեր երկրի ծոցում,
Որ սեղմած բարակ շուրթերը ջահել,
Դիմել էր դեպ մահ և անմահություն։

ԸՆԿԵՐՆԵՐԸ

Տարբեր պայմաններում ու պարագաներում են մարդիկ ընկերանում։

Ոմանց ընկերացնում է աշակերտական նստարանը։ Ամեն առավոտ այդ ընկերները միասին դպրոց են գալիս, կեսօրից հետո միասին դասեր պատրաստում, իսկ երեկոները միասին զբոսանքի դուրս գալիս։

Երբ առաջին սիրո հովերը փուվում են նրանց մատաղ սրտի վրա, դպրոցական ընկերները նախ իրար առաջ են բացում իրենց սրտերը և նրանց ընկերությունն ասես է՛լ ավելի է ամրապնդվում, դառնում անխորտակելի։

Պատահում է, որ երկար, շատ երկար է տևում այդ ընկերությունը, պատահում է նաև, որ այն մոռացվում է ու մարդ ոչ նրա սկիզբն է կարողանում հիշել և ոչ էլ վախճանը։

Սակայն կա մի տեղ, որտեղ ձեռք բերված ընկերությունը եղևնու պես միշտ դալար կմնա և կաղնու պես միշտ հով կանի մահացած ընկերների գերեզմաններին։ Այդ ընկերությունը մարդիկ ձեռք են բերում ռազմաճակատում։ Ոչ մի արկ, ոչ մի ական, վերևից վայր նետվող ոչ մի ռումբ չի կարող սասանել այդ ընկերությունը։ Ռազմաճակատում արյամբ է ձեռք բերվում ընկերությունը, և քանի դեռ մարդու երակներում հոսում է արյունը, քանի դեռ մարդը շնչում է և բաբախում է նրա սիրտը՝ արևի պես միշտ էլ անմար կմնա այդ ընկերությունը։

Ռազմաճակատում հենց այդպես էլ ընկերացան Գառնիկ Մանուկյանն ու Վարդան Վարդանյանը—այդ երկու խիզախ հետախույզները։

Դեպքը պատահեց այսպես.

Երեկոյան զորամասի հրամանատարն իր մոտ կանչեց հետախույզ դասակի մի խումբ մարտիկների և հայտնեց նրանց, որ

նրանք պետք է անցնեն Բշնամու թիկունքը՝ հետախուզական մի կարևոր խնդիր կատարելու համար:

Այդ մարտիկների մեջ էին նաև երիտասարդ հետախույզներ Գառնիկ Մանուկյանն ու Վարդան Վարդանյանը:

Մի քանի րոպե անց խիզախներն արդեն պատրաստ էին ճանապարհ ընկնելու:

Հրամանատարը սեղմեց նրանց ձեռքը և բարի ճանապարհ ու հաջող վերադարձ մաղթեց բոլորին:

Հետախույզները կորան մթության մեջ:

Խավարն աստիճանաբար խտանում էր, մերթ ընդ մերթ լսվում էր հրետանային որոտի ձայնը, իսկ քաջ հետախույզները լուռ, հաճախ վարժ որսորդի պես դաղտագողի, հաճախ կրիայի պես սողալով առաջ էին շարժվում: Նրանք իրար չէին տեսնում, բայց սիրող սրտերի պես խավարի միջից կարդում էին բոլորին էլ հուզող մտքերը:

Դիշերվա այդ խավարն էր պատճառը, թե՝ շրջակայքում պայթող ականների բեկորներից պաշտպանվելու հանդամանքը, կամ թե մի այլ բան, միայն եղավ այնպես, որ երկու հետախույզները՝ Գառնիկ Մանուկյանն ու Վարդան Վարդանյանը կտրվեցին խմբից ու մնացին մենակ:

Անելիքը պարզ էր՝ շարունակել ճանապարհը դեպի առաջ և կատարել այն, ինչ կարող էին անել նրանք երկուսով:

Եվ երկու հետախույզները շարունակեցին առաջ շարժվել:

Նրանք մեր զորամասի սահմանը վաղուց էին անցել և մտել առելի Բշնամու զորատեղը:

Գառնիկ Մանուկյանն ու Վարդան Վարդանյանը դիտեին, որ հետևում նրանց սպասում է հրամանատարը, որին նրանք այս դիշեր պետք է տեղեկություններ հասցնեին Բշնամու դասավորության ու կրակակետերի մասին, դիտեին որ հեռու, շատ հեռու Հայաստանում, այդ արևավառ ու չքնաղ երկրում նրանց վերադարձին են սպասում իրենց հարազատները, և այդ դիտակցությունը չեղյալ էր դարձնում երկյուղի ու մահվան զգացումը, նրանց անվախ կերպով առաջ ու առաջ մղում:

Ահա քիչ հեռվում մի սովեր երևաց նրանց աչքին: Սովերն առաջ շարժվեց և քիչ հետո թաղվեց գետնի մեջ: Պարզ էր, որ այդտեղ բլինդաժ կար, որովհետև մի քանի րոպե անց երկու այլ

սավերներ դուրս եկան այդտեղից և անհետացան գիշերվա խավարում:

Երկու հետախույզները դեռևին սեղմված՝ լուռ դիտում էին շրջապատի անց ու դարձը: Քիչ հետո նրանք դարձյալ առաջ շարժվեցին: Մոտիկ տարածության վրա, դեռևի տակ մի աղոտ լույս երևաց: Հետախույզները հասկացին իրենց հայացքը՝ նրանք այդտեղ դնդացիր տեսան: Պարզ էր, որ այդ կրակակետ էր: Գառնիկն ու Վարդանը գոհ էին, որ խավարի միջից կարողանում են նկատել թշնամու դասավորությունը: Եթե լույս լիներ, նրանք կտեսնեին իրար հառած իրենց ժպտացող դեմքերը:

Նրանք նորից առաջ շարժվեցին: Ինչ-որ ծառի ճյուղի դիպան և ինչ-որ մի բան էլ ընկավ դեռևին: Գիշերվա լռությունը խախտվեց: Կարծես հենց այդ ձայնն էր պատճառը, որ խավարի միջից նրանց ականջին հասավ մեկի գոռոցը: Ըստ երևույթին գերմանական պահակն էր, որ գոռաց. «Ո՞վ է գալիս»:

Հետախույզները նորից կպան գետնին:

Պահակի ձայնի վրա դեռևի տակից դուրս եկան մի քանի սավերներ, սակայն ոչ մի տեղ, ոչոքի չտեսնելով և համոզվելով, որ իզուր էր պահակի գոռգոռոցը՝ նորից անցան դեռևի տակ:

Հետախույզներն արդեն բավարար համարելով իրենց վերցրած տեղեկությունները, որոշեցին հետ դառնալ և թիուռների միջից սկսեցին դեպի հետ, դեպի մեր զորամասը սողալ:

Սակայն թիուռների բարձրացրած աղմուկը կարծես թե նորից պահակի ականջին հասավ, նա ինչ որ մի բան գոռաց նորից և ավտոմատով մի քանի անգամ կրակեց:

Սավերները նորից դուրս եկան դեռևի տակից, իրենք էլ մի քանի կրակ բաց արին դեպի անհայտ տարածությունները, հետո նրանցից մի քանիսը էլեկտրական լապտերներով հետախուզեցին շրջապատը:

Ճակատագի՞րն էր պատճառը, բախտը, թե մի ուրիշ բան՝ սակայն նրանց կողքից անցնող գերմանացին անգամ չկարողացավ նկատել հետախույզներին:

Գերմանացիները համոզվելով, որ իզուր էր պահակի բարձրացրած աղմուկը, որ շրջակայքում չկա և ոչ մի մարդ՝ նորից դեպի իրենց բլինդաժները շարժվեցին:

Երբ արդեն վերականգնվել էր նախկին լռությունը, Գառնիկը

որոշեց, որ արդեն դեպի մեր զորամասը շարժվելու ժամանակն է այլապես շուտով կվերջանա դիշերը և բացվող առավոտը վերջ կդնի նրանց կյանքին ու նրանց գործին։ Երբ նա առաջ շարժվելու փորձ կատարեց, նոր միայն զգաց, որ ինքը վիրավորված է ոտից և այդ ցավը կսկիծ է պատճառում։ Բայց հարկավոր է շարժվել։ Եվ նա սողաց դեպի առաջ, առանց նույնիսկ Վարդանին հայտնելու իր վիրավորված լինելու մասին։

Ահա նա արդեն դուրս էր եկել թփերի միջից, ահա նա արդեն սողում էր բաց ու հարթ տարածության վրայով։ Սակայն այս ի՞նչ է, կարծես թե ինքը մենակ է, կարծես թե Վարդանն իր հետ չէ։ Այո՛, ճիշտ որ այդպես է։ Գառնիկը նորից եռ, դեպի թփուտները շարժվեց։ Այնտեղ նա շոշափելով, գետնի վրա, ասես անզգա վիճակում գտավ Վարդանին։ Երբ Գառնիկը կամեցավ ձեռքով շոշափել ընկերոջ դեմքը, որպեսզի նրա ականջին շշնջա հետ դառնալու անհրաժեշտության մասին, նրա ձեռները կպան ինչոր մի տաք հեղուկի. ուրեմն ընկերն էլ էր վիրավորվել՝ և դուցե ավելի ծանր, քան ինքը։ Դուցե նա արդեն մահացել է։ Գառնիկը, ականջը մոտեցրեց ընկերոջ կրծքին։ Ոչ, Վարդանը կենդանի է՝ հարկավոր էր նրան օգնել, դուրս բերել թշնամու զորատեղից։ Գառնիկը, շալակեց ընկերոջը և սողալով նորից դեպի եռ, դեպի մեր զորամասը շարժվեց։ Թփուտներն առաջվա պես դարձյալ խշշացին ու աղմկեցին, բայց գերմանական պահակը համոզված լինելով, որ ինքն այս անգամ էլ կարող էր սխալվել, թյուրիմացության մեջ ընկնել և ավելորդ աղմուկ բարձրացնել՝ ոչ մի ուշադրություն չդարձրեց այդ խշշոցի ու աղմուկի վրա։

Ցավից տանջվելով, կրճտացնելով ատամները, Գառնիկ Մանուկյանը դժվարությամբ սողալով առաջ էր շարժվում՝ հանգիստ այն գիտակցությամբ, որ կրակի միջից ազատում, փրկում էր իր ընկերոջ, Վարդանի կյանքը։

Վաղորդյան լույսն արդեն փռվել էր շրջապատի վրա։ Կրակն սկսել էր թեժանալ, երբ մեր մարտիկները նկատեցին դեպի մեր դիրքերը սողացող հետախույզներին։

Գառնիկ Մանուկյանը չզգաց, թե ինչպես նա փոխադրվեց սանմաս, թե ինչպես բժիշկները կապեցին նրա վերքերը։ Երբ բացվե-

ցին նրա աչքերը, նա իր վրա հառած տեսավ զորամասի հրամանատարի ժպտացող հայացքը։ Ապա Գառնիկ Մանուկյանը տեսավ իր կողքին պառկած Վարդան Վարդանյանին, որի աչքերում նա կարդաց երախտագիտություն՝ իր կյանքը փրկելու համար։

Այդպես արդեն դրվել էր նրանց ընկերության հիմքը. ռազմաճակատն արյամբ միացրել էր նրանց։

Մի քանի ժամ հետո, երբ նրանք հրամանատարին հայտնեցին լրենց հետախուզության արդյունքները, հրամանատարը համբուրեց նրանց, և ղեպց, որ այդպես չերմ նա առաջին անգամն է համբուրում իր կյանքում մի ուրիշ մարդու։

ՍԱՆԻՏԱՐՈՒՀԻՆ

Այն փոքրիկ վրանում՝ շուրջը անապ անտառ,
Շուրջը կանաչ դարուն, կանաչ ու բուրավետ...
Իմ սրտում շատ հուշեր մնացին անբարբառ,
Իմ հոգում՝ քո սիրտը տանող մի արահետ:

Ես դինվոր վիրավոր, դու իմ քույրը քնքո՛ւշ,
Վերքերիս բալասան դրեցիր քո ձեռքով:
Ու միշտ քեզ հիշելիս՝ ինչպես աստղերն անուշ,
Քո կապույտ աչքերն են ժպտում ինձ անխռով:

Կա՞ արդյոք քո հոգին, թե ընկավ քաջարի
Մարտերում այն ցասկոտ, արնահոս ու դաժան.
Արդյոք հանգե՞լ ես դու, թե կռվում ես արի,
Բայց ապրում ես դու մի՞շտ, մի՞շտ ինձ հետ անքաժան:

Կմթնեն ու կանցնեն այս օրերն արնախում,
Կմնան սպիները վերքերի անհամար,
Կմնան միշտ պայծառ ու կապրեն աշխարհում,
Անունը քո բարի, աչքերը քո անմա՛ր:

———

ՍՅՆ ԽԱՐՏՅԱՇ, ԲԱՐԻ ՈՒԿՐԱԻՆՈՒՀԻՆ

Երբ հետու, օտար մի քաղաքում
Տոչորվում էի՝ գամված մահճին,
Մնարիս էր միշտ հակված անքուն
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

Երբ մեռնում էի արյունաքամ՝
Հոգուս մեջ մորս պատկերն անգին,
Ինձ ավել արյուն իր կուսական
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

Երբ հոգմ էր, պիշեր խռովահույզ,
Զորս դին չուզոնն քրքիջ մահի,
Ա՛խ, ընկա՛վ, հանգա՛վ ճիչով անհույս
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

Փառքիս ճամփեքով դարձա նորից,
Փարվեցի իմ հոր սուրբ օջախին,
Ու... նայի՛ց կարծես մորս աչքից
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

Ո՞ր մայրն է նրան օրոր ասել,
Խաղացել է նա ո՞ր գետափին,
Ո՞ր հարկի տակ է նա երազել,
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

Սակայն հայերե՛ն կարծես գիտեր,
Կարծես ծնվել է Շիրակո՛ւմ հին,
Կարծես ինձ հե՛տ է բռնել թիթեռ
Այն խարտյաշ, բարի՛ ուկրաինուհին։

ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Աշուն է, բերքառատ, բերկրալի աշուն,
Նատել եմ պուրակում մատաղահ ու լուռ,
Մաքրաջինջ երկինքը, որպես մի անհուն,
Անսահման օվկիանոս, խաղաղ է ու լուրթ,
Իմ շուրջը ամեն կողմ ծիծաղում են արդ,
Ծաղիկներ, ծաղիկներ և՛ դունեղ, և՛ վառ,
Արևը վերևից այնպե՜ս ձեռնառատ
Ոսկեշող անձրև է հորդում—թափում վար։

Պուրակի կենտրոնում՝ աստղադիտարան,
Իսկ շուրջը՝ շողշողուն շենքեր ու շենքեր,
Մեղմ հովից թփերը փարվում են իրար,
Առվակը կարկաչով ճամփա է ընկել։
Ցնծալի ծառուղով անցնում են արագ
Սևաչյա աղջիկներ, ջահելներ թիկնեղ,
Բորբոքվում է որպես դյութական մի այդ՝
Իմ երկրի առօրյան մեծ ու փառահեղ։

Հիշում եմ, աշուն էր, ահավոր աշուն։
Անհաց էր, անկրակ մեր խրճիթը խարխուլ,
Հեկեկում էր քամին ինչպես կույր աշուղ,
Մեր երգը լալկան էր, անարև, տխուր։
Ռազմադաշտ էր դնում քրտնաջան
դյուղացին,
Էլ ոչ ոք չէր հերկում արտերը խոպան,
Երկիրը կարոտ էր մի պատառ հացի,
Սարերում չէր երգում և ոչ մի չոբան։

Մեր հոգին կաշկանդող այդ խոր խավարում
Շանթի պես շողշողաց հուրն ազատության,
Անկանդամ, արնաքամ հայոց աշխարհում
Հնչեցին ընդվզման երգեր հաղթաձայն,
Հիշում եմ մայիսյան պոռթկումը Ղարսում
Ու նրան եմ հիշում, այդ խիզախ հերոսին,
Տերերի, հնի դեմ մարմնացած ցասում՝
Մեր հավերժ հարազատ ըմբոստ Ղուկասին։

Հիշում եմ կռիվը Արգինեի մոտ։
Օ, մարտը դաժան էր ու անհավասար,
Ընկնում է, ահա, զարնված, արյունոտ՝
Անբասիր, արևաչ մի երիտասարդ։
Ընկնում է հերոսը, բայց ե՞րբ է հաղթել
Թունավոր սողունը թևավոր մարդուն...
Էլ ո՞վ կարող էր մեր կերտածը քանդել
Ու մարել մեր վառած կրակները խնդուն։

Տե՛ս, նորքի խոր ձորից դուրս գալով հպարտ՝
Թռչում է գնացքը ցնծության ճիչով,
Ու վաղը Սևանից մինչև Արարատ
Կծփա լույսերի անսպառ մի ծով։
Ու վաղը ձորերում մեր անդնդախոր,
Լեռներում ձյունափառ, դաշտերում անափ
Չես գտնի ոչ մի տուն, մի գոմ, մի ախոռ,
Որտեղ չշողշողա էլեկտրական լամպ։

Ահա տես, հայաշեն մեր հայրենիքում
Ինչ հախուռն է ցնծում մարդն արևակամ,
Երինքում թևավոր նավորդն է երգում
Մեր երկրի երջանիկ այսօրն, ապագան։
Նվ բազմազգ մի հզոր, ազատ ժողովուրդ՝
Շրթունքին փառապանծ թռիչքների երգ,
Դաշտերում, ձորերում ու լեռներում լուրթ
Իր բախտն է դարբնում դիշեր ու ցերեկ։

Ահա տես, բարձրացած կուռ պատվանդանին՝
Բոցաշունչ Դուկասը հաղթ ու տիրաբար
Նայում է երազած իր Հայաստանին՝
Աչքերով վառվռուն ու արևափայլ։
Ու նայիր, ի՜նչ համառ, ի՜նչ հաստատակամ
Գրոհի է նետվում հերոսն անվեհեր,
Ո՜, այսպես վեհորեն, այսպես հաղթական
Լեռնային արծիվն է ճախրում դեպի վեր։

Գարուններ երազող այդ խրոխտ մարտիկին՝
Քսանմեկ տարեկան Դուկասին պայծառ,
Հաղթական երկիրըս ձեռքով մարդկային
Կերտել է անխորտակ վիտրի հուշարձան։
Իր բևեռ հրացան, մարտական դիրքում,
Արևոտ աչքերը պալիքին հառած,
Երջանիկ օրերի կարոտը հոգում՝
Նա հաստատ հավատով քայլում է առաջ։

ՎԱՐԴԱՆ

Իմ տանկիստ ընկեր, հարազատ եղբայր,
Կրակով կռվված կոմերիա Վարդան,
Օտար աշխարհում դու խոցված ընկար,
Երբ մոտ էր Օրը մեր մեծ հաղթության։

Մի խավար գիշեր իր թաքուն օրջից
Դավադիր զարկեց քեզ չար թշնամին,
Խորտակված տանկիդ բոցերի միջից
Քո ուսս ընկերոջ փրկելու ժամին։

Դու քեզ զոհեցիր ընկերոջ համար,
Քո կյանքը տվիր մեր հայրենիքին,
Աստղերի նման դյութանքով անմար
Հավետ կշողան քո սիրտն ու հոգին։

Միշտ առաջ տարար դրոշը կարմիր,
Դեպի բարձունքներ, դեպի հաղթություն,
Քո մահով դու ժանտ մահին հաղթեցիր
Ու հավերժացար դյուլիքի սրտում։

Հիշատակը քո երբեք չի մեռնի,
Դու մեր հարազատ, մեր հերոս վարպան,
Քո փառքը կերգի երկիրն հայրենի՝
Մեր նոր, մեր ազատ աշխարհն Հայաստան։

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Մեր ազատ աշխարհ,
Հզոր հայրենիք,
Դու հավերժ պայծառ
Ակսորն ու գալիք,
Մարդկության դարուն,
Փարոս մշտավառ.
Քո անուշ գրկում
Մեր կյանքն է ծաղկում։

Միշտ առա՛ջ, առա՛ջ,
Դեպի ապագան,
Թող բարձրաշառաչ
Սրգերը զնգան,
Ցնծության դարձած
Սրկիրն է թնդում,
Միշտ դեպի առաջ,
Դեպի հաղթություն։

Քո փառքի համար
Մենք մարտի կերթանք,
Քո կյանքի համար
Մեր կյանքն էլ կտանք.

Մենք Ստալինյան
Սերունդն ենք խիզախ,
Օվկիանի նման՝
Մեր ուժն անսահման։

Միշտ առաջ՛, առաջ՛,
Դեպի ապագան,
Թող բարձրաշառաչ
Երգերը զնգան։
Ցնծություն դարձած
Երկիրն է ինդում,
Միշտ դեպի առաջ,
Դեպի հաղթություն։

Հայրենիք, մենք քեզ
Տալիս ենք երդում։
Կռվել քաջի պես
Կյանքում թե մարտում
Եվ մեր շինարար
Ջեռքերում բռնած՝
Քո դրոշը վառ
Տանել դարեդար։

Միշտ առա՛ջ, առա՛ջ,
Դեպի ապագան,
Թող բարձրաշառաչ
Երգերը զնգան,
Ցնծություն դարձած
Երկիրն է ինդում,
Միշտ դեպի առաջ,
Դեպի հաղթություն։

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

ԱՆՄԱՀ ՍԱԿՐԱՎՈՐԸ

Սակրավոր Ջհան Կարախանյանը ծնվել է Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում, 1923 թվին։ Նրան դաստիարակել է Լենինյան-Ստալինյան Կոմերիտմիությունը։

Հայրենական Պատերազմի հենց սկզբից կոմերիտական Ջհան Կարախանյանը մեկնելով ռազմաճակատ՝ ծառայում է 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայում։

Կարախանյանը որպես սակրավոր, հաճախ թափանցելով գերմանացիների առաջավոր գիծը, սովետական մարտիկների համար ճանապարհ է բացել ականապատված դաշտերի միջով։

Կարճ ժամանակամիջոցում Կարախանյանը 900-ից ավելի ական անվնաս է դարձրել և ավելի քան 3000 ական դրել հակառակորդի ճանապարհին՝ ոչնչացնելով բազմաթիվ հիտլերականներ։

***

Թերեքի ափերից մինչև Նովոռոսսիյսկ Ջհան Կարախանյանն անցել էր մարտական սխրագործություններով հարուստ ճանապարհ։ 1943 թ. սեպտեմբերին նա գտնվում էր նավահանգստային Նովոռոսսիյսկ քաղաքի վրա գրոհելու պատրաստվող մարտիկների առաջին շարքերում։

Սեպտեմբերի 10-ին, գիշերային կիսախավարում Սև ծովի ալիքները խփվում էին ափին և խուլ աղմկում։ Այդ ալեկոծվող ջրերի վրայով նավահանգստին էին մոտենում սովետական դեսանտայինները։ Թշնամին զգալով վտանգը՝ հաճախ հրթիռներ էր բաց Թողնում, որոնք կարմիր, կանաչ ու դեղնավուն գույներով լուսավորում էին ծովն ու ցամաքը և հանգչում։ Գիշերային կիսախա-

վարի մեջ անընդհատ հարձաւում էին ֆաշիստական գնդացիրներն ու ավտոմատները և արկ ու ական էր թափվում ջրերի ու ցամաքի վրա։ Թշնամու այդ տեղատարափ կրակի տակ, ծովախորշով նավահանգիստ էին մոտենում սովետական դեսանտայինները։

Դեսանտայիններն անմիջապես կատերներից նետվելով ծովը, մինչև կուրծքները ջրի մեջ թաղված՝ շարժվում էին դեպի ցամաք։ Դեսանտայինների առաջին շարքերումն էր սակրավոր Ջհան Կարախանյանը։ Թշնամու ուժեղ դնդակոծության տակ ցամաք դուրս գալով՝ նա սկսեց ականազերծել ծովափը և անցուղի բացել ծովային հետևակի համար։

Ջհանն իր սակրավոր ընկերների՝ կոմերիտականներ Ս. Հարությունյանի, Ս. Գևորգյանի, Մ. Թանդյանի, Ա. Կարապետյանի և ուրիշների հետ թշնամու դեմ կռվելով՝ առաջանում էր, շարունակելով ականազերծման աշխատանքը։ Նրանք արդեն մոտեցել էին մի մեծ կամուրջի, որտեղ հատվում էին երկաթուղային և խճուղային ճանապարհները։

«Արդյոք թշնամին որևէ ծուղակ չի՞ պատրաստել։ Արդյոք որևէ մահացու սյուրպրիզ չի՞ սպասում իրենց»—մտածում էր ամեն մի մարտիկ, իսկ Կարախանյանն իր ուշքն ու լսողությունը լարած, արագ քայլերով մոտենում էր կամրջին։ Դուցե նա գնում էր ուղիղ դեպի մահը։ Այստեղ հազար ու մի անակնկալ, հազար ու մի վտանգ կարող էր ստեղծած լինել թշնամին։

Սակայն ի՞նչ վտանգ կարող էր թուլացնել Ջհանի քայլերը։ Նրա ամբողջ էությունը լցված էր հաղթանակի, իր ընկերների կյանքը փրկելու սրբազան զգացումով։

Եվ ահա նրա սրատես աչքերը կամուրջի տակ նկատեցին լարերի մի սև ոստայն, մի կանխածելի խուրձ։ Հետո նա սրտի տրոփյունով տեսավ բիկֆորդյան այրվող լարը։ Վայրկյանները հաշվված էին։ Ահա հիմա կրակը կմոտենա պայթուցիկ նյութին, կամուրջը հօդս կցնդի՝ իր փլատակների տակ ծածկելով նրա վրայից դրոհող մարտիկներին՝ իր թանկագին ընկերներին։

Այդ ահավոր վտանգի առաջ Ջհանը չկորցրեց իրեն, չտատանվեց ոչ մի վայրկյան։ Ճարպիկ ոստյունով նա մի՛ ակնթարթում նետվեց դեպի այրվող թելը և անմիջապես մեկուսացրեց այն։ Գործեց նրա մկրատը և կտրվեց մահաբեր լարերի խուրձը։ Փրկված էր կամուրջը, փրկված էր իր թանկագին ընկերների կյանքը։ Այժմ

կամուրջի վրայից ապահով կարող էին անցնել սովետական հեծելակն ու տեխնիկան։ Քրտինքի հետ դոհունակությունը պատել էր սակրավորի լայն դեմքը ու խաժ աչքերը փայլում էին երջանկությունից։

Սակրավոր Կարախանյանը մարտում տարել էր ամենալուրջ հաղթանակը, անվնաս էր դարձրել 500 կիլոգրամից ավելի պայթուցիկ, մահասփյուռ նյութ, ճանապարհ բացելով 55-րդ և 65-րդ գվարդիական Նովոռոսիյսկյան դիվիզիաներին։

***

Թամանի ազատագրման համար մղված մարտերում աչքի ընկնելու համար այն դիվիզիան, որտեղ ծառայում էր Կարախանյանը, արժանացավ բարձր պարգևի։ Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանագրով դիվիզիային շնորհվեց «Թամանյան» կոչում։ Այդ առթիվ «Ինչպե՞ս դարձանք Թամանյան» խորագրով իր հոդվածում գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը գրում էր. «Սակրավոր կարմիր բանակային Ջհան Կարախանյանն անընդհատ իր կյանքը վտանգի ենթարկելով՝ թշնամու տեղատարափ կրակի տակ գնում էր առջևից և անցուղիներ բաց անում մեր զորամասերի համար»։

Կովկասյան նախալեռներից մինչև Կերչ մարտական քաջագործություններով հարուստ ճանապարհ անցավ հայ ժողովրդի այս հանճարեղ ու անձնվեր զավակը։ Կերչի համար մղված մարտերում զոհված կոմերիտական հերոսի փառքը հռչակվեց Թամանյան ամբողջ դիվիզիայում։ Ռազմիկի այդ փառքը անմահացրեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թվի մայիսի 16-ի Հրամանագիրը, որով Ջհան Կարախանյանին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱՐԸ

Հայաստանի Լենինյան Կոմերիտմիության ան, Սովետական Միության Հերոս, այժմ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճանապարհային շինարարության վարչության պետ ընկ. Ռուբեն Հակոբյանը նախքան Հայրենական Պատերազմը Երևանում ավարտելով ավտո-ճանապարհաշինարարական տեխնիկումը՝ աշխատում էր Ղափանի շրջանում, որպես ճանապարհային տեխնիկ։

Կարճ ժամանակամիջոցում Ռուբենն աչքի է ընկնում իր անձնական աշխատանքով, որի համար նրան առաջ են քաշում որպես Դափանի շրջսովետի գործկոմի ճանապարհաշինարարական բաժնի պետ: Այս աշխատանքը նա կատարում է մինչև 1943 թվականը:

Ռուբենն իր աշխատանքում հանգիստ ու դադար չուներ: Նա իր գործի էնտուզիաստն էր: Նրա համար սոցիալիստական շինարարության ամեն մի հաջողություն, իր ձեռքով կատարած ամեն մի մեծ կառուցում պատանեկան ոգևորության աղբյուր էր: Նա առանձնապես շատ քրտինք է թափել Դափան—Փիրդոուշան խճուղու կառուցման վրա:

Հայրենական Պատերազմը կխափանի նրա աշխատանքը:

Սոցիալիստական աշխատանքի էնտուզիաստ ճանապարհաշինարար, տեխնիկ Հակոբյանը մեկնեց Սովետական Բանակի շարքերը:

Ամարտելով ապացական դասընթացները՝ նա ապացական ուսադիրներով մեկնեց Ուկրաինական 4-րդ ռազմաճակատը: Այնտեղ նրան նշանակեցին գվարդիական Վոլնովախայան դիվիզիայի ավտոմատատավորների առանձին ստորաբաժանման հրամանատար:

Այստեղ կարճ ժամանակում նա աչքի ընկավ որպես խիզախ և հմուտ հրամանատար: Սակայն Հակոբյանն իր քաջագործություններով առանձնապես հռչակվեց Ղրիմի ազատագրման համար մղված մարտերում, երբ սովետական զորքերը ճեղքեցին գերմանական պաշտպանությունը Պերեկոպում՝ թափանցեցին Ղրիմ:

Այս օրերին Հակոբյանը նշանակվել էր հրաձգային վաշտի հրամանատար: Նրա առաջ խնդիր էր դրված՝ հարձակվել Արմյանսկ քաղաքի հյուսիսային ծայրամասով, գրավել 15,3 բարձունքը և ապա Սովետական Բանակի այլ ստորաբաժանումների հետ առաջ շարժվել դեպի Հակառակորդի Իշունյան ամրությունները:

Հակոբյանն ուսումնասիրեց տեղանքը: Շուրջը մերկ, ամայի տափաստան էր: 15,3 բարձունքի մատույցներում հետախուզությունը երևան էր բերել թշնամու երկու դզոտ, ամրությունների և խրամատների մի ամբողջ սիստեմ:

Քաշվեց մատախուղը և բարձունքի լանջերին հստակ երևաց թշնամու ամբողջ պաշտպանությունը:

1944 թ. ապրիլի 9-ի վաղ առավոտյան հրետանային և ականանետային կրակային ալիքի ետևից՝ Հակոբյանի հրաձգային

վաշտը գրոհեց բարձունքի վրա։ Կատաղի, արյունալի մարտեր բորբոքվեցին։ Հիմնահատակ կործանվեցին հակառակորդի կրակային կետերը, և հիտլերականները մեծ կորուստներ տալուց հետո, չդիմանալով սովետական մարտիկների շեշտակի գրոհին՝ բարձունքից ցած շպրտվեցին։

Լավ իմանալով այդ բարձունքի կարևոր նշանակությունն իրենց պաշտպանական սիստեմում՝ գերմանացիներն ուժեղ հակագրոհ ձեռնարկեցին այն նա վերցնելու համար։ Հակոբյանի վաշտի վրա գրոհում էին թշնամու 8 տանկ և ավտոմատավորների մի դումարտակ։ Նրանք շրջապատեցին Հակոբյանի արծիվներին։ Անհավասար ու արյունալի մարտ սկսվեց։ Հրամանատարի խելոխությունը ոգեշնչում, ուժ էր տալիս մարտիկներին։

Թշնամու հաջորդական հակագրոհները նա էին մղվում, թեև Քուլգայի մատույցներում մղվող այդ ծանր մարտերում վիրավոր ընկել էին Հակոբյանի մարտիկներից շատերը։

Հետևյալ օրը, ապրիլի 10-ի լուսաբացին, Հակոբյանը գնում էր տեղանքն ուսումնասիրելու։ Նա բավականին հեռացել էր իր վաշտից և շրջապատը դիտելով՝ որոշում էր իր մարտիկներին առաջ տանելու ամենանպատակահարմար ուղիները։

Հանկարծ շատ մոտիկ տարածությունից նա մի ձայն լսեց։

— Հենդե հո՛խ—ձեռները վեր։

Վաշտի հրամանատարի դեմ ու դեմ կանգնել էին թշնամու յոթ հետախույզ։

Հակոբյանը չվիրավորվեց։ Մի ակնթարթում նա գործի դրեց իր ավտոմատը և տեղն ու տեղը ոչնչացրեց հիտլերականներից վեցին, իսկ մեկին էլ գերի բռնեց։

Հակոբյանը կարևոր տեղեկություններ ստացավ գերի հիտլերականից և վերադառնալով իր վաշտը՝ նորից գրոհի տարավ իր մարտիկներին։

Ապրիլի 10-ի երեկոյան, Պերեկոպի պարանոցն ամբողջովին մաքրված էր գերմանացիներից։ Թշնամու Իշունյան անառիկ համարված ամրություններն արդեն ճեղքված էին։ Այդ ամրությունները ճեղքելու համար մղվող մարտերից մեկում, Հակոբյանի և մի հիտլերականի միջև տեղի ունեցող դիշերային ձեռնամարտի ժամանակ թևից վիրավորվեց Հակոբյանը, սակայն նա շարքից դուրս չեկավ և հաղթական մարտի առաջնորդեց իր կտրիճներին։

Հակոբյանն իր վաշտով առաջ էր շարժվում Ղրիմի հողով։ Անդադար ջախջախելով թշնամու կատաղի, օրհասական դիմադրությունը և ետ մղելով նրա բոլոր հակագրոհները։ Գվարդիայի ավագ լեյտենանտ Ռուբեն Հակոբյանի մարտիկներն իրենց հրամանատարի ղեկավարությամբ մինչև վերջը մասնակցեցին Ղրիմի լիակատար ազատագրմանը։

Այս մարտերում ցուցաբերած հրամանատարական հմտության և խիզախության համար Հայաստանի կոմերիտմիության սան Ռուբեն Հակոբյանն արժանացավ Սովետական Միության Հերոսի կոչմանը։

ՏԱՆԿԻՍՏԸ

Մեր զորքերը մաքրել էին հարազատ Կուբանը՝ ազատություն բերելով ֆաշիստական սարկության մեջ ընկած բնակչությանը։ Այժմ հերթը հասել էր Թամանի թերակղզու ազատագրմանը։ Այստեղ թշնամին կառչում էր ամեն մի բարձունքից, ամեն մի բնակավայրից։

Թամանի թերակղզու ազատագրման համար մղվող վճռական մարտերի ժամանակ մեր տանկերը ճեղքեցին թշնամու պաշտպանության առաջավոր գիծը և թափանցեցին նրա թիկունքը։ Սովետական զրահապատ մեքենաների առաջին շարքում ընթանում էր կոմերիտական գվարդիական Աբրամայիս Բաբայանի տանկը։ Նա ուղղակի գրոհելով թշնամու կրակակետերի վրա՝ ոչնչացրեց խիտ ամրացված գերմանական մի կրակակետ և ավերից մեկ դզօտ։ Բաբայանի տանկը սլանում էր առաջ։ Հանկարծ լսվեց մի պայթյուն և տանկը կանգ առավ։ Բաբայանը նայեց դիտանցքից. դուրս եկավ տանկից և մտնելով նրա տակ՝ սկսեց նորոգել վնասված անվաթրթուրները։ Հենց այդ աշխատանքի ժամանակ էլ Բաբայանը վիրավորվեց ու կորցրեց գիտակցությունը։ Քիչ հետո սաստիկ ցավից բաց արեց աչքերը։ Նրա դլխավերևում կանգնած ֆաշիստները վիրավոր և ուշաթափ տանկիստի մեջքին ուժգին հարվածներ էին հասցնում։

Գերմանացիները կոմերիտական Բաբայանից պահանջեցին, որ անձնակազմը տանկի միջից դուրս բերի։ Բաբայանը մի պահ ոչինչ չպատասխանեց։ Կարծես գերմանացիների ասածից ոչինչ չէր հասկացել։ Սակայն նրա դժգույն դեմքը պայծառացավ.

— Ուրեմն տղերքը ողջ են—մտածեց նա։

Գերմանացին գնդակահարության սպառնալիքի տակ երկրորդ անգամ կրկնեց իր պահանջը, բայց դվաբդիականը շարունակեց լռել։

Գերմանացիները նրան մոտեցրին տանկի դիտանցքին։ Բաբայանը տեսավ զրահի ետևում ընկած վիրավոր ընկերներին, որոնք մի քանի ժամ շարունակ գոտեմարտի մեջ էին մտել տանկը շրջապատած հիտլերականների դեմ։

Նա մի պահ խոր հուզումով դիտեց իր խիզախ ընկերներին, որոնք պատրաստ էին հերոսաբար զոհվելու և իր ամբողջ ուժը հավաքելով՝ գոռաց.

— Ընկերնե՛ր, հարազատնե՛ր, մի՛ կորցնեք ձեր արիությունը, մինչև վերջը խփեցեք սրիկաներին, մերոնք ուր որ է կգան...

Ֆաշիստները պլխի ընկան, որ Բաբայանն այլ բան էր ասում, հասկացան, որ նա մարտի էր կանչում իր պաշարված ընկերներին։ Ու գազազած մի հիտլերական սկսեց պինդ ոլորել վիրավոր կոմերիտականի ձեռքը...

Գվարդիական տանկիստը նողկանքով նայեց նրան ու թքեց երեսին։ Այդ րոպեին ֆաշիստը հանեց դանակը, սկսեց կտրատել Բաբայանի դեմքը։

Ուժերի գերմարդկային լարումով Արամայիսը կարողացավ տանկում գտնվող ընկերներին ասել իր այս վերջին մարտաշունչ խոսքերը.

— Ընկերնե՛ր, ասացե՛ք բոլորին, որ հայ ժողովրդի զավակ կոմերիտական Բաբայանը չհանձնեց իր սրբազան երդումը։ Դիմացեք մի քիչ էլ, գաղանները շուտով հատուցում կստանան...

Նա այլևս չկարողացավ խոսել։ Նրա հերոսական վարմանքից կատաղած հիտլերականները գետին տապալեցին ծանր վիրավոր կոմերիտականին, բենզին լցրին վրան ու կրակ տվին։

Ճիշտ այդ ժամանակ լսվեց մի հզոր «ուռա»։ Սովետական մարտիկներն օգնության էին հասնում պաշարված տանկին։ Նրանք նետվեցին այրվող տանկիստին փրկելու համար։ Բայց արդեն ուշ էր։ Բոցերի մեջ հերոսաբար մահացել էր տանկիստը։ Մարտիկներն անողոք վրեժ լուծեցին Բաբայանի համար։

Ֆաշիստական բարբարոսները Թամանի թերակղզում թողեցին իրենց զինվորների ու սպաների ավելի քան 20 հազար դիակ։

Երբեք չի թառամի Թամանի ազատագրման ճանապարհին պլուցազնաբար ընկած կոմերիտական Արամայիս Բաբայանի փառքն ու հիշատակը։ Մեր ժողովուրդը, մեր աճող սերունդը, երախտագիտության խոր զգացումով կհիշի հերոսին, որ իր երիտասարդ կյանքն իսկ չխնայեց հայրենիքի ազատության ու երջանկության համար։

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԻՆԳ ՇՔԱՆՇԱՆԻ ԿԱՎԱԼԵՐԸ

«Գորնայա» բարձունքում թշնամին կառուցել էր բազմաթիվ ինժեներական ամրություններ՝ դոտեր, դզոտեր, լարափակոցներ, խրամատներ, զետեղել բազմաթիվ ականանետներ, հրետանային մարտկոցներ։

Սևաստապոլի բանակին հանդիսացող այդ խիստ ամրացված բարձունքը պետք էր գրավել։ Այդ մարտական գործողության անմիջականորեն մասնակցելու հրաման էր ստացել գումարտակի հրամանատար կոմերիտական մայոր Հրանտ Սիմոնյանը։ Այժմ նա իր մարտիկների հետ խրամատավորվել էր բարձունքի ստորոտներում և ուսումնասիրում էր գրոհի ուղիները։

***

Այդ 1944 թվին էր։

Մայիսյան աստղալից գիշերը տարածվել էր ամբողջ ռազմադաշտի վրա։ Ղրիմի երկնամերձ լեռներից և ապարթախիտ անտառներից փչող զով քամին առույգացրել էր մարտիկներին։ Նրանք անհամբեր սպասում էին հրամանատարության մարտական առաջադրանքը կատարելուն։

Երիտասարդ, խոհուն աչքերով սպան, գիշերով շրջում էր առաջավոր գծում, խրամատներում զրուցում մարտիկների հետ, հրաձիգներին, ավտոմատավորներին, ձեռքի գնդացրորդներին ցույց տալիս գրոհի նպատակահարմար ուղիները։

Մարտիկները նոր ուժ ու եռանդ էին ստանում իրենց հրամանատար՝ մայոր Սիմոնյանի գիշերային այցելություններից։

Նավարի մեջ երկինք էին սլանում կանաչ ու կարմիր հրթիռներ, որոնք մի պահ լուսավորում էին խավար ռազմադաշտը և նորից հանգչում։ Վախենալով մեր զորքերի գիշերային գրոհից՝

Թշնամին մերթ ընդ մերթ հրթիռներով լուսավորում էր «Գորնայա» բարձունքի մատույցները:

Գիշերային խոր լռության մեջ երբեմն լսվում էին զնդացրային և ավտոմատային կարճ հերթաղարկեր: Զգուշության համար հակառակորդը կույր կրակ էր բացում դեպի մեր դիրքերը:

Կես գիշերից հետո հանկարծ ցնցվեց դետինը և ահռելի որոտը խլացրեց լսողությունը: Սովետական հրետանին «մշակում» էր բարձունքը: Հարյուրավոր հրանոթներ կրակի լեզվա էին թափում թշնամու գլխին:

Լուսադեմին լսվեց մայոր Սիմոնյանի դրոհի հրամանը: Առաջավոր մարտաշարքերի հետ էր նաև ինքը՝ երիտասարդ սպան: Նա ղեկավարում էր դրոհը, ոգևորում մարտիկներին:

Ներդաշնակ գործում էին կրակային բոլոր միջոցները՝ հեշտացնելով դրոհողների առաջխաղացումը: Թամանյան 89-րդ դիվիզիայի երիտասարդ մարտիկները համառորեն ալանում էին դեպի հաղթանակի բարձունքը:

Բարձունքը գրավվեց:

«Գորնայա» բարձունքի գրավումը, որ ռազմական հմտության ցայտուն մի օրինակ էր, ցույց տվեց, թե ինչպես քաջարի Կարմիր Բանակի մյուս զորամասերի հետ, հայ ռազմիկներն ընդունակ են ավերելու գերմանացիների առավել անառիկ ամրությունները», գրում էր դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆոյանը:

Ռազմական այս փայլուն գործողության համար մայոր Սիմոնյանի գումարտակի անձնակազմի 90 տոկոսից ավելին՝ կոմերիտականներ ու երիտասարդ մարտիկներ, արժանացան շքանշանների ու մեդալների: Իսկ զորամասը՝ Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի հրամանով արժանացավ հերոս քաղաքի անունը կրելու բարձր պատվին:

«Գորնայա» բարձունքի գրոհումը հմտորեն ղեկավարելու և անձնական քաջության համար մայոր Հրանտ Սիմոնյանը պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով, իսկ Կերչում փողոցային կռիվները հմտորեն ղեկավարելու համար արդեն պարգևատրվել էր Բոգդան Խմելնիցկու շքանշանով:

Այնուհետև Թամանյան 89-րդ կրկնակի շքանշանակիր դիվիզիայի շարքերում մայոր Հրանտ Սիմոնյանը մասնակցեց Լեհաս-

տանի բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ազատագրմանը, մաքսոերով հասավ Գերմանիա։

Սիմոնյանի ստորաբաժանումը հռչակվեց ամբողջ պիլիգիայում։ Նրա ստորաբաժանումն առաջիններից էր, որ անցավ Օդերի արևմտյան ափը, մասնակցեց այնտեղ պլացդարմի ստեղծման ու պահպանման համար մղված արյունալի մարտերին, ետ մղեց թշնամու գերազանց ուժերի բազմաթիվ հակագրոհները և հետագայում ջախջախիչ հարվածներ հասցնելով նրան՝ Սովետական Բանակի մյուս զորամասերի հետ հասավ Բեռլին...

Այժմ Հայաստանի ֆիզկուլտ կոմիտեի նախագահի տեղակալ Հրանտ Սիմոնյանը մարտական հինգ շքանշանի կավալեր է։

Սովետական հզոր Բանակի շարքերում Բերլինից մինչև Բեռլին՝ ավելի քան երեք հազար կիլոմետր հաղթական ճանապարհ անցած ռազմիկը այժմ էլ նույնպիսի եռանդով աշխատում է երիտասարդ սերնդի ֆիզիկական դաստիարակության ասպարիզում, ֆիզկուլտուրայով ու սպորտով մարզիկներ պատրաստելով մեր հայրենիքի համար։

ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԸ

. . . . . Եվ անմորուք էր նա,
Իսկ շինելը մինչև ներքաններն էր հասնում,
Սակայն աչքեր ուներ խարույկների պես վառ,
Եվ կնճռապատ ճակատ՝ ծերունուրեն հասուն։

Ուսից նա ավտոմատ ուներ խրոխտ կախած,
Գոտուց՝ միշտ անբաժան նռնակների խուրձեր,
Ապա դաշույն մի սուր ու մի թղթապանակ,
Ուր նա պահում էր մոր նամակները զուցե։

Գուցե դպրոցական պատի թերթից պոկած
Լուսանկարը իր սիրած ընկերուհու,
Կամ չորացած արդեն մի արնավուն կակաչ,
Որ նա պահում էր իր մաշված բլոկնոտում։

Սակայն սրտի վրա, մեդալների ներքո,
Նա մի սիրտ էլ ուներ՝ մի տոմս պողպատագույն,
Որին ձուլել էր իր ջահել սիրտը հևքոտ
Եվ այդ ձույլ սրտով էր առաջնորդվում։

Եվ այդ սիրտը նրան ուժ էր տալիս, երբ նա
Նռնակներ էր նետում կամուրջներին,
Երբ վրեժից անափ և ցասումից շիկնած,
Ավտոմատից մահ էր սփռում ոսոխներին։

Երբ նա անզուսպների եղերքներին անահ,
Պարտիզանի իր պարտքն է կատարում,

Արհամարհած ամեն տանջանք ու մահ,
Ծպտյալ՝ ոսոխների շտաբներն էր մտնում։

Կոմերիտ էր ջահել և անմորուք էր նա,
Երբ գնդակից դաժան խոցված ընկավ,
Սակայն սիրտը նրա՝ տոմսն անվթար մնաց,
Անցավ հաղթանակով ու Բանգարան հասավ։

Հասավ նա Բանգարան,

Արյունոտված, բայց միշտ տրոփելու պատրաստ,
Եվ թեև չկա այն պարտիզանը հրաշ,
Բայց դարերին գալիք պիտի ժպտա հավետ
Կոմսոմոլի տոմսը՝
Սիրտը նրա։

ԼԵՆԻՆՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

(Քայլերգ)

1

Հոկտեմբերյան զորավոր,
Կուվում առար դու ծնունդ,
Կոմսոմոլիա՛ փառավոր,
Երիտասարդ իմ սերո՛ւնդ։
Կայտառ, առողջ իմ սերո՛ւնդ,
Կյանքի բողբոջ իմ սերունդ։

2

Պարտիան տվեց քեզ թևեր
Արծվի պես ճախրելու,
Դեպի գագաթ, դեպի վեր,
Կոմունիզմի լույս հեռուն։
Կայտառ, առողջ իմ սերո՛ւնդ,
Կյանքի բողբոջ իմ սերունդ։

3

Դու միշտ եղար քաջ զինվոր
Հայրենիքի պայքարում,
Բերիր նրան նորանոր
Հաղթանակներ ու գարուն։
Կայտառ, առողջ իմ սերո՛ւնդ,
Կյանքի բողբոջ իմ սերունդ։

4.

Կառույցներում անհամար
Բրիգադները քո ընտիր,
Աշխատում են միշտ համառ,
Նոր աշխարհի որմնադի՛ր։
Կայտառ, առողջ իմ սերո՛ւնդ,
Կյանքի բողբոջ իմ սերունդ։

5.

Դու որդին ես Լենինի,
Իմ մարտական կոմսոմոլ,
Սիրած սանն ես Ստալինի,
Հերոսական կոմսոմո՛լ։
Կայտառ, առողջ իմ սերո՛ւնդ,
Կյանքի բողբոջ իմ սերունդ։

———

ԱՆՎԵՀԵՐ ՏԱՆԿԻՍՏԸ

Երբ 19-ամյա Վարդան Տոնիյանը ավարտելով Սամարղանդի Պուշկինի անվան դպրոցը՝ մեկնում էր ռազմաճակատ, նրան ուղեկցելու էին եկել 10-րդ դասարանի բոլոր աշակերտները: Նրանք եկել էին ուղեկցելու իրենց ամենամտերիմ ու սիրելի ընկերոջը՝ կոմերիտական կազմակերպության քարտուղարին:

Հրաժեշտի պահին Վարդանի ընկերները նրան հանձնեցին մի նամակ, որի տակ 35 ստորագրություն կար: Ստորագրել էր ողջ 10-րդ Ա դասարանը:

— Ընդունի՛ր, Վարդա՛ն,— ասացին նրանք նամակը հանձնելով,— սա մեր ուղերձն է և միշտ հիշիր թե ինչ է գրված նրանում:

Իսկ նամակում ահա թե ինչ էր գրված՝

«Սիրելի՛ Վարդան, այս նշանավոր օրը, երբ դու հեռանում ես մեզանից՝ պաշտպանելու մեր Հայրենիքը, 10-րդ Ա դասարանի կոլեկտիվը իր լավագույն ցանկություններն է հայտնում քեզ, որպես լավ ընկերոջ և ակտիվ կոմերիտականի: Եղի՛ր ուժեղ, տոկուն, կարգապահ, այնպես, ինչպես քեզ դաստիարակել է մեր դպրոցը: Եղի՛ր մեր սիրելի Հայրենիքին նվիրված, ու կյանքդ մի՛ խնայիր նրան»:

Վարդանը տանկիստների դպրոցից պատասխան գրեց իր ընկերներին. «Սիրելի՛ ընկերներ, ես ձեր հույսերը կարդարացնեմ. կլինեմ այնպես, ինչպես դուք եք ցանկանում, ինչպես պահանջում է մեր սիրելի Հայրենիքը»:

Նվ նա այդպիսին էլ եղավ: Տանկիստների դպրոցը գերազանց գնահատականով ավարտած Վարդան Տոնիյանին թողնում նույն դպրոցում դասավանդելու, սակայն երիտասարդ լեյտենանտը անընդհատ զեկուցագրեր գրելով հրամանատարությանը՝ պահանջում էր իրեն ուղարկել ռազմաճակատ:

Նրա բուռն ցանկությանը ընդառաջ գնացին: Նվ լեյտենանտ

Վարդան Տոնիյանը Բոբրույսկի մոտ միացավ ճակատային առաջին գծում կռիվներին մասնակցող ինքնագնաց—հրետանային դնդին։

Նշանակվելով ինքնագնաց հրանոթի հրամանատար՝ Վարդան Տոնիյանը կարճ ժամանակամիջոցում իր փոքրիկ անձնակազմը պատրաստեց հարձակման։

Լեհաստանի Զամբրով քաղաքի մոտ նա ստացավ առաջին մարտական մկրտությունը և առաջին շքանշանը։

Զամբրով-Օստրուվ-Մազովեցկի խճուղին ռազմական խոշոր նշանակություն ուներ և գերմանացիները կառչելով յուրաքանչյուր քարից ու թփից՝ աշխատում էին ինչ գնով էլ լինի թույլ չտալ մեր զորքերին գրավելու ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կարևոր օբեկտը։ Նրանց մարտկոցները հրանոթային ուժեղ կրակով խափանում էին մեր հետևակի առաջխաղացումը։ Տոնիյանը հրաման ստացավ դադարեցնել գերմանական մարտկոցի կրակը։ Նա թեև առաջին անգամն էր մասնակցում մարտերին, այնուամենայնիվ չվախեցավ մեն-մենակ դուրս գալ թշնամու մարտկոցի դեմ։ Իր ինքնագնացով նա առաջ նետվեց դեպի գերմանական մարտկոցը և մեքենայի թրթուրներով ոչնչացրեց թշնամու մի քանի թնդանոթ և բազմաթիվ հիտլերականների։ Թշնամու հրետանային կրակը դադարեց և մեր զորքերը ազատ առաջ շարժվեցին Օստրով-Մազովեցկի տանող խճուղով։

Երկու օր հետո Պրեզիդենտի լեռների վրա ամրացած թշնամու 7 տանկի և երկու վաշտ հետևակի դեմ Տոնիյանը իր ինքնագնացով մեն-մենակ դուրս եկավ։ Տեղի ունեցավ ծանր ու անհավասար մարտ։

Տոնիյանի ինքնագնացը պոկվելով տեղից հրանոթային ուժեղ կրակով նետվեց դեպի տանկերը՝ թրթուրների տակ ճզմելով գերմանացի զինվորներին։ Ոչնչացնելով թշնամու երկու տանկ՝ նա փախուստի մատնեց մյուս տանկերը և հնարավորություն ստեղծեց մեր զորքերին գրավելու Պրեզիդենտի լեռների անառիկ բարձունքը։

Վարդան Տոնիյանի մասին անմիջապես իմացավ ողջ գունդը, նրան երկրորդ անգամ ներկայացրին պարգևատրման։

Ռոսակի գյուղի մոտ տեղի ունեցած մարտերում Տոնիյանը գլխից վիրավորվեց, սակայն մարտադաշտից չհեռացավ՝ մինչև որ շարքից դուրս չհանեց թշնամական երկու ինքնագնաց և չապահովեց մեր հետևակի առաջխաղացումը։

Երբ ճակատային դոսպիտալից Վարդանին ուզում էին էվակուացիայի ենթարկել՝ նա կտրականապես հրաժարվեց.

— Ես այստեղից ո՛չ մի տեղ չեմ գնա,— ասաց նա։— Գլնդում ինձ սպասում են, բժի՛շկ, և իմ տեղն այնտեղ է՝ ռազմաճակատում։ Ես արդեն բավական լավ եմ զգում։

Մի քանի օր հետո Վարդանը նորից իր սիրելի գնդում էր, հարազատ մարտական ընտանիքում։ Նա արդեն կուփվել էր, ուներ ռազմական մեծ փորձ և ձեռնամուխ եղավ անձնակազմը մարտական ճիշտ գործողություններին վարժեցնելուն։ Զբավարարվելով ունեցածով՝ Տոնիյանը իր ինքնագնացի վրա ամրացրեց գերմանացիներից խլած երկու գնդացիր ևս։

Այդ ժամանակ ուժեղ մարտեր էին տեղի ունենում Նարև գետի արևմտյան ափին՝ պլացդարմը լայնացնելու համար։ Գերմանացիները օգտվելով արևմտյան ափի ստրատեգիական առավելություններից՝ թույլ չէին տալիս մեր զորքերին տեղափոխվելու արևմտյան ափ։ Տոնիյանի ինքնագնացը հաջողությամբ անցնելով գնդակոծվող կամուրջը՝ թռիչքով առաջ նետվեց և Զալուժյե գյուղի մոտ գոտեմարտի բռնվեց գերմանական հրետանու հետ։ Այս մարտերում նույնպես ոչնչացրեց մի գերմանական մարտկոց և հիտլերականների երկու դասակ։ Այստեղ նա նորից վիրավորվեց և կոնտուզիա ստացավ, բայց մարտադաշտը թողեց միայն գնդի հրամանատար մայոր Ժաբինի ստիպումներից հետո։

1945 թ. հունվարի 12-ն էր։

Բարակ անձրև էր մաղում։ Լեյտենանտ Տոնիյանը վերադառնում էր դոսպիտալից՝ կուրծքը զարդարված մարտական շքանշաններով ու մեդալներով։ Զալուժյե գյուղից արևմուտք նա մեքենայից վայր թռավ և Մարիամպոլ տանող անտառային ճանապարհով գնալով՝ սկսեց որոնել իր գունդը։ Սոսու անտառում անսովոր խաղաղություն էր տիրում։ Հեռվից մեծ ընդմիջումներով լսվում էին հատ ու կենտ ականների խուլ պայթյուններ։ Վարդանի սիրտը ուժգնորեն խփում էր հարազատ գնդին մոտենալու գիտակցությունից։ Անտառի խորքից հանկարծ նրա առաջ դուրս եկավ կիսամուշտակը հագին, ականջալոր գլխարկը թեք դրած մի մարտիկ, ջրով լի դույլը ձեռքին։

— Ալյո՜ շա... ,— գոռաց Վարդանը։

Մարտիկը մի պահ կանգ առավ,— ապա դույլը ձեռքից վայր գցելով՝ դրկաբաց ընդառաջ վազեց Վարդանին.

— Ընկե՞ր Տոնիյան, այդ դո՞ւք եք

Նրանք գրկախառնվեցին։

Ձայնի վրա անտառից դուրս թռան զինվորներ ու սպաներ և ուրախ աղմուկով շրջապատելով Վարդանին՝ տարան անտառում քողարկված ինքնագնացների մոտ։ Վարդանի ուրախությանը չափ չկար։ Նա նորից իր մարտական ընտանիքում էր, իր ինքնագնացի անձնակազմի հետ։

Երկու օր հետո նոր հարձակում սկսվեց ամբողջ ճակատում։ Գերմանացիները ամրանալով Մարիամպոլից արևմուտք գտնվող բարձրունքների վրա՝ ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս։ Այնուհետև նրանք անցան հակահարձակման, սակայն չկարողացան կասեցնել սովետական զորքերի առաջխաղացումը։ Մեկ օրում Վարդան Տոնիյանի ինքնագնացը առաջ շարժվեց 21 կիլոմետր, իսկ երկրորդ օրը 45, և մխրճվեց թշնամու դասավորությունների մեջ։ Արևելյան Պրուսիայի Նվլաբնո քաղաքի մոտ ճակատամարտի բռնվեց գերմանական «Ֆերդինանտ» տիպի ինքնագնաց հրանոթների հետ, որոնցից երկուսը ոչնչացրեց։ Տոնիյանի գունդն իր մարտական բարձր տեխնիկայով այս մարտերում հնարավորություն ստեղծեց մեր զորքերին գրավելու արևելյան Պրուսիայի Յանովո, Նվղաբնո, Պասենհեյմ և Ալենդորֆ քաղաքները։

Շարունակելով հարձակումը՝ Տոնիյանը Ֆրեյմարկ գյուղի մոտ հանդիպում ունեցավ թշնամու զերակշռող տեխնիկայի հետ, որտեղ շարքից դուրս եկավ նրա ինքնագնացը և ծանր վիրավորվեց նշանառուն։

Երբ Տոնիյանը վիրավոր ընկերոջը դուրս էր բերում կրակի գծից, այրվող տան մեջ թաքնված գերմանական դնդացրի կրակից հերոսի մահով ընկավ վիրավոր ընկերոջ կողքին։

Նրա գրպանից Ալեքսեյ Բարանովը՝ Վարդանի ամենամոտիկ ընկերն ու զինակիցը արյունոտ փաստաթղթերի հետ հանեց նաև մի նամակ։

Այդ այն նամակն էր, որի տակ ստորագրել էին 10-րդ Ս. դասարանի աշակերտները, որով պահանջում էին Վարդանից մեր

հայրենիքի ազատության և անկախության համար կյանքն անգամ զոհաբերել։

Վարդան Տոնիյանը՝ Լենինյան կոմերիտմիության անվեհեր սանը հերոսաբար անցավ իր մարտական ուղին, և իր կյանքը զոհաբերեց Լենինի—Ստալինի մեծ գործի համար։

Նրա մասին հիմա Ուզբեկստանում երգում են.

Արդ դաշտերում մարտի ծլում են ծիլ ու սեղ,
Նվ խաղաղ է արդեն երկիրը մեր,
Ու քաջ Տոնիյանի հիշատակը լուսե
Տանկիստների սրտում ապրում է դեռ։

ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Լենինյան կոմերիտմիությանը

Նա պայծառ եմ նայում այսօր մեր սերնդին,
Նա մեր կյանքի հույսն է, ներկան ու ապագան,
Հավատարիմ իր մայր, իր մեծ ժողովրդին,
վառ պահելով նրա փառքը հերոսական.
Նրան իր գալիքն է ժպտում հազարաբիբ,
Ինչպես Կրեմլի աստղերն հավերժական։

Նա սերունդն է այս նոր, Ստալինյան դարի,
Նա հարուստ է, բերրի կանաչ իր դաշտերով,
Հարուստ է վաստակով բազում դազդահների,
Ու կռել է, կոփել արյամբ ու քրտինքով,
Նա հպարտ է ուժով իր մոլեգնող սրի,
Հպարտ է մարդկային և սրտաբուխ երգով։

Մեծ սրտի մեջ սիրո, աշխատանքի երգեր,
Տքնությամբ է բացում աղբյուրն առատության,
Նա և՛ զինակից է, և՛ մտերիմ ընկեր,
Թե խնճույքի ժամին, թե վտանգության,
Նա կարող է և իր անձը զոհել
Հանուն հայրենիքի երջանկության։

Նա սիրում է Լենինին, որ մեր պարտիան կոփեց,
Բերեց ազատության թռչունը թևավոր,
Նա սիրում է Ստա՛լինին, զորավարին իր մեծ,
Առաջնորդի՛ն, հո՛րը, որ Լե՛նինն է այսօր,

Որ դուռ մրրիկներից հաղթանակով հանեց
Եվ անառիկ դարձրեց իր հայրենիքն հզոր։

Նա ընդամուն առել գիտե նոցին կրակով,
Պայծառատես ոգու իր մրրկող ցասմամբ,
Նա տեսել է արդեն ու զգացել ոգով,
Որ արյանը պետք է պատասխանել արյամբ,
Մինչև ազատ շնչի հողն իր հևքով
Եվ արևը մարդուն ժպտա խաղաղությամբ։

Ես հպա՛րտ եմ նայում այսօր մեր սերնդին,
Նրա՛ն, որ սրտի մեջ ունի հազար գարուն,
Հավատո՛մ եմ նրա ապագայի բախտին,
Հավատո՛մ եմ նրա պայծառ սիրուն,
Սրդ իր սրտից բխած սիրո երգը շուրթին
Հնգամյակի թևով նա իր վա՛ղն է բերում։

ԵՎ ՔՈ ԳԼԽԱՐԿԸ ԿԱՊՈՒՅՏ
ԵՎ ԱՅՆ ՎԱՐԴԸ ՍՊԻՏԱԿ

...Կայարանն էր աղմկում... Այնտեղ ձեռքեր քնքշագին
Շարժում էին օդի մեջ քանի՜-քանի՜ թաշկինակ,
Հրաժեշտն էր երկարում քո հայացքն իմ հայացքին,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Սուլեց գնացքն ու դանդաղ տարավ իմ սիրտը բորբոք,
Խլեց քամին իմ ձեռքից քո թաշկինակը բարակ,
Հեռո՜ւ, հեռո՜ւ մնացիր, դարձար կապույտ մի ցնորք,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Կայարաններ անցկացա, ինձ ամեն մի կայարան
Տալիս էին հրաժեշտ մի զույգ աչեր սևորակ.
Ինձ թվում էր, թե նորից նույն աշունն է, Սրևան,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Ու որքան ես հեռանում, այնքան բացվում էր հոգիս,
Թեթևանում էր սիրտս հուզմունքներից անպարփակ,
Ինձ թվում էր կսպասեն դարձիս կանաչ ճամփեքին,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Անցան օրերն արյունոտ և զինվորի սրտի մեջ
Հրանոթներն հայրենի ավետեցին հաղթանակ,
Ու թռչում էր սիրտս քեզ, ու առնչում էր սիրտս քեզ,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Կայարաններ անցկացա, հաղթանակած զինվորիս
Ճամփաններում ժպտացին քանի աչեր կապուտակ,

Բայց իմ սիրտը թևավոր, քեզ էր տենչում սիրելիս,
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Ու գալիս էր գնացքը, ժպտում էին սիրաթով
Մասխանները անմշուշ՝ ցրած ամպերը ճերմակ,
Նրանց մաքուր կատարին տեսնում էի հավատով
Ե՛վ քո գլխարկը կապույտ, և՛ այն վարդը սպիտակ։

Նույն աղմուկն էր քաղաքում, նորից աշուն, Երևան,
Կարոտ, և՛ խինդ, և՛ հուզում, երկու աչեր սևորակ,
Քաղցրանում էր հոգուս մեջ կյա՛նքը, մա՛րտը երեկվա,
Ե՛վ քո գլխարկը կապույտ և՛ այն վարդը սպիտակ։

———

ՎԻՇԱՊԱՋՈՒՐԸ

Խաչիկ գյուղը հարուստ բնաշխարհ ունի։ Նա փռված է Միկոյանի շրջանի Հարսնաքար սարի ստորոտում, Քարդուի հարթության վրա։

Երբ մենք մոտեցանք գյուղին, արդեն երեկո էր։ Ավելի էր խտանում աղջամուղջը։ Հարսնաքարից փչում էր մեղմ հովը, և օրորվում էին ճամփի շուրջը փռված հասուն, ոսկեհեր արտերը։

— Արի, գյուղ չմտնենք, դիշերային հնձվորների մոտ գնանք,— ասում է Արմենակ Մկրտչյանը՝ մի լայնալանջ, թիկնեղ երիտասարդ, որը 19 տարեկան հասակից մինչ օրս՝ 16 տարի անընդհատ կոլխոզի վարչության նախագահ է։

Համաձայնում ենք։ Եվ ահա հասնում ենք «Ուղուն Յուրդի» արտերը։ Լուսնի եղջյուրը և բյուր աստղերը իրենց կաթնագույն շղարշն են ափռել Միկոյանի բարձրաբերձ լեռների վրա։ Եվ ահա այդ աղոտ լույսի ներքո, երբ մարդիկ հազիվ են միմյանց նշմարում, հունձ են անում խանդավառները՝ Խաչիկի կոլխոզի պարծանքը կազմող կոմերիտականները։ Երիտասարդական օղակի օղակավար Վանիկ Առաքելյանը, որ ցերեկով հնձել է 0,13 հեկտար տարածություն, մանգաղն արագ սահեցնում է կանգուն ցողունների մեջ և խոթոցով կտրում, մի կողմ դնում։ Նրանից հետ չեն մնում օղակի անդամներ Արամայիս Սահակյանը, Վազգեն Զաքարյանը, հայրենադարձ երիտասարդ, վերջերս կոմերիտմիության շարքերն ընդունված Վահան Շահինյանը և ուրիշներ։

— Մեր օղակը վճռել է գործով պատասխանել Թալինի երիտասարդների կոչին,— առանց հունձը դադարեցնելու ասում է օղակավար Առաքելյանը։— Դիշերային հնձի ժամանակ հասկեր չեն թափվում, ցողունները տամուկ են լինում, բերքի կորուստը կանխվում է։ Այն հատ ու կենտ հասկերն էլ, որ ընկնում են, առավոտյան հավաքում են պիոներները, որոնց գլխավորում են ուսուց-

չուհիներ և ավագ չոկատարներ Նրաժ Պետրոսյանը, Հեղինե Գրիգորյանը, Վահանուշ Բարսեղյանը։

— Առաջնորդին ուժած խոստում ունենք, պետք է կատարենք,— ասում է երիտասարդական մի ուրիշ օղակի օղակավար՝ Հրաչիկ Հարությունյանը։— Թեև պետական առաջադրանքը մեկ հեկտարից 10 ցենտներ է, կոլխոզը խոստացել 12 ցենտներ բերք հավաքել։ Բայց մենք նոր մշակած տարածություններից ստանում ենք ավելի բարձր բերք։ Բարձր բերքի երիտասարդական օղակի աշխատողներս խոստացել ենք 10 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստանալ 18 ցենտներ։ Առաջին հեկտարների բերքը երեկ կալսվեց։ Արդյունքը հրաշալի է, 18 ցենտներն ապահովված...

— Մենք հանգիստ չենք ունենա մինչև վերջին հասկը հավաքելն ու կալսելը,— հպարտությամբ ասում է կոմերիտուհի Օլյա Բադալյանը։— Միայն մեր կոլխոզը պետությանը կհանձնի ավելի քան 100 տոն հացահատիկ։ 1000 հեկտար ցանքատարածություններում մեր կոլխոզնիկները ողջ տարին քրտնաջան աշխատանք են թափել և առատ բերք աճեցրել։ Անցյալ տարի աշխօրին 4,5 կիլոգրամ հացահատիկ է բաշխվել, իսկ այս տարի շատ ավելի է բաշխվելու։

Բողնելով գիշերային հնձվորներին՝ մենք բռնում ենք գյուղ տանող ուղին։ Մեր դիմաց ճոճչացող սայլերն են, իսկ հեռից լուսարձակները փայլեցնելով ավտոմեքենան է գալիս։ Դաշտից խրձեր են տեղափոխում կալ։ Նրանց վրա աշխատող կոմերիտականներ Սահակ Մինքայելյանը, Վազո Խաչատրյանը, Վարդան Պողոսյանը և ուրիշներ գիշերով արդեն երկրորդ մարշրուտն են կատարել։

— Մինչև լուսաբաց 4—5 մարշրուտ էլ կկատարենք,— ասում են նրանք։

— Իսկ ես՝ տասը,— վրա է բերում կոմերիտական շոֆեր Սեդյոժա Աբրահամյանը։

***

Կոմերիտական կազմակերպության քարտուղարը առավոտյան վաղ կոլխոզի գրասենյակ մտավ և նախագահին հայտնեց, որ դի-

շերը բարձր բերքի երիտասարդական օղակները կատարել են 7 հեկտար հունձ, 4 հեկտարի խոզերի տեղափոխում։

Այդ նույն ժամին մի խումբ պիոներ-դպրոցականներ ամառ ջոկատավարների և ուսուցչուհիների ղեկավարությամբ մեկնեցին դաշտ՝ հասկահավաքի։

***

Բայց խոսել Խաչիկի երիտասարդների մասին և մոռանալ Վիշապաջրի հարցը, չի կարելի...

***

...Մինչև անցյալ տարի Խաչիկ գյուղի դիմաց մի փոքրիկ կալատեղի չափ ճահճուտ կար։ Ծերունիները պատմում էին, թե ինչպես իրենց պապերը կամ պապի պապերը այդ ճահճատեղից բխող սառնորակ աղբյուրից են ջուր խմել։ Պատմում էին, թե ինչպես երկու ջրաղաց են աշխատել այդտեղից բխող աղբյուրի ջրերով և գյուղի ընդարձակ պտղավետ այգիներն ու արտերն այդ ջրերով են ոռոգվել...

— Բա ո՞ւր են այդ ջրերը...—հետաքրքրվում էին գյուղի երիտասարդները, կոմերիտական տղաներն ու աղջիկները։

— Համե՞ց, վիշա՞պը խմեց, բալիկնե՛ր, բա էլ ինչո՞ւ է վիշապաջուր։ Այն օրից, ինչ կտրվել են աղբյուրները, այդ օրից էլ վիշապաջուր է կոչվում,—պատասխանում էին ծերունիները և ավելացնում, թե ինչպես վիշապն իբր եկել, մուտք է գործել աղբյուր ու մինչև հիմա էլ խմում է ու դեռ չի հագեցրել իր ծարավը...

Բայց ո՛ր երիտասարդը կհավատար վիշապին, կամ ծերունիների այդ պատմությանը...։ Նրանք ժպտում էին այդ խոսքերի վրա ու լուրջ մտորում՝ չի՞ լինի արդյոք ջուրը հանել, նույնքան ջուր ունենալ, ինչքան իրենց պապի պապերն են ունեցել...

Այդ պահերին նրանք երազում էին... Գյուղից ներքև փռված հարթությունները ցանքերով ու այգիներով կպատեն, հորդ ջրերը կյանք կբերեն անապատներին ու Խաչիկում ավելի երջանիկ կյանք կթագավորի... Նրանցից ոմանք նույնիսկ երազում էին հասուն, մրգատատ այգիներ, խաղողենու առատ որթատունկեր, օրորվող, ծփուն արտեր...

Ու այդ երազանքը մի օր հրապարակ բերվեց... Մինչ այդ, եթե երազանքը միայն խաչիկցի երիտասարդների ուղեղներում էր թափառում, ապա այժմ կոմերիտական ժողովի քննարկման հարց դարձավ...

Հանդես գալով, կոմերիտական կազմակերպության քարտուղար, Աղավնի Պետրոսյանն ասաց.

— Մեր պապի պապերի օգտագործած ջուրը չկա։ Անհետացել է։ Եթե դյուղի ծերունիների ասածներին հավատանք՝ վիշապներն են խմում այդ ջուրը։ Ուստի մենք պետք է մաննենք երկրի ընդերքը, խլենք նրանցից այդ ջրերը, երկրի երես հաննենք...

Ու կոմերիտականները հարց հարուցեցին կոլխոզի վարչության առաջ՝ իրենց նախաձեռնությանն օժանդակելու։ Կոլխոզի վարչության նախագահ Սրմենակ Մկրտչյանը, պարտիական կազմակերպության քարտուղար Զոհրաբ Խաչատրյանը նրանց նախաձեռնությունը խանդավառությամբ ընդունեցին, ամեն ինչով օժանդակեցին։

***

Անցել է մեկ տարի։

Խաչիկցիները հենց ճահճատեղից փորել են, մտել երկրի ընդերքը, ջրի ուղղությամբ թունել բացել ու շորս հարյուր ութսուն մետր առաջ գնացել։ Իսկական հանքափորի աշխատանք են կատարել նրանք, մեծ ջանասիրությամբ առաջ գնացել, քարերի ու ապառաժի հանդիպելով՝ ջարդել-պայթեցրել, կրկին շարունակել ուղին և «վիշապից» խլել արդեն ավելի քան կես ջրաղացի ջուր։

Փորման առաջին ամիսներին այնպես պատահեց, որ հարյուր մետր նրանք առաջ գնացին, լարված շատ աշխատանք ներդրեցին, բայց ջուրը չավելացավ...։ Մարդիկ սկսեցին հուսահատեցնող խոսքեր ասել, դժգոհել, որ ջուր ճիգ են թափում երիտասարդները։ Հաճախ ծնողները թույլ չէին տալիս իրենց որդիներին վիշապաջրի ակունքի փորման վրա աշխատելու։ Իսկ կոմերիտական կազմակերպությունը համառորեն աշխատում էր։ Մեկենաս Հարությունյանը, Հովսեփ Թադևոսյանը, Մամիկոն Գրիգորյանը և ուրիշներ անդադար փորում էին ու առաջ գնում՝ ուշադրություն չդարձնելով ոմանց հուսահատեցնող խոսքերին։

Եվ մի օր էլ հորդեցին ջրերը։ Ասես բրիշները կապանքներ ջարդեցին, վիշապային կապանքներ, և նրանց հետևում ամբարված ջրերն սկսեցին հոսել դեպի լույս աշխարհ։ Փորողները ոգևորվեցին, բրիշները նրանց ձեռքին ավելի ահեղ թափ առան, աշխատանքի մեջ ներգրավվեցին նորանոր երիտասարդներ։

— Երկու ջրաղացի ջուր, այդ է մեր նշանաբանը,— ասում է կոմերիտական կազմակերպության քարտուղար Աղավնին։

— Արդեն այս տարի մեր արտերից տասնյակ հեկտար ջրել ենք այս ջրով,— լինում է բարձր բերքի երիտասարդական օղակի օղակավար Վանիկ Առաքելյանի խոսքը։ Այլապես չէինք կատարի առաջնորդին տված մեր խոստումը։ Ութ հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 18 ցենտներ հացահատիկ ստացանք։

— Մեր դյուղը, մի յոթ-ութ տարի հետո եկեք։ Հարյուրավոր հեկտար նոր այգիներ ու ցանքեր կունենանք, որոնք ամբողջովին կոռոգենք Վիշապաջրի ջրերով։ Գյուղի շուրջը փռված հարթությունները կպատեն բերքատու այգիներով։ Ջրերը կվտխոջան այդ տարածություններով անցնող առվակներում և կանաչություն, կենդանություն կսփռեն այդտեղ։ Խոտավետ մարգագետինները հազարերանգ ծաղիկներով կժպտան, սոկեզօծ արտերը կծփան... Այն ժամանակ ավելի երջանիկ կյանք կվարի խաչիկին ու կոլխոզային բարիքներն ավելի առատ կլինեն,— ասում է կոմերիտական կազմակերպության քարտուղար Աղավնին։

Երբ մենք երկրի ընդերքից դուրս եկանք, արդեն երեկո էր։ Հարևնաքարից վշշում էր մեզ հովը։

Քարդուի կոչված դաշտերում դեռևս հունձ էին անում երիտասարդ հնձվորները։

Իսկ Վիշապաջրից հոսում էին ջրերն ավելի հորդառատ...

ՎԵՐՀՈՒՇ

Ինձ չէի՛ն պերում կապույտ աչքեր,
Նրանք հոգիս չէին հուզում,
Նրանց չէի ես երազում,
Ու նրանց մեջ չէի սուզվում,
Ինձ չէին պերում խարտյաշ հոնքեր,
Նվ երկնագույն կապույտ աչքեր։

Միայն հիմա՛,
Միայն հիմա՛,
Երբ տեսնում եմ թեկուզ մի պահ,
Կապույտ աչքեր,
Փիրուզ, ծավիւ,
Սիրտս դառնում է ծարավի,
Սիրտս կորչում է երկնագույն
Կապույտ աչքի ծով հայացքում,
Ինչպես մի քար օվկիանի մեջ,
Ինչպես քամու մի ելևէջ։

Ու կանգնում է աչքերիս դեմ
Ռուս աղջիկն այն վարդագեմ,
Ռուս աղջիկն այն կապուտակ,
Կոմերիտուհին այն բոցասիրտ,
Որ խոլական կրակի տակ
Մոռանալով մահ ու վտանգ
Իմ վերքերն էր սիրով կապում,
Վերքիս վրա արցունք թափում։

Վերքերս անցան, բայց սրտիս մեջ՝
Նրա այրող հայացքի տակ՝
Բացվեց ուրիշ խորունկ մի վերք,
Որ չի բուժվի երբե՛ք, երբե՛ք։

Ու մի օր էլ ընկավ մարտում
Կապուտաչյա պեղեցկուհին,
Քաջ, անվեհեր կոմերիտուհին,
Որ առյուծ էր կռվի պահին,
Համարձակ էր նայում մահին,
Որ աչքերում ուներ կայծեր,
Կրծքում մի սիրտ՝ քնքուշ ու ջերմ։

Հիմա՛, հիմա՛
Երբ տեսնում եմ թեկուզ մի պահ
Կապույտ աչքեր փիրուզ, ծավիթ,
Սիրտս դառնում է ծարավի,
Սիրտս կորչում է երկնապույն
Կապույտ ծովի ալիքներում,
Ու հիշում եմ նորից նրա՝
Քնքուշ ձեռքը վերքիս վրա։

ՀՆՁՎՈՐՆԵՐ

Արևը վառում է,
Ու կյանքը եռում է,
Լավում է հնձվորի երգը,
Արտերը նազում են,
Արտերը հասնում են,
Առատ է այս տարվա բերքը։

Գերանդին շողում է,
Հասկերը դողում են,
Կամացուկ ընկնում են դեանին
Հնձվորը ժպտում է,
Հրճվանքից խնդում են,
Անհուն է բերկրանքը սրտի։

Օդակը հնձում է,
Օդակը մրցում է,
Քրտինքը հոսում է վարար,
Ամենքը հնձում են
Ամենքը մրցում են
Նոր կյանքի վերելքի համար։

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԳԸ

Չի մոռենում հոգնությունը մեր բազկին,
Մեր դռներով անցնել անգամ չի փորձում,
Նախանձում են մրրիկները մեր վազքին,
Արծիվներն են մեր թռիչքին նախանձում։

Կայծակներն են բախվում ջահել մեր կրծքին,
Տարերքներն են մեր սրտերը փոթորկում,
Կորում ենք և անց ենք կենում ցնծագին՝
Հազար տարվա ճանապարհը մի օրում։

Մենք աշխարհում սարսափ չունենք ոչնչից,
Սանձ ենք դնում ամեհիների բերանում,
Ահն է անգամ ահաբեկվում մեր շնչից,
Եվ մահն է մեր ոտքերի տակ մահանում։

Մենք մարզվել ենք բովում արդար
աշխատության,
Եվ զորավոր հրդեհներում պայքարի,
Մեզանից են դասեր առնում քաջության՝
Բոլոր, բոլոր պարմանիներն աշխարհի։

Կոմունիզմը կգա, ինչ էլ որ լինի,
Նրա ջահել զինվորներն ենք մենք ահա...
Միք մոռանա մոխիրները Բեռլինի,
Լոնդոն, Փարիզ, Վաշինգտոն ու Անկարա։

Դուք մեր հոգին ահաբեկել չեք կարող,
Ատոմային ռումբերի սուլոցով,

Ինչքան էլ որ ճամփան լինի քարքարոտ,
Միևնույն է գետը պիտի հասնի ծովը։

Պիտի տոկանք ու մարտնչենք անդադար
Եվ խավարին պիտի մնանք հավետ խորթ,
Ջի աշխարհում՝ ամենազոր ու արդար
Բոլշևիկյան պարտիան է մեզ առաջնորդ։

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Մրմաճորի եզրով քարայծի զգուշությամբ մի ճանապարհ է ոլորվում։ Նա գալիս է հեռուներից, գնում հեռուներ։ Հազար աղբյուր ու առու այդ ճանապարհը կտրելով արծաթ լարերի նման կախ են ընկնում ձորի վրա։ Եվ հեռվից նայողին ձորը մի քնար է թվում, որի վրա հովն իր անտես մատներով ասես նվագում է Գուգարքի քաղցր մեղեդին։

Բայց ամենից զիլ հնչում է Գոչան աղբյուրի լարը։ Գոչանը բխում է մի մամռոտ քերծի ստորոտից, պատվում, կարծես եվ գալիս գոմ մեջ և խրտնած մարուկի պես պոկվում տեղից։

Գոչանը քմահաճ աղբյուր է։ Մասրուտցիք ասում են, որ ամառն իրար հետևից յոթ հատ քար չես հանի նրա միջից—ձեռքդ կփետանա։ Իսկ ձմեռը Գոչանի երեսն երբեք սառույց չի բռնում։

Այդ աղբյուրի մոտ կանգ առան Արամն ու Սարիմանը, ճամփորդական պայուսակները ցած դրին ու նստեցին հանգստանալու։

Նրանք երկուսն էլ ճակատ էին մեկնում՝ կիսատ թողած իրենց նվիրական երազները։ Արամը բաժանվում էր իր սիրած աղջկանից, Սարիմանն՝ իր այգուց։ Եվ երեն Գոչանի զուլալ ջրերը Արամի սրտին հավերժական սիրո ուխտն էին մրմնջում, Սարիմանը մտքով ուրիշ տեղ էր՝ իր այգու ցրտահար եղած, չորացած ծառերի հետ։

Ի՞նչ հույսով, ի՞նչ մուրազով նա տնկեց այդ այգին, ի՞նչ գորովանքով խնամեց ու փայփայեց նրա յուրաքանչյուր ծառը։ Բայց անողոք ձնաբուքը մի գիշերվա մեջ ավերեց ամեն ինչ—ծառերը ցրտահար եղան, այգին ամայացավ։

Բուքն ասես եկավ հաստատելու մասրուտցիների այն խոսքը, թե՝

— Պապից-պապ, որդուց-որդի աչք ենք բացել՝ մեր հողում այդպի չենք տեսել...

Այո՛, Գուգարքի բա՜րձր լեռների կատարը թառած այդ փոքրիկ

գյուղում, ուր ամառը կալճատև է, ձմեռը խստաշունչ, ուր ամեն տուն, ամեն ցանկապատ ընդունակ է քամու բերանից ամպ խլել ու պահել օրերով—երբեք մրգատու ծառ չէր աճել։

Մասրուտցին էլեկտրական լույս էլ ունեցավ, ռադիո-բարձրախոս էլ, մասրուտցու մառանը լցվեց ամեն բարիքով, բայց մասրուտցի մանուկի աչքը դարձյալ թարմ մրգի կարոտ մնաց։ Գյուղի շրջակայքի անտառներում՝ այս ու այնտեղ աճում էին միայն վայրի խնձորենիներ ու տանձենիներ՝ թթվաշ, տափակ պտուղներով, որոնցից մասրուտցի կինը ամեն աշնան մի քանի շաղ չիր էր կախում սրահի այունից։

Բայց ահա գյուղատնտես Սարիմանը որոշեց այդի գցել։ Երբ կոլխոզի վարչությունն ընդառաջ գնաց երիտասարդ միչուրինականին՝ հող ու միջոցներ տրամադրեց նրան, Գալոնց Ունանն իր գըլխարկը թափով խփեց գետնին, ոլորեց թավ ու երկայն պեխերը և հանդիսավորությամբ ասաց.

— Իմ էս թառլան պեխերը կկտրեմ, եթե մեր հողում մրգատու ծառկի...

Երիտասարդներն օգնեցին Սարիմանին, ցանկապատեցին հողամասը, մշակեցին, հետո խնամքով տնկեցին Սարիմանի բերած ծառերը։

Բայց լեռնաշխարհի ձնաբուքը մի գիշերվա մեջ ավերեց այդ նորաստեղծ այգին. ծառերը սևացան ու չորացան։

Հետո մի առավոտ մասրուտցիք զարմանքով տեսան, որ Սարիմանի ծառերից մի քանիսը ծաղկել են։ Նրանք ձայն տվին Սարիմանին ու վազելով մոտ ցանկապատ... Բայց, ո՜վ զարմանք... մի խարտյաշ ձեռք ծաղրել էր գյուղատնտեսին՝ վայրի ծաղիկների փնջեր կապելով ծառերի չորացած ճյուղերին...

Մասրուտցիք սկսեցին խեթ նայել իրենց գյուղատնտեսին։ Կոլխոզի նախագահը քիթը կախեց.

— Մեզ ամոթով արիր, Սարիմա՛ն, գոնե շրջանին հայտնած լինեիր...

Գալոնց Ունանն էլ Սարիմանի առաջով անցավ այնպիսի հպարտությամբ, որ ասես աշխարհի բոլոր փշերի ծայրերը ինքը սրած լիներ։ Հետո դոհունակությամբ ոլորեց իր թավ պեխերն ու հեգնանքով հարցրեց.

— Հը՛, մե՛ր տղա, աչքս ջուր կտրեց, բա ե՞րբ ենք սկսում բաղաքաղը...

Ի՞նչ ասեր, ի՞նչ պատասխան տար Սարիմանը։ Նա լռեց, ամփոփվեց ինքն իր մեջ. խուսափում էր շրջապատից, օրերով մենակ շրջում էր անտառները։ Բայց երբե՛ք, երբե՛ք չէր հրաժարվում իր թևավոր երազներից։

***

Այժմ Գոչան աղբյուրի մոտից Սարիմանը կարոտով նայում էր դեպի գյուղի փեշը՝ իր երբեմնի այգու ցանկապատին, որը նրան նույնքան տխուր ու ամայի էր թվում, որքան հովվական փարախը՝ ամրվորի քոչելուց հետո։

Նա վեր կացավ տեղից՝ Արամին նստած թողնելով, բարձրացավ աղբյուրի գլուխը, մտավ մի փոքրիկ բացատ, որ եղերված էր վայրի խնձորենիներով, լուռ ու մտախոհ շրջեց ծառերի տակ։ Երբ նա ետ եկավ, Արամն աղբյուրի կողմը թեքված՝ յուրովի խոսում էր նրա սառնորակ ջրերի հետ—իր ջահել հարսնացուն էր պահ տալիս նրանց։

Սարիմանը զգայվեց մտերիմ ընկերոջ խոսքերից։ Նա նստեց Արամի մոտ, ձեռքը պատ տվեց Արամի ուսին ու դարձավ նրան.

— Անհոգ կաց, Արա՛մ, հենց այս սառնորակ աղբյուրի մոտ, այս գեղատեսիլ բնության մեջ կկատարենք քո հարսանիքը...

— Կարժանանա՞նք...

— Ինչո՞ւ չէ։ Բայց խոստացիր, Արա՛մ, որ եթե ողջ ետ գանք, կամ թե դու գաս, հարսանիքդ անպայման այստեղ կատարես, բացատում՝ խնձորենիների տակ...

Արամն անհավատ նայեց ընկերոջը։

— Իսկ ինչո՞ւ անպայման այստեղ...

— Դե ո՞վ իմանա... սրտի ցանկությունն է... ինքս էլ չգիտեմ... Բայց խոստացիր, Արամ, խնդրում եմ...

Այնքան անկեղծորեն հնչեցին Սարիմանի խոսքերը, որ Արամը չերմորեն գրկեց ընկերոջը, համբուրեց ու խոստացավ։

***

Այս դեպքից չորս տարի անց, երբ աշունը նոր էր իջնում Մասրուտի անտառներին, Գոչան աղբյուրից վեր՝ խնձորենիների տակ բացվեց Արամի հարսանյաց հանդեսը։ Եկել էին ազգական ու

բարեկամ, եկել էին նաև Արամի ճակատային ընկերներից շատերը՝ մայոր Դավթյանը, որ Արամի հրամանատարն էր եղել, սերժանտ Վավիլովը, որ Արամի հետ երկար ժամանակ քնել էր մի շինելի տակ, ավագ Գնատենկոն, որին Արամը փրկել էր մահից, շարքային Սարուխանը, որի հետ Արամը կիսովի ծխախոտ էր ծխել։

Նույնն էր բացատը, նույնն էր անտառը, նույնն էր Գոչանն իր փախչկան ջրերով, անուշ երգն իր սառը շուրթերին։

Չկար միայն Սարիմանը։ Նա ընկավ արյունահեղ մարտում, ինչպես որդին՝ վտանգի պահին հարազատ մորը փրկելիս։

Խնձորենիների հովանու տակ փռվել էր լեռնցու շեն սուփրեն։ Մեսում էին կրակները՝ աշնան պայծառ օդում տարածելով քաղցրահամ խորտիկների բույրը։ Իզուր էր դհոլչին ջանում կատեղ զուռնայի զիլ ձայնը։ Արևի տակ շողշողում էին կաքավող լեռնուհիների այն նախշուն շորերը, որ չորս տարի շարունակ խնամքով ծալած էին մնացել սնդուկներում։

Երբ պարն ընդհատվեց, հարսանիքի թամադան՝ քարտաշ Հարությը, որ աշխարհ տեսած, ամեն սեղան նստած, ամեն աղդի հայ կտրած մի պայծառ լեռնցի էր, դինու բասը ձեռքին՝ տեղից վեր եկավ և ծանր ու լրջախոհ տոնով առաջարկեց խմել պատերազմի դաշտում ընկած հերոսների հիշատակին.

— Խմենք, ուրեմն, էն ձեռի կենացը, որ փուշն ինքը քաղեց, վարդը մեզ տվեց... Հավերժ հիշենք, բա՛րի հիշենք նրանց աղիզ անունը...

Քարտաշի դողդոջուն ձայնը խզվեց։ Մայոր Դավթյանը գլխարկը հարգանքով հանեց ու անաղմուկ ոտքի եկավ։ Մյուսները հետևեցին նրան։ Տիրեց հանկարծահաս, խորհրդավոր լռություն։ Անլսելի դարձավ Գոչանի կարկաչն անդամ։ Բաժակները սառեցին օդում։

Այդ լռության պահին, երբ հովը թերթում էր սեղանի վրա կախ ընկած վայրի խնձորենու սաղարթները, Արամը սրտի խորքում փայփայում էր Սարիմանի նվիրական անունը և կկոցած աչքերով նայում ծառերին։ Նա ակամա վերհիշեց իր և Սարիմանի զրույցը Գոչան աղբյուրի մոտ, հիշեց Սարիմանի դեմքը, երազուն աչքերը և մի սուր ծարավ զգաց՝ նրան իր հարսանյաց սեղանին տեսնելու, նրա հետ զրուցելու։ Արամի ցրված հայացքն ակամա

կենտրոնացավ ու կանգ առավ մի կետի վրա։ Նրա հոնքերը նախ խոժոռվեցին, ապա հարցական շեշտեր դարձած, թռան ճակատը։ Ոչ ոք չնկատեց Արամի հետ կատարված տարօրինակ փոփոխությունը։ Բայց երբ նա հայացքը ծառից չկտրելով՝ քայլեց ուղիղ սուփրայի միջով ու մոտեցավ խնձորենուն—բոլորն ակամա շրջվեցին դեպի նա։ Ձեռքի բաժակը ցած դնելով՝ Արամը հանդիստ բարձրացավ ծառը, անցավ ճյուղից ճյուղ, կռացրեց, ետ դարձրեց ճյուղերից մի քանիսը և նրանց արանքից քաշեց, դուրս բերեց մի դալար ճյուղ՝ բաղախնձորի խոշոր պտուղներով ծանրաբեռնված։ Վայրի խնձորենու վրա՝ այգու խնձո՞ր։ Հրա՞շք էր այդ... Ի՞նչ խնձորներ էին դրանք... Բայց երբ Արամը ցույց տվեց ճյուղի պատվաստը—հրաշքն անցավ, մնաց զարմանքը։ Ո՞վ կարող էր պատվաստած լինել։ «Սարիմանը»—լսվեց Արամի շշուկը, և Սարիմա՞նի անունն անցավ շուրթից-շուրթ։

Խնձորենու տակից բոլորը հիացած ու հափշտակված նայում էին դեպի վեր։

Իսկ Արամը զգուշանքով գրկել էր խնձորներով բեռնված ճյուղը, որ ասես մտերիմ ընկերոջից ստացած մի անգին նվեր լիներ։

— Շնորհակալ եմ, Սարիմա՛ն ջան, ախպե՛ր ջան...—յուրովի մրմնջաց Արամը։

***

Ձմեռն անցավ։ Կրկին գարուն իջավ Մպսրատի սարերին, ծաղկեցին խնձորենիները։

Բացատի եզրին՝ Գոշանի վրա շրջապատի համատարած ծաղկունքի մեջ բարձրանում էր Սարիմանի աղբյուր-հուշարձանը։

Այդ աղբյուրի կառուցումը սկսվեց Արամի հարսանիքի հետևյալ օրը։ Աղբյուրի նախագիծը մայոր Դավթյանը կազմեց, որ հմուտ ճարտարապետ էր։ Աղբյուրի ճակատին քարտաշ Հարությի ոսկե մատները նուռ ու ողկույզ նախշեցին։ Պատերի քար ու ծեփի հետ մասրուտցիք իրենց սերն ու սիրտը հյուսեցին։ Իսկ ցեխը շաղախեց Գալոնց Ունանը՝ իր «Բառլան պեխերը» կտրած։

Աղբյուրի վճիտ ջրերն այժմ էլ առաջվա նման կորում են ճանապարհն ու կախ ընկնում ձորի վրա։ Լարը նվագում է թովիչ երգեր՝ Սարիմանի անմահ հիշատակի մասին։

ՖՐԱԳՄԵՆՏ

Նայում եմ ահա ես այս քարտեզին,
Ուր որ տասնվեց տարբեր երանգներ
Միածանի պես իրա՞ր են հյուսվել
Ու պարափակվել այս կարմիրի մեջ.
Այստեղ մարդկային երազն է անմեռ,
Հավերժ դաշնությա՞ն, սիրո՛, ճշմարտի երա՞զը վերին
Գտել բաղձալի իր մարմնացումը.
Սիրո՞ւմ եմ կարմիր այս դաշնությունը,
Ուր ամեն անկյուն հարազա՞տ է ինձ՝ իմ բակի նման,
Օրհնո՛ւմ եմ կարմիր այս դաշնությունը,
Որի փրկարար հյուսվածքո՛ւմ միայն
Աշխարհի խղճից ու քարտեզներից ջնջված հրկիրըս,
Գծվե՛ց, ունեցավ իր ձևն ու դույնը,
Կապվա՞ծ եմ, կապվա՛ծ այս մի բուռ հողին,
Այս Արարատի՞ն, այս շիրիմնե՞րին,
Սիրում բարձրացող նորակերտների ամեն մի քա՞որ և խի՛ճ անդամ,
Որ երջանկության շարվածքում այս մեծ
Թեկուզ աննշմար մի ճե՞ղք են լցնում...

ՍԵՎԱՆՇԻՆՈՒՄ

Իջնում ենք մենք ի վար, ի վար, հողի խորունկ շերտն ի վար,
Ահա մեր դեմ խորքը երկրի ու թունելներ մթագալար։
Այս խավարից լամպերն ասես շնչարգելվում են, խեղդվում,
Կիսալույսում ողջը մի պահ անիրական է մեզ թվում։
Ով հիրավի, մի՞թե իրոք այս խուռնները լայնահուն
Բացել է մարդը.

Ու վայրի քարաժայռերն այս զարհուր
Մի՞թե ձեռքն է փշրել մարդու, ու վիրավոր քար ու ժայռից
Ջուր է հոսում, ասես արյուն՝ հողագնդի երակներից։

Ես խոնարհվո՞ւմ եմ հիացքով այն բազկի դեմ, որ աշխարհում
Այս խավարից լույս է հանում։

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բռնցքաչափ գյորգինաների և երփնավառ աստղածաղիկների մարգի մեջ կանգնել է մի տղամարդ։

Նրա հագուստը աշխատանքային է. երկարաճիտ կոշիկներ, որոնց վրա նստել է ծաղիկներից թափված շաղը, սպիտակ քաթանե վերնաշապիկ և արևից փոքր ինչ խունացած գալիֆե։ Կանգնել է նա ու մտասույզ կկոցած աչքերով դիտում է շուրջը բարձրացող ծաղիկները։

Ես որոշում եմ ընդհատել նրա խոհերը և համարձակ քայլերով մոտենում եմ.

— Բարև՛ ձեզ, թույլ տվեք ծանոթանալ, Երևանից...

Ես ներկայացնում եմ ինձ։

Նա բարձրացնում է գլուխն ու չգիտես ինչու ուղղելով վերնաշապկի փեշերը, ձեռքը մեկնում է ինձ.

— Շատ ուրախ եմ, Բագրատ Հակոբյան։

Ես ապասում եմ, որ նա քայց թողնի ողջունելու համար վերցրած իմ ձեռքը, բայց նա ավելի ամուր է սեղմում այն և մտերմիկ խորամանկությամբ նայում է ինձ.

— Ինչպես տեսնում եմ, չեք հիշում, ձեր առաջ կանգնած է ձեր պատանեկության ընկերներից մեկը...

— Բագրա՞տ,—բացագանչում եմ ես և այս անգամ ինքս եմ սեղմում նրա ձեռքը։ Մենք բարեկամաբար խփում ենք իրար ուսի և անմիջապես անցնում մտերմական տոնի։

— Դե խոսիր տեսնեմ, Բագրա՛տ, ո՞նց ես, ի՞նչ ես անում։

— Ի՞նչ խոսեմ,—ժպտում է Բագրատը,—ահա ես իմ «Բագավորության» մեջ, այս ծաղիկները թող պատմեն, թե ինչ եմ անում։

— Է՛, կոմսոմո՛լ ախպեր,— կատակում եմ ես— վաղո՞ւց է որ ծաղիկների լեզվով ես խոսում մարդկանց հետ...

— Իսկ մի՞թե այդ լեզուն քեզ հասկանալի չէ,—նույն տոնով շարունակում է Բագրատը և մենք դանդաղորեն առաջ ենք քայլում մեր շուրջը փթթող ծաղիկների ծովում:

Սա Կիրովականի բուսաբանական այգին է, 14 հեկտար մի տարածություն, որի կառավարումը հանձնված է իմ հին ընկերոջը՝ Բագրատ Հակոբյանին:

Ծաղիկները շատ են ու բազմերանգ: Միածանի բոլոր գույներով և արևի՛ քմահաճ ճառագայթումներով շաղ են եկել նրանք անտառամերձ այս սարահարթին և օդը լցրել արբեցնող բուրմունքով:

Ահա շքեղ, հպարտությամբ բարձրացած դյորդինաների արնակարմիր ու նարնջավուն փնջերը, քիչ այն կողմ կանաչ տերևների մեջ օրորվում է նորածագ արևին անչափ նման մի ծաղիկ, որին չգիտես ինչու՝ չինական արև են ասում: Ապա բայ դեղնավուն գեյշաներն են խոնարհած գլուխներով կանգնել մեր ճամփին, իսկ հետո գալիս են մեխակների տեսակները, բուրավետ նազելի ֆլոկսը, գունագեղ ու խոնարհ ցայտածաղիկը, վերբենը, նարգիսները, թավշաթաղիկն ու մեր դաշտերում անչափ տարածված տուլտը, որ այստեղ բուսաբանական այգու մասնագետների կողմից մալվա անունն է ստացել:

Բագրատը մեկ առ մեկ բացատրում է, թե ո՛ր ծաղիկը աշխարհի որ ծայրից է բերված, և ինչպես են զգում իրենց չինական տոթակեզ արևին սովոր գեյշան, կամ իրանական շահ-փասոնը, որ հիմա վերբեն անունն է կրում:

Մատների զգույշ, հոգատար շարժումով նա բռնում է լայն, մանուշակագույն տերևներով մի բույս և նայում ինձ:

— Ինչ ես կարծում, դառնարած ժամանակդ, Արագածի լանջերին երբևէ չե՞ս հանդիպել այս բույսին...

Ես սկսում եմ բույսից մի տերև ու ախորժակով ծամում, հաճելի թթվություն ունի:

— Դե իհարկե, սա մեր չոբան-լավաշին է, Գոմեշի Ականջ էլ էինք ասում,—բացագանչում եմ ես և ուրախացած շուրջս նայում:

Թվում է թե ուր որ է, քարերի տակից պիտի դուրս ցատկեն իմ խուխ դառնուկներն ու մասնակցեն իրենց հովվուհու նախաճաշին։

— Այո, չոբան-լավաշին է, ճիշտ կռահեցիր,—ժպտում է Բագրատը,—նա հիմա կոչվում է բալզամի, հիանալիորեն հարմարվում է մեր դիտական փորձերին, մենք նրան մշակում և ազնվացնում ենք մեր քաղաքների ղբոսայգիները, ծաղկանոցներն ու փողոցների եզրերով ձգվող դաղոնները կանաչազարդելու համար, այդ նպատակով ենք ազնվացնում նաև տուղտը։ Հիշո՞ւմ ես, այդ տուղտով գյուղի աղջիկները ղլուխ էին լվանում, որպեսզի մազերը մետաքսափայլ ու փափուկ լինեն, իսկ նա հիմա մեր ձեռքի տակ բոլորովին նոր, շքեղ տեսք է ստացել, գույներն էլ ավելի խիտ ու ցայտուն են դարձել, նոր է սկսում «կուլտուրականանալ» և խոստանում է մեր ղբոսայգիների ամենագեղեցիկ զարդը դառնալ։

Եվ այսպես մարդ առ մարդ անցնելով՝ ես տեսնում եմ, թե ինչքա՜ն շատ ծաղիկներ ու թփեր են ընտելացել, ազնվացել Բագրատի ու նրա ընկերների քրտնաջան աշխատանքի շնորհիվ։

Ծաղիկներ, որ ցրված էին իմ հայրենի դաշտերում՝ վայրենի և անօգուտ, և միայն մենք՝ պատանի դառնարածներս էինք՝ ընդհանցով պահում մեր արևախանձ ճակատները։

Դա վաղուց էր, շատ վաղուց, այն ժամանակ, երբ ես ու Բագրատն էլ այդ ծաղիկների նման վայրի և անմշակ գյուղական պատանիներ էինք։

Եվ ինչպես որ պետական բուսաբանի ձեռքը մեր դաշտերից հավաքել ու բուսաբանական այգի է բերել այս ծաղիկները և այժմ զբաղված է նրանց ազնվացման և օգտակար դարձնելու գործով, այնպես էլ սովետական հայրենիքի հոգատար ձեռքը բռնեց պատանի Բագրատի ուսից ու նրան առաջնորդեց սովետական դիտության լայնահուն ու բազմախոստում աշխարհը։

Կոմերիամիության այն սերունդը, որին պատկանում էինք մենք, հասարակական գործունեության ասպարեզ մտավ այն տարիներին, երբ գյուղում դեռևս իր ամուր կոճղարմատներն ուներ կուլակությունը, իսկ քաղաքում նեպմանն էր շրջում կուշտ ու գոտեպինդ։ Եվ այն մարդիկ, որ պայքարել էին սովետական իշխանության հաստատման համար, նրանք էլ դարձան մեր ուղեցույց-

ները դասակարգային պայքարի ասպարեզում։ Գիշերները քաղդրագիտության ձեռնարկի կամ ֆիզիկայի դասագրքի առաջ նըստած լուսացնելով, առավոտները դասերին հաճախելուց հետո մենք վազում էինք թաղերը՝ անդրադիտության խմբակներում պարապելու համար, կոմերիտական շաբաթօրյակները մյուս կողմից էին մեզ հրապուրում, իսկ շեֆ գյուղում ագիտակա-պիեսներով բեմ բարձրանալն արդեն մեր սիրած զբաղմունքն էր։

Մենք ագահությամբ ու քաղցած մարդու շտապողականությամբ կլանում էինք գիրն ու գրականությունը և հաճախ բաց դասագրքի առաջ նստած երազում մեծ մարդ դառնալ և միաժամանակ ափսոսում էինք, թե ինչու ավելի վաղ չենք ծնվել, որ հնարավորություն ունենանք կռվելու սովետական կարգերի հաստատման համար, ինչպես կռվել էր Ղուկաս Ղուկասյանը՝ մեր եղբայրների, մեր հպարտության առարկան։

Աղմկոտ ու բազմազբաղ անցավ մեր ուսումնառությունը միջնակարգ դպրոցում։ Հետո կյանքը մեզ տարավ տարբեր ուղղություններով։ Բագրատն իբրև գյուղատնտես մեկնեց գյուղ՝ աշխատելու ի բարօրություն այն մարդկանց, որոնք նրան ուսման էին ուղարկել։ Նոր կազմակերպված կոլխոզում կոմերիտական գյուղատնտեսի աշխատանքը բարդ էր, դժվարին, բայց և ոգևորող։ Գրքերից ու ուսուցիչներից ստացած գիտելիքները նա իսպառ դրեց հայրենի կոլտնտեսության ամրացման ու բարգավաճման գործին։

Սիրում էին տարեց ռանչպարներն իրենց միջից դուրս եկած անմորուս, բայց գիտուն գյուղատնտեսին, որի խորհուրդներով նոր ձևեր էին կիրառում իրենց աշխատանքի մեջ։ Հետո նոր կարգեր եկան Բագրատին փոխարինելու և աշխատանքում կոփված կոմերիտականը մեկնեց ուսումը կատարելագործելու։ Մոսկվայի Տիմիրյազևի անվան Գյուղատնտեսական Ինստիտուտը սիրով ընդունեց հեռավոր Հայաստանից եկած երիտասարդին։ Լարված ու ոգեշնչող աշխատանքի մեջ անցան ուսանողական տարիները մեծ հայրենիքի մեծ մայրաքաղաքում, շրջապատված բազմալեզու և բազմազգ եղբայրակից ուսանողներով, որոնք բոլորն էլ եկել էին կատարելագործվելու, հայրենի գիտությամբ զինվելու և հայրենի ժողովրդի գիրկը վերադառնալու սրբազան նպատակով։

Ու երբ գնացքը ռուսական հարթություններից սլանում էր դեպի հայկական լեռնաշխարհը, իր հետ բերելով երիտասարդ տիմիրյազևականին, երիտասարդի մտքի պատուհին բարձրանում էին կանաչ այն պուրակները, այն փարթամ ծաղկանոցներն ու միշուրինյան այգինները, որ պիտի աճեին իր ձեռքի տակ։

Բայց դեռ նոր էին բողբոջել Բագրատի պատվաստած միշուրինյան տունկերը, երբ հայրենի երկնքում պայթեց նենգ թշնամու ռումբը։ Հայկական լեռնաշխարհից մինչև Բեռլին քայլեց զինվոր Բագրատն ու իր ճանապարհին շատ ավերված այգիներ, տրորված ծաղկանոցներ, հրկիզված կոլխոզական դաշտեր տեսավ։ Ու նրա մեջ ծխած, բոցավառվեց անձնական ու հասարակական վիշտն ու վիրավորանքը, վրեժն ու ատելությունը՝ թշնամու նկատմամբ։

Ընկավ եղբայրը՝ խիզախ դնդապետ Լևոն Հակոբյանը, մահացավ ծերունի հայրը, իսկ զինվոր Բագրատը դեռ կռվում էր հանուն հայրենի հողի ազատության։ Ու եղավ այն, ինչ պիտի լիներ. հաղթանակեց սովետական արդարափայլ զենքը, և զինվորը տուն դարձավ՝ հրկիզված հեռուներում թողնելով եղբոր անանուն շիրիմը և սրտում բերելով այն հաստատ հավատը, որ ինքը միլիոնների հետ ոտքի կհանի հայրենի գյուղատնտեսությունը։

Եվ ահա կանգնած է նա ծաղիկների ու բողբոջած ծառերի աշխարհում։ Շուրջը անուշ սոսափյունով օրորվում են բազմատեսակ ու բազմանուն ծառերը. նրանցից մեկը բերված է հեռավոր Կալիֆորնիայից և կոչվում է սեկվոյա, մյուսը՝ ձիաշագանակենին՝ բերված է Հունաստանից, ծառեր կան հարավային Աֆրիկայից, հեռավոր տունդրաներից, Եգիպտոսից ու Ղրիմից, Սիբիրի տայգաներից ու Վրաստանի լեռներից և ծառեր, որ բերված են հենց ուղղակի մեր հայկական անտառներից։ 500 տեսակից ավելի են այդ ծառերը, որ մշակվում են, ընտելացվում մեր երկրի կլիմայական պայմաններին և աստիճանաբար տարածվում մեր կոլխոզական այգիներում ու քաղաքների պուրակներում, ծառաստաններում։

Քսան տարի առաջ Բագրատ Հակոբյանը անուս գյուղական պատանի էր, և շատ բան վայրի ու անմշակ էր մեր հայրենի հողում։

Մեր ոտքի տակ փռված է բուսաբանական այս փարթամ այգին, որ մանրանկարն է մեր սոցիալիստական գյուղատնտեսու-

Իմ ոտքերի տակ ես չգիտեմ, քանի տարի հետո կյանքը ինձ նորից կհանդիպեցնի՞ բազրատին, թե ոչ, բայց հաստատ գիտեմ, որ ո՛վ էլ անցնի մեր կոլխոզական դյուղերով ու ինդուստրիալ քաղաքներով, պիտի չցավի հպարտ մի երջանկությամբ, երբ տեսնի, թե որքա՜ն գեղեցիկ են մեր ծառազարդ փողոցները, մեր կանաչ ու փարթամ պուրակները, կոլխոզական հուժկի այգինները, մեր ծաղկազարդ ու խաղաղ հայրենիքը։

———

ՎԱՍՏԱԿ

Սոցիալիստական աշխատանքի հերոս
Կոմերիտուսի Մարիամ Մարտիրոսյանին

Տասը օրեր են։ Կրկին
Այս օրերին հուրթև
Բեղուն դաշտերի միջին
Դու ես կանգնել իմ դեմ։
Քո մաքառումն անհաս
Պայքար է ու գրոհ։
Ընդունիր երգն իմ այս
Հանց Փոխանցիկ Դրոշ։

Շուրջս կյանքն է ինդում
Համայքներով անմար,
Շեփորում են անդուլ
Հազա՜ր վին ու քնար,
Ով լսում եմ ես միշտ
Սրտիս ձայնը մաքուր
Մանկանս պես անվիշտ
Աղմկում է անլուռ։

—Պոետ, երգի՛ր, երգիր
Գալիքի պես պայծառ,
Երգի՛ր նրանց, ովքեր
Ավյուն, ջանք ու քանքար
Նվիրել են մեր վեհ,
Մեր լույս ապագային

Ու մղում են ի վեր
Կյանքի անթեք ուղին...

Եվ ուզում եմ երգեմ
Քո մաքառման հարմար,—
Այդ բերքն է քեզ բերում
Անմահ փառք ու անուն,
Քանզի երկրիս համար
Քո վաստակի բերքը
Նոր ընդվզում, պայքար
Խոյանք ու վերելք է։

Եվ օրերին այս տապ
Հայացքիս դեմ ահա,
Դաշտերի մեջ անափ
Դո՛ւ ես կանգնել հիմա,
Քո մաքառումն անսանձ
Խիզախում ու դրոհ,
Դ՛ե, ընդունիր երգն այս
Հանց Փոխանցիկ Դրոշ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՊԱԿԵՋՈՒՅՆԵՐԻ ՄՈՏ

Երևանի Տրամվայի պարկի դիմաց հպարտորեն վեր է բարձրացել բազմահարկ մի շենք։

Մուլիտ-ապակու գործարանն է դա, որին կարելի է տալ նաև երիտասարդական գործարան անունը։ Այստեղ աշխատող բանվորության կեսից ավելին՝ երիտասարդներ ու կոմերիտականներ՝ անձնվիրաբար առաջ են մղում ռեսպուբլիկայի համար բոլորովին նոր արտադրության—ապակեձուլման գործը։ Ամբողջ Միության մեջ, լուսամուտի ապակու էլեկտրահալման առաջին գործարանն է այդ։

Սակայն ո՞վքեր են այդ մեծ գործի պիոներները. երկու երիտասարդ ինժեներներ՝ Մարիա Բաբաջանյանը և Վահենտին Մինասյանը։ Նրանց է վերաբերում ապակու արդյունաբերության մեջ էլեկտրահալման եղանակը յուրացնելու և էլեկտրավառարանների նոր կոնստրուկցիան մշակելու ու կիրառելու պատիվը։

Այդ երկու ինժեներների նախագծի և նրանց փորձերի հիման վրա Մուլիտ-ապակու գործարանի նախկին ինժեներ Ֆ. Էնտելիսը կառուցեց եռաֆազ հոսանքի ապակու հալման վառարան՝ իր տեսակի մեջ առաջինը Միությունում։ Ահա թե ինչպիսի՞ մեծագույն նշանակության գործի համար մեր երեք ինժեներները՝ Բաբաջանյանը, Մինասյանն ու Էնտելիսը արժանացան ստալինյան լաուրեատի բարձր կոչմանը։

Ինժեներ Մ. Բաբաջանյանն ավարտել է Երևանի Մյասնիկյանի անվան դպրոցը, այնուհետև՝ Երևանի Պոլիտեխնիկ ու Մենդելեևի անվան Մոսկվայի Քիմիական ինստիտուտները։ Այժմ էլ նա հմտորեն ղեկավարում է Երևանի ապակետարայի գործարանը։ Այստեղ աշխատող բանվորության և ինժեներա-տեխնիկական կազմի մոտ 70 տոկոսը երիտասարդներ են։ Կոլեկտիվի ջանասեր աշ-

խառանքի և հմուտ ղեկավարության շնորհիվ թե՛ պատերազմական լարված տարիներին, և թե՛ նրանից հետո, այստեղ մշտապես կատարվել ու դերակատարվել են պլանները։

Ընթացիկ տարին գործարանի կյանքում նշանավոր է նրանով, որ ռեսպուբլիկայում առաջին անգամ այստեղ գործի դրվեց ապակե իրերի մշակման «Կիսաավտոմատ» անունով մեքենան։ Այսպիսով հնարավոր եղավ ամբողջովին հրաժարվել սևագործ վարպետի ֆիզիկական ծանր աշխատանքից, խոշոր չափով բարձրացնել հերթափոխության արտադրողականությունը։ Բարձր է այդ մեքենայի արտադրած ապակեստարայի որակը։ «Կիսաավտոմատը» դործի գցեց և այժմ էլ աշխատեցնում է կոմերիտական այն բրիգադը, որի ղեկավարն է Վազգեն Օհանյանը։ Այս բրիգադը ստեղծագործ մրցակցության է ծավալել կոմերիտմիության պանծալի 30-ամյակի պատվին և վերջին շրջանում ամեն մի հերթափոխություն իր պլանը կատարում է 150—160 տոկոսով։

Բանվոր երիտասարդության ողջ եռանդն ու ուշադրությունը մշտապես պահվում է մոբիլիզացված վիճակում։ Այստեղ մարդկանց սովորեցրել են ապակին գործածել խնայողությամբ։ Այժմ նախատեսվածից երկու անգամ պակաս խառան է տրվում։ Այս միջոցառումների շնորհիվ երիտասարդների աշխատավարձը վերջին շաբաթներին կրկնակի բարձրացավ։

Գործարանի, նրա երիտասարդության այս հաջողությունները նախ և առաջ կապված են գործարանի դիրեկտոր՝ պլխավոր ինժեներ Մարիա Բաբաջանյանի անվան հետ։ Նա երիտասարդությանը դիշեր-ցերեկ համառորեն դինում է առաջավոր տեխնիկայով։ Ահա թե ինչու երիտասարդությունը սիրում է իր նախաձեռնող, խիզախող մտքի տեր դիրեկտորին։ Չէ որ երկար տարիների ընթացքում քրտնաջան, փորձնական աշխատանքներից հետո սխատեմատիկ արտադրության անցան միայն և միայն երիտասարդ ինժեներ Բաբաջանյանի և Մինասյանի փորձերի ու կոնստրուկցիաների կիրառման շնորհիվ։

***

Գիշեր-ցերեկ Մուլիտ-ապակու գործարանում մեծ եռուզեռ է, ինչպես անբուն փեթակում։ Երբ էլ անցնեք այս թաղերով, անդադար լսվում է ապակեձույլ «Ֆուրկո» հնոցը, որի շուրջն անընդհատ եռանդով աշխատում են խանդավառ երիտասարդների ու կոմերիտականների բրիգադները։

Կոմերիտական, երիտասարդ ապակեձույլները դեռ ամիսներ առաջ կատարեցին իրենց առաջին խոստումը—մոտ երկու տարվա փորձնական աշխատանքից հետո վերջապես գործարանն անցավ պլանային արտադրության։ Ահա քանի ամիս է՝ երիտասարդ ապակեձույլները տալիս են լուսամուտի բարձրորակ ապակի մեր Ռեսպուբլիկայի կարիքների համար։

Այս գործարանի կոմերիտական ընտանիքն ամենամեծ հոգսը տեխնիկայի տիրապետումն է։ Եվ նրանք բոլորը, որ այս գեխի բացման առաջին օրերին սևագործ բանվորություն էին անում, մտան տեխնիկայի տիրապետման խմբակները։ Այժմ այդպիսի խմբակներ կանոնավոր գործում են՝ ապակու, մուլիտի, մեքենայական և էլեկտրոցեխերում։ Համառ ուսման ու արտադրական աշխատանքի քրտնաջան ամիսներն իզուր չանցան։ Նախկին շարքային բանվոր-կոմերիտականներ Սահակյան Այվազյանը, Գրիգոր Անտոնյանը, Սերգեյ Մինասյանն աշխատում են որպես 2-րդ կարդի վարպետներ, իսկ Վալոդյա Մալխասյանը՝ առաջին կարգի։

Կոմերիտականների այս մեծ կոլեկտիվում ամենքն էլ աշխատում են ջանասիրաբար։ Ապրում են ու շնչում միևնույն հույզերով ու հույսերով։ Երեկվա բանվորն այսօր վարպետ է, աղվամազը շուրթերին երեկվա ամուրին՝ այսօր մեծացել, առնականացել, մտածում է, թե ինչպե՞ս կատարելագործվի նոր մասնագիտության մեջ։ Նա մտածում է նաև ընտանիք կազմելու, սիրած աղջկա հետ քաղաքարապմունքից հետո կինո կամ թատրոն գնալու մասին։

Մենք էլեկտրաձուլման գործարանի սիրտը կազմող գեխումն ենք, հրաշեկ կրակի ուժից վիթխարի թափով հևացող ու տենքացող «Ֆուրկո» վառարանի մոտ։

Նոր հերթափոխությունը դեռ գործի չէր անցել, դեռ չէր սկըսվել սուլիչի քաղցր կանչը, երբ գեխ մտավ բարձրահասակ, ճեր-

մակադեմ, բայց լրջատես մի երիտասարդ. թավ հոնքերի տակից նրա սև, խոշոր աչքերը խորհում, ասես մի բան են վճռում: Դա կոմերիտական բրիգադիր Ստեփան Այվազյանն է, անուն հանած, բոլորի կողմից սիրված ու ճանաչված կոմերիտական վարպետներից մեկը:

Ջեռքը արագ դցելով արահագուստին և ճանապարհին հագնելով՝ նա մոտեցավ վարպետ Խոխլովին: Աղմուկի մեջ նրանք միմյանց բարևեցին գլխի լուռ շարժումով և թեթև, սիրալիր ժպիտներով: Վարպետի և օգնականի այդ դռապ ժպիտներից ասես շրջապատում տարածվեց նրանց փոխադարձ սիրո ու հարգանքի ջերմությունը: Կանգնելով կողք-կողքի՝ նրանք սկսեցին հնոցի մեջ ձողով ղեկավարել հրակայուն նավակը, որի օգնությամբ ձև առնալով դանդաղ վեր է բարձրանում շիկացած, բաց-վարդագույն ապակին:

Խոխլովն իր տեղը, «առաջավոր դիրքը» շատով զիջում է օգնականին: Վերջինս սկսում է համարձակ ղեկավարել ձուլման պրոցեսը: Նայելով իր օգնականին՝ վարպետի դեմքով սահում է մի բերկրալի ժպիտ, սեփական աշխատանքի պտուղը տեսնող մարդու երջանկավետ ժպիտ... Դեռ մի քանի ամիս առաջ էր, որ Այվազյանը ոչինչ չէր հասկանում «փուրկո» մեքենայից: Իսկ այժմ նա ոչ միայն բացատրում է աչքի համար աննկատելի շատ պրոցեսներ, այլև թափանցում նրա խորքը: Նա արդեն գիտե, թե ինչպե՞ս է կազմվում խառնուրդը (շիխտան), գիտե, թե ի՞նչ պետք է անել, որ չհոտվի շիկացած ժապավենը, գիտե, թե ե՞րբ կարելի է բարձրացնել, կամ՝ ե՞րբ, ի՞նչ չափով բաց թողնել պաղ ջրի հոսանքը:

Վարպետն ուշադիր հետևում էր հնոցի ներսին, երբ շանթահարվածի պես ցնցվեց նա ու ընդոստ շարժումով մոտեցավ օգնականին: Երևի վրիպե՞ց աս... Մոտենալով օգնականին՝ կիսով կանգնեց նրա կողքին և նրա ձեռքն առնելով իր ձեռքի մեջ, այդպիսով ասես ուժ հաղորդեց նրան, նրա մեջ տեսնելով իր փոխարինողին:

Այդ ռուս հաճելի մարդու՝ Խոխլովի բոունցքը կոփվել է շատ հնոցների բոցեղեն լեզուների ծեծկոմներից: Այո՛, սա առաջին հնոցը չէ, որի առաջ լուսամոտի ապակի է ձուլում նա և երիտասարդ կադրեր պատրաստում:

Շուտով, շա՛տ շուտով Ստեփանը, իր կոմերիտական ընկեր վալոդիայի նման, արդեն առանց վարպետի, ճենակ կկանգնի հնո-

ցի առաջ և համարձակ կղեկավարի ձուլման բարդ պրոցեսը։ Համեմատաբար կարճ ժամանակում Ստեփանն անցավ շարքային բանվորից դեպի վարպետի օգնականը տանող ճանապարհը և քիչ ժամանակ է մնացել, որպեսզի աշխատի որպես վարպետ։ Նա տվել է այդ խոստումը և կկատարի։ Բայց ինչու՞ միայն Ստեփանը։ Տեխնիկան տիրապետելու խոստումներ են տվել գործարանի շատ երիտասարդներ և նրանք կկատարեն իրենց խոստումը։

***

Արդեն ուշ երեկո էր, երբ մենք հրաժեշտ տվինք և հեռացանք խանդավառ երիտասարդների այս համերաշխ, անսպառ եռանդով լեցուն կոլեկտիվից, մտածելով թե դեռ ինչե՞ր պետք է անի սովետական պայծառ երիտասարդությունը իր մտքի և հոգու ազնիվ ու խիզախ թռիչքներով։

ԵՐԳ ԿՈՄՍՈՄՈԼԻՆ

Քո մեջ գարուն ու սեր ունես,
Կյանքի վարար հույզեր ունես,
—Ջան, կոմսոմոլ, կարիճ որդի
Հերոսամայր ժողովրդի։

Մրրիկների հովում ծնված,
Դու Լենինյան հրով սնված,
—Ջան, կոմսոմոլ, կարիճ որդի
Հերոսամայր ժողովրդի։

Հայրենիքի գոռ մարտերում
Կյանքդ ես սիրով նվեր բերում,
—Ջան, կոմսոմոլ, հերոս որդի
Հերոսամայր ժողովրդի։

Հազար փառք մեր հորը անգին,
Մեր լուսատու Արեգակին,
—Ջան, կոմսոմոլ, հերոս որդի
Հերոսամայր ժողովրդի։

——

ԿՈՄԵՐԻՏՈՒՀԻՆ

Ես հիշում եմ մանրիմ
Երեկոն պայծառ,
Հետո նախշուն ձեր այգին
Շուրջը թուփ ու ծառ։

Ու այն մարտերն եմ հիշում,
Ուռենին քնքուշ,
Եվ մեր սերը՝ էլինա,
Որ դարձել է հուշ։

Միշ հետ մարտի դուրս եկար՝
Ջինքը քո ձեռքին,
Երբ կռվում էր խումբը մեր
Դոնի եզերքին։

Հետո ընկար, էլինա,
Մարտերում դաժան,
Անգութ մահին դու եղար
Ընկեր անքաժան։

Անցավ աղջիկն անտրտում
Ու հիմա չկա,
Հուշն եմ պահել իմ սրտում
Այն լավ աղջկա։

Դու անցել ես, էլինա,
Իսկ ես հիմա կամ,
Քեզ երբեք չեմ մոռանա,
Իմ լավ բարեկամ։

Հիմա կյանքը դարձել է
Ուրախ ու խնդուն,
Գիտեմ՝ որքան էլ կանչեմ
Էլ չես դառնա տուն։

***

Կոմերիա էր նա ջահել
Սիրով անտրտում,
Նրանից հուշ եմ պահել
Ջահել իմ սրտում։

———

ԿՈՄԵՐԻՏՈՒՀԻ ՍԻՐՎԱԾՊ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

...Այս իմ գյուղն է հայրե՜նի, ուռենազա՜րդ, դեղե՜ցիկ,
Օրորվում են կապույտում բարդիները ալացիկ,
Նրա շուրջը այգիներ, ուր խաղողն է քաղցրանում.
Նրա գրկում հայրենի իմ տնակն է բարձրանում։
Այս իմ գյուղն է հայրենի, բազմած դեսի եզերքում,
Տրակտորը շոգեշունչ նրա դաշտերն է հերկում
Շարքացանը՝ նռնահատ ոսկի ցորեն է ցանում,
Ճմլվում է խաղողը կոլխոզային հնձանում։
Հսկայական կալսիչը կալում կալսում է բրինձ
Ու կալի մեջ իմ սիրած աղջիկն է լուռ ժպտում ինձ։

...Ահա դաշտը բամբակի կնգուղները կիսաբաց,
Փաթիլները վաղորդյան բյուրեղաշիթ շաղով թաց,
Կարծես քուլա են ամպի իջած ամպշող երկնքից,
Այնքա՜ն մաքուր ու ճերմակ, այնքա՜ն թեթև ու անբիծ,
Որ թվում է հայրենի այս արտերի կանաչին,
Վար է իջել երազյա, երկնի ձյունը առաջին։
Հավաքում են բամբակը աղջիկները դեռատի,
Բամբակենու այս արտը հողամասն է Սիրվարդի։
Նրա օգակն այս հողը մշակել է ու ջրել,
Ամեն առնկը մայրական խնամքով է գուրգուրել,
Եվ Սիրվարդի օգակի ջանքը իզուր չի անցել,
Կնգուղները հանց կոկոն ճերմակ վարդեր են բացել։
Հավաքում են բամբակը աղջիկները դեռատի
Եվ հնչում է երջանիկ երգը սիրո, կարոտի.
Հավաքում է Սիրվարդը փաթիլները ձյունաթույր.
Արադածի գեփյուռը դեմքին տալիս է համբույր։

Նա ձեռներով իր նրբին, ձեռներով թուխ ու բարակ
Կնգուղներից բամբակը պոկում է վարժ ու արագ։
Վաղը բամբակն այս ճերմակ քաղաքները կդնա,
Այնտեղ չքնաղ սիրուհուս համար զգեստ կդառնա,
Թուղթ կդառնա սպիտակ, որի վրա սիրո երգ
Ես կգրեմ կարոտով ու խնդությամբ անհուրք։
Վաղը բամբակն այս ճերմակ դառնալու է չոր վառոդ,
Մա՛հ է տալու թշնամուն, ևթե որ նա հանդգնի
Ու լուսավոր մեր երկրին արնոտ ձեռներն իր մեկնի։

ԿՈՄՍՈՄՈԼԻ ՏՈՄՍԸ

Հայրենիք իմ անուշ, հայրենիք վսեմապանծ,
Քո թշնամու հանդեպ սիրտը վրնժով լի,
Կռվում էր քաջ որդիդ, ինչպես անգին մի գանձ
Գրպանի մեջ պահած տոմսը կոմսոմոլի։

Բայց մի անգամ քաջին ահեղ մարտում խոցեց,
Դավադիր թշնամու դնդակը թունալի,
Եվ արյունը հոսեց և արյունը օծեց
Հավերժ նվիրական տոմսը կոմսոմոլի։

Ապաքինվեց վերքը, նորից մարտի դնաց։
Աղատվեց հարազատ մեր հողը սիրելի.
Հայրենական կռվից նա եկավ հաղթական,
Գրպանում արյունոտ տոմսը կոմսոմոլի։

Հայրենիք, քո գրկում գարուն է վարդավառ
Հնչում է երջանիկ երգը հուռովելի,
Նա քո հողն է հերկում դրպանում արնավառ
Հերոսության նվիրվոլ տոմսը կոմսոմոլի։

ԳՅՈՒՄՈՒՇԳԷՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ

Լայնատարած, ասֆալտապատ ճանապարհով մեքենան սլաում է Երևանից Սևան։

Հեռվում, լեռնաշխարհի կապույտ ֆոնի վրա, դուք տեսնում եք նավթային վիշկանները հիշեցնող վիթխարի, թևատարած աշտարակներ, որոնք հեռավոր բարձունքների վրայով մշտապես ուղեկցում են ձեզ մինչև Ախտա ու Սևան։

Մեր երկրի էլեկտրիֆիկացիայի և ինդուստրացման խորհրդանիշ այդ տիրական, երկաթյա աշտարակների վրայով, շուտով բարձրավոլտ հաղորդման էլեկտրական գիծն է անցնելու՝ լույս ու էներգիա տանելով մեր քաղաքներն ու գյուղերը...

Ճանապարհից այն կողմ, թողնելով խճուղին, մենք թեքվում ենք դեպի ձախ և ելնում հանդիպակաց բարձունքը, ուր մի խումբ մարդիկ նոր աշտարակ են կանգնեցնում։ Մոտենում ենք նրանց։ Բոլորն էլ երիտասարդ բանվորներ են՝ բրոնզագույն դեմքերով, կապույտ մայկաներով, արևախանձ, մկանուտ բազուկներով։ Ամենից ավելորդ եռուզեռի յուրաքանչյուրն արագ, ռիթմիկ ու ճկուն շարժումներով իր գործն է կատարում։ Մի քանիսը երկաթյա աշտարակի մասերն են իրար ագուցում, մի քանիսը պտուտակավոր պնդօղակներն են ամրացնում, ոմանք աշտարակի հիմքին խճաքար և ցեմենտ են լցնում։

Կոմերիտական բրիգադիր Շամխալ Սիմոնյանի երիտասարդական բրիգադն է դա, որ հռչակված է նոր հնգամյակի խոշորագույն շինարարության՝ Գյումուշգէսի Ախտայի շինմասում։

Այստեղ, կառուցողների մեջ, արդեն տիրապետող լոզունգ է դարձել.

— Հասնել Շամխալ Սիմոնյանի երիտասարդական բրիգադի տեմպին...

Այսօր բրիգադն առանձնապես լարված է աշխատում. նրանք մտնելով Համամիութենական Լենինյան Կոմերիտմիության 30-ամյակի պատվին ծավալվող սոցիալիստական մրցության մեջ որոշել են պլանի կատարման նոր ռեկորդ սահմանել։

Երիտասարդ բրիգադիրն անհանգիստ տղա է. նա ոչ միայն ղեկավարում, այլ և անձամբ օգնում է մերթ մեկին, մերթ մյուսին։

Երբ մենք բրիգադիրից խնդրում ենք ամենաառաջավորների անունները թվել, նա շեշտակի նայում է մեզ, երեսից սրբում քրտինքի կաթիլները և հանդիստ պատասխանում.

— Իմ բրիգադի բոլոր աշխատողներն էլ ստախանովականներ են՝ մեկը-մյուսից լավ։ Տեսեք, աշխատանքի ժամը լրացել է, բայց նրանցից ոչ մեկը չի ուզում թողնել գործը, մինչև այս աշտարակին էլ չհանդնեցնենք... Ոչ մեկը չի խնայում իր ուժը... Իմ բոլոր կոմերիտականների համար աշխատանքը դարձել է սրտի գործ...

Այդպես էլ Սիմոնյանը մեզ առանձին անուններ չտվեց։

— Եթե շատ եք ցանկանում գրեցեք ամբողջ բրիգադի մասին։ Սրանք բոլորն էլ «միրավոյ» տղերք են,—ասաց նա։

— Իսկ բոլորից «միրավոյը» մեր բրիգադիրն է,—ավելացրեց ցեմենտ շաղախող մի կոմերիտական, որ և՛ աշխատում, և՛ հետևում էր մեր խոսակցությանը։

Ապա բրիգադիրը բողոքեց, որ երբեմն ժամանակին աշտարակներ չեն հասցնում իրենց, որի հետևանքով պլանը թերակատարում են... 150—200 տոկոսից ավելի չեն կարողանում կատարել...

***

Աշխատանքից հետո, երբ Սիմոնյանը հայտնվում է բանվորական քաղաքում, կառուցողները սիրալիր հայացքով հետևում են նրան։ Իսկ շինարարական մասի պետ ընկեր Գրիգորյանը նրա տեսքից երջանիկ ու հպարտ, ինչպես հրամանատարն իր հերոս զինվորին տեսնելիս, դեռ հեռվից սրտալի բացագանչում է.

— Ինչպե՞ս են գործերը, Շամխա՛լ... Կառուցո՞ւմ ենք...

Երիտասարդական բրիգադի բրիգադիրը պիտի շինարարության պետի այդ հարցի իմաստը։ Գրիգորյանն ուզում է իմանալ,

թե Շամխալի կոմերիտականներն ինչքանո՞վ են կատարել իրենց օրվա պլանը։

Սիմոնյանն այս անգամ անմիջապես չի պատասխանում պետին։ Դոհունակության ժպիտը ցոլում է նրա կանաչավուն աչքերում՝ պայծառացնելով արևավառ դեմքը։ Այդ բերկրալի, պայծառ արտահայտությունն ասում է, որ օրվա գրոհը հաջող է անցել, արտակարգ կերպով հաջող։ Նվ ինչպե՞ս կարող էր հաջող չանցնել, երբ նրա երիտասարդ մարտիկներից շատերը Հայրենական Մեծ պատերազմին հասել են մինչև Բեռլին...

Թեև արդեն ալեհեր, բայց առույգ ու պատանու նման անհանդիստ շինարարության պետը՝ հիդրոէլեկտրակայանների փորձված կառուցող ինժեներ Միհրան Գրիգորյանը նկատում է, թե բրիգադիրն ինչ-որ լավ բան ունի ասելու, այսօր առանձնապես լավ հաղորդում ունի անելու, բայց իրեն զսպում է։

«Հիմա ես քեզ խոսեցնել կտամ»,—մտածում է Գրիգորյանը և թաքցնելով իր միտքը, խորամանկորեն ավելացնում.

— Երևի գործերդ հաջող չե՞ն գնացել, Շամխալ... Իսկ այսօր Խարբերդյանի բրիգադն իր պլանը կատարել է 200 տոկոսով։

Խոսքը դարբնոցի բրիգադիր կոմերիտական հայրենադարձ Գրիգոր Խարբերդյանի մասին էր, որը նույնպես շինմասում հռչակված է իր ստախանովյան աշխատանքով։

Սիմոնյանը զգում է, որ Խարբերդյանի օրինակով պետն ուզում է իրեն «գայթակղեցնել» և շուտ պարզել օրվա պլանի կատարման տոկոսը։

Բայց նա չի «գայթակղվում»։

— Մենք էլ կամաց-կամաց մոտենում ենք Խարբերդյանին ընկեր Գրիգորյան,—ինքնագոհաբար, խորամանկ ժպիտը աչքերին, խոսում է Սիմոնյանը և մի պահ լռելուց հետո ցածրաձայն, բայց զսպված հրճվանքով ավելացնում.

— Այսօր երեք աշտարակ ենք կանգնեցրել, ընկեր Գրիգորյան...

Շինարարության պետը չի ուզում հավատալ իր լսողությանը։ Ինչպե՞ս թե...

— Երեք ասացի՞ր,—ստուգում է նա իր լսողությունը։

— Այո՛, ընկեր Գրիգորյան...

Այդ միջոցին պետն անզուսպ բերկրանքով փութաթափվում է հերթապարտ բրիգադիրին.

— Շնորհակալությո՛ւն, Շամխալ, շնորհակալությո՛ւն բրիգադիդ բոլոր անդամներին,— ուրախ հուզումից փոթորկված խոսում է Գրիգորյանը, իր ղույդ ափերի մեջ պինդ սեղմելով բրիգադիրի կոշտացած ձեռքերը...

***

Ախտալի շինմասի նորակառույց ակումբում երեկոյան հավաքվում են ստախանովականները։ Նրանց ճնշող մեծամասնությունը երիտասարդներ են։ Ելույթ է ունենում Գյումուշգէսի շինարարության պետ ընկ. Աղաբաբովը։ Ջերմ ու պատկերավոր լեզվով նա խոսում է Սևանի կասկադի այդ ամենահզոր հիդրոէլեկտրակայանի շինարարության այսօրվա և վաղվա մասին։

Պայծառ հեռանկարները ոգևորության ալիք են բարձրացնում դահլիճում։ Խոսք են վերցնում երիտասարդ ստախանովականները և Գյումուշգէսի շինարարությունն արագացնելու համար հանձն են առնում նորանոր պարտավորություններ։

Ահա քեմ է բարձրանում երիտասարդական բրիգադի կոմերիտական բրիգադիր Շամխալ Սիմոնյանը։ Դահլիճը նրան դիմավորում է ջերմ զիգացումներով, պայծառ հայացքներով։

— Իմ բրիգադի կոմերիտականների կողմից ես խոստանում եմ ամեն օր կանդնեցնել երեք աշտարակ...— սկսում է նա իր ելույթը։

— Այդ արդեն ռեալ խոստում չէ, այդ անհնարին է, Շամխալ,— ներքևից ընդմիջում է մեկը։

Էլեկտրական ուժեղ լույսի տակ մի թապուն ժպիտ է նկատվում կոմերիտական բրիգադիրի դեմքին։ Նա միառժամ, կարծես համրացած, լուռ նայում է ռեպլիկա տվողին, երկար նայում է ու չի պատասխանում։ Դահլիճում սպասողական դրություն է տիրում։ Այդ միջոցին անակնկալ կերպով տեղից վեր է կենում շինմասի բոլորից սիրված պետը, առաջ անցնում, խուզարկու մի հայացք նետում դահլիճի վրա և ապա ընդհանուր լռության մեջ հպարտ հայտարարում.

— Ընկերներ, Շամխալ Սիմոնյանը, մեր սիրելի Շամխալը, այսօր արդեն կատարել է իր այդ խոստումը... փաստ է. նա կանգնեցրել է երեք աշտարակ... պլանը կատարել է 400 տոկոսով։

Ծափահարությունները ողողում են դահլիճը և երիտ հարյուր զույգ բերկրալի աչքեր մտերիմ ու ջերմ ղգացմունքով դիտում են կոմերիտական բրիգադիրի պայծառացած, արևավառ դեմքը:

— Մենք կկատարենք մեր բոլոր պարտավորությունները, որովհետև մենք Գյումուշգէխի շինարարության շեֆն ենք,—վերջացնում է իր ելույթը կոմերիտական բրիգադիր Շամխալ Սիմոնյանը:

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՍԿԻԶԲԸ

Քառասունվեց թվի աշնան մի առավոտ երիտասարդ բանվոր Գրիգոր Խարբերդյանը Հունաստանից հասավ իր հայրենի երկիրը: Նա կյանքում առաջին անգամ ամուր ու ապահով ղգաց ոտքի տակի հողը և հպարտությամբ համակվեց:

Երբ Հայաստանի մայրաքաղաք Երևանում ականատես եղավ մեծ կառուցման եռուզեռին, նրա սիրտը բաբախեց կարոտի ու երջանկության ղգացումից: Օտար ափերում ինչքան էր երազել անհատանելի այս օրը: Եվ ահա, դեռ մանուկ հասակից երազած այդ օրը վերջապես հասել էր: Գրիգորը կարոտով նայում էր շուրջը, հետաքրքրությամբ ընդգրկում ամեն ինչ և՛ դեպի վեր սլացող գործարանները, և՛ նորակառույցները, և՛ Երևանյան լայնատարած ու ասֆալտապատ պողոտաները, որոնք գիշերները ողողվում էին էլեկտրական առատ, բերկրալի լույսով... Այո՛, այս բոլորը իրականություն էր. ինքը գտնվում էր հոգում փայփայած Սովետական Հայրենիքում՝ վեհափառ Արարատի դիմաց:

Գրիգորն անդիմադրելի մի ձգտում, մի ջերմ ցանկություն ղգաց սրտի խորքում—օր առաջ մասնակցել կառուցման եռուզեռին, իր երիտասարդական բոլոր ուժերը, իր ամբողջ եռանդը նվիրել սիրելի Հայրենիքի ծաղկմանն ու բարգավաճմանը:

Գրիգոր Խարբերդյանին առաջարկեցին գնալ Գյումուշգէխի շինարարությունը՝ իր մասնագիտությամբ աշխատելու համար:

Նա ուրախությամբ ընդունեց այդ առաջին իսկ առաջարկը:

Խարբերդյանն իրեն ավելի հպարտ ու երջանիկ ղգաց, երբ աշխատանքի վայրում նրան բացատրեցին, որ ինքը մասնակիցն էր պատմում ստալինյան նոր հնգամյա պլանով նախագծված Սևանի կասկադի երրորդ, ամենահզոր հիդրոէլեկտրակայանի շինարարությանը, որն իր կարողությամբ գրեթե երկու անգամ ավելի է լինե-

լու մինչև այժմ Հայաստանում գոյություն ունեցող բոլոր էլեկտրակայանների սահմանված ընդհանուր կարողությունից...

Եվ հայրենադարձ Գրիգոր Խարբերդյանը թևերը քշտեց, մուրճը վերցրեց ձեռքը ու անցավ աշխատանքի։ Բորբոքվեց քուրան, ու սալի առաջ կանգնած՝ մուրճի հարվածներով նա սկսեց ձև տալ երկաթին, պատրաստել այն բոլորը, ինչ որ պահանջում էր շինարարության մեխանիկական արհեստանոցը։

...Մենք զրուցում ենք Գյումուշգեխի Ախտայի շինման պետ ինժեներ Միհրան Գրիգորյանի հետ։ Ես նրանից խնդրում եմ նշել շինարարության մեջ ամենից հայտնի, իրենց նվիրված աշխատանքով բոլորից ավելի աչքի ընկնող մի քանի երիտասարդ ստախանովականների անուններ։

Արդեն ալեհեր, կապտա-կանաչավուն աչքերով շինարարության պետը ժպտում հայացքը հառում է ինձ և արտասանում առաջին անունը։

— Հայրենադարձ Գրիգոր Խարբերդյան...

Նա ոգևորված պատմում է, թե ինչպես Գրիգորն օրըստօրե բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը։

— Չնայած աշխատանքի դժվարին բնույթին,— շարունակում է նա,—Գրիգորն իր ամսական պլանը 150—200 տոկոսից պակաս չի կատարում... Չի պատահել մի դեպք, որ նա ուշացնի մեր պատվերները... Ոչ միայն լավ աշխատող, այլև ընդունակ կազմակերպիչ է... Մենք արդեն նրան վստահել ենք դարբնոցի աշխատանքները ղեկավարելու գործը և նա, որպես բրիգադիր, լրիվ արդարացնում է իրեն։ Այս կարճ ժամանակամիջոցում նա չորս թե հինգ անգամ պարգևատրման է արժանացել... Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին նրա բրիգադը պլանը կատարեց 150 տոկոսով...

Գրիգորի մասին խոսելիս ինժեների դեմքը պայծառանում է, նա հպարտ է զգում իրեն Գրիգորի նման նվիրված ու խանդավառ աշխատող ունենալու համար։

— Այսպիսի մարդկանցով Գյումուշգեխը կարելի է կառուցել,—եզրակացնում է նա։

***

Երբ աշխատանքի ավարտի շչակը տվեց, շինմասի կոմերիտական կազմակերպության կոմիտեի քարտուղարի հետ ես մտա դարբնոց՝ ծանոթանալու խարբերդյանի հետ: Ներսում քուրան դեռ բորբոքված էր: Ամառվա տոթին դժոխային կրակը բաց երախով մեզ էր նայում՝ չերմություն արտաշնչելով և այրելով մեր դեմքը: Մի քիչ հեռու կանգնեցինք մենք: Գրիգորը հրավառ ածուխի միջից հանեց մի շիկացած երկաթ և երկաթե այդ ձողը սալի վրա դնելով՝ սկսեց իր ցանկացած ձևը տալ կակղած մետաղին: Մուրճի ուժգին հարվածների տակ կայծերն առատորեն ցայտում էին չորս բոլորը, և քրտինքը առվակներով ծորում էր ածխափոշուց սևացած Գրիգորի դեմքի վրայից:

— Նորի՞ց լսեցիր շչակը,— այս անգամ դիտողություն արեց կոմիտեի քարտուղարը:

Շինարարությունում արդեն բոլորի համար առած էր դարձել Գրիգորի շչակի ձայնը չլսելու պատմությունը:

— Ընկեր կոմիտեի քարտուղար, այս մեկն էլ կոմերիտական շեֆության հաշվին է, հիմա վերջացնում եմ, այս րոպեիս,— ասաց նա ժպտադեմ և ավելի ուժգին հարվածեց շիկացած երկաթին:

...Մենք երեքով քրտնած դուրս եկանք դարբնոցից: Սրեկոյան Ծաղդաձորի ուռիներից փչող և Զանգվի հունով հոսող քամին հաճելիորեն շոյեց մեր դեմքերը: Կամաց-կամաց մոտեցանք Զանգվի ափին՝ զրուցելու և հանգստանալու համար:

Գետափին նստած՝ կոմիտեի քարտուղարը երիտասարդական ոգևորությամբ նորից սկսեց նկարագրել Գյումուշգեխի շինարարության հեռանկարները: Մեր ռեսպուբլիկայի ներկայիս այս մեծագույն շինարարության ճակատը հետզհետե տարածվելու է հիսուն կիլոմետրի վրա՝ ընդգրկելով ժամանակակից տեխնիկայով զինված հազարավոր բանվոր ու ինժեներա-տեխնիկական անձնակազմ: Նոր կառուցվող Սրևան-Գյումուշգեխ երկաթուղով ամեն օր շինարարության վայրն է ժամանելու 40—50 վագոնից բաղկացած մի գնացք՝ բեռնված շինանյութով...

— Այստեղ լճափնյա դեղեցիկ քաղաք է լինելու,— քարտուղարին լրացնում է Գրիգորը:

— Ինչպե՞ս թե լճափնյա,—ընդհատում եմ նրան,—Սևանը հեռու է այստեղից։

— Սևանի մի մասը շուտով բերելու են այստեղ,—թուխ աչքերի խորամանկ ժպիտով ավելացնում է նա և դեպի ոլորապտույտ լեռների մեջ մտնող Ջանգուն պարզելով ձեռքը՝ բացատրում է.

— Ընկեր Գրիգորյանն ինձ պատմել է, որ այս երկու լեռների միջև պիտի վիթխարի պատնեշ քաշվի Ջանգվի առաջ և այստեղ գոյանա արհեստական մի լիճ՝ երկու և կես քառակուսի կիլոմետր տարածությամբ։ Այդ լճից է, որ ջուրն ուժեղ ճնշումով հոսելու է Գյումուշգեխի 12 կիլոմետրանոց հսկա թունելի մեջ... Իսկ այս Աղբյուրակ գյուղն էլ մնալու է լճի տակ... Լճի եզերքին կառուցված պատնեշը կձգվի կառուցվող այս բանվորական քաղաքի ամբողջ երկայնքով,—ցույց է տալիս նա նորակառույց, դեղեցիկ շենքերի շարքը,—իսկ Երևանից հետո գնացքը դեպի Սևան կսուրա լճի ափերով...

Խարբերդյանը երազում է վաղվա մասին և օրվա աշխատանքային հոգնությունն առել հալչում, չքանում է նրա մարմնի միջից...

...ես հետաքրքրվում եմ Գրիգորի ուսման գործով։

Խարբերդյանը պատմում է, որ սովորում է դիշերային դպրոցում և արդեն կամաց-կամաց կարդում է «Ավանգարդ» ու «Սովետական Հայաստան» թերթերը։

— Այստեղ քույրս էլ սկսեց դպրոց հաճախել,—ինքնագոհ ավելացնում է նա։

***

Վերջերս հայրենադարձ Գրիգոր Խարբերդյանը Գյումուշգեխի կոմերիտական կազմակերպությանը դիմում տվեց՝ իրեն Լենինյան կոմերիմիության շարքերն ընդունելու համար։

Դիմումի մեջ, իր կենսապրականը հակիրճ շարադրելուց հետո, նա գրել էր. «Կոմսոմոլը Գյումուշգեխի շինարարության շեֆն է։ Մանելով կոմսոմոլի շարքերը՝ ես ավելի մեծ եռանդով կկատարեմ շեֆական պարտավորությունս, որպեսզի ինչքան հնարավոր է

շուտ էլեկտրական լույս տանք մեր ծաղկող ու սիրելի Սովետական Հայրենիքին: Նա կաշխատեմ այնպես, որ Դյումուշդեխի կառուցումն ավարտող կոմերիտական առաջանավականների շարքում հիշվի նաև իմ անունը»:

Շինման՝ կոմերիտական կազմակերպության կոմիտեի քարտուղարը սիրով ընդունեց դիմումը և անմիջապես քննության դրեց:

Ժողովում Գրիգորին խնդրեցին պատմել իր կենսագրությունը:

Նա ոտքի ելավ, առանց շուրջը նայելու, ներքուստ զգայ երիտասարդ ընկերների իր վրա կենտրոնացած բարեկամական, սիրալիր հայացքները և մի քիչ հուզված, դանդաղ սկսեց պատմել իր մասին, անարև մանկությունը, երբ ծնողների տնտեսական վատ պայմանները փոքրիկ Գրիգորիկին ստիպել էին թողնել դպրոցը և տասնհինգ տարին դեռ չլրացած՝ վերցնել դարբնի մուրճը, անչափահաս հասակում ծանր աշխատանք կատարել օրվա հացը ճարելու համար...

— Ամառները ոչինչ, աշխատանք լինում էր, իսկ ձմեռը աշխատանքները պակասում էին և ես գործազուրկ էի մնում... Գործարաններում ցածր աշխատավարձով թեև աշխատանքներ լինում էին, բայց ինձ գործարան չէին ընդունում հայ լինելուս պատճառով... Հունաստանում հատկապես հայերի հանդեպ գործարանատերերն ու բոլոր ֆաշիստները վատ էին վերաբերվում:

Գրիգորի անկեղծ խոսքերը բոլորը լսում էին լուռ՝ հետաքրքիր հայացքները սևեռած նրա քրտնած դեմքին և էլեկտրական վառ լույսի տակ առկայծուն, սև աչքերին:

— Կյանքի վատ պայմանները, ծանր աշխատանքն ու հայերի հանդեպ հույն արքայականների արհամարհական վերաբերմունքը,—շարունակում է նա,—ինձ մղում էին մտածելու իմ սովետական Հայրենիքի մասին, Սովետական Հայաստան ներգաղթելու և այստեղ ապրելու մասին... Հունաստանում, գերմանական ֆաշիստների տիրապետության օրերին ավելի ուժեղացավ իմ այդ ցանկությունը...

Գրիգոր Խարբերդյանը հուզված ու մտորումների մեջ էր:

Մի դուցե նա մտածում էր ասել, թե կենսագրության մնացյալ մասը անցել է Գյումուշդեխի շինարարությունում և կարիք չկա այդ մասին պատմել, քանի որ բոլոր ընկերները գիտեն...

Այդ միջոցին հնչեց Գրիգորի մտքերն ընդհատող մի ձայն.

— Հարցեր կա՞ն ընկեր Խարբերդյանին...

— Քվեարկեցե՛ք,—լսվեցին բազմաթիվ ձայներ:

— Դե, ուրեմն քվեարկում եմ. ո՞վքեր են համաձայն ընկեր Գրիգոր Խարբերդյանին Լենինյան Կոմերիտմիության շարքերն ընդունելու:

Գրիգորը գլխահակ՝ չնկատեց, թե քանի ձեռք բարձրացավ: Ասես հեռվից, շատ հեռվից նա միայն լսեց շինմասի կոմերիտական կազմակերպության կոմիտեյի քարտուղարի ծանոթ, հարազատ ձայնը.

— Անցնո՛ւմ է միաձա՛յն...

ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

Արագածից փչում էր երեկոյան զովը՝ ալպյան թարմ կանաչի ու վայրի ծաղիկների բուրմունքով ողողելով կապտամշուշ դյուղը: Որպես վիթխարածավալ, սպիտակաքաշ ջրվեժ՝ լեռան գոգավոր լանջով գյուղի վրա էր հոսում ոչխարների ճերմակ հոտը. քիչ ներքևում ծփում էին աշնանացանի փարթամ հասկերը և խճուղու երկայնքով ձգվող հեռագրաթելերին թառած ծիծեռնակներն անհանգիստ ճիչերով լցնում էին իրիկնամուտի խաղաղությունը...

— Տրակտորիստ Վաղոն և Մաթոսենց Սերոն էլ այսօր ֆրոնտ մեկնեցին,—ամուսնուն՝ Պետրոսին մոտենալով վշտալի հաղորդեց կինը:

Նրանք մի պահ լուռ էին: Ամեն մեկը խոսում էր իր սրտի հետ: Հետո կինը շարունակեց.

— Առանց Վաղոյի ու Սերոյի ո՞վ պիտի սևացնի մեր էս հողերը... Տրակտորը որ ծուխ չհանի, մեր գործը շատ դժար կլինի...

Պետրոսն աչքի տակով խորհրդաստ նայեց կնոջը. դողդողացին ալեխառն, հաստ բեխերը:

— Բանն էլ էն է, որ դուշմանին թույլ չտանք հանդցնել մեր տրակտորների և մեր օջախների ծուխը...— շշնջաց նա:

Մարիամն անհանդիստ շարժվեց տեղում։ Ներքին տագնապով շոլացին նրա երազուն աչքերը։

— Հայրի՛կ, թույլ տո՛ւր գնամ Երևան,— դողդողաց նրա ձայնը։

Պետրոսը զարմացած նայեց աղջկա դեմքին, նրա առկայծող աչքերին։ Ոչինչ չհասկացավ։ Ինչպե՞ս թե։ Այս կռվի տարին ի՞նչ Երևան, երբ բոլորը ֆրոնտ են գնում...

— Տղերքը ֆրոնտ են գնում, դու էլ՝ Երևան,— սրտնեղեց հայրը։

— Այո՛, այդ էլ իմ ֆրոնտն է։...

— Չեմ հասկանում,— աղջկան ու ապա կնոջը հարցական ակնարկ դցեց քեռի Պետրոսը։

Մարիամը մի ակնթարթ սրտի դողով նայեց մորը, ապա հորը դառնալով՝ շարունակեց.

— Ասում ես թույլ չպետք է տալ հանդչի տրակտորների ծուխը...

— Հետո՞...

— Հետո, ես կգնամ Երևան, կսովորեմ դյուզմեխանիզացիայի դպրոցում, կվերադառնամ ու կաշխատեմ որպես տրակտորիստ...

Հայրն ու մայրը կարճ հայացքներ փոխանակեցին։ Մարիամը սրտատրոփ սպասում էր հոր վճռին։

Վեհացնող մի ղգացում համակեց քեռի Պետրոսի ամբողջ էությունը։ Նա իրեն հպարտ զգաց աղջկա համար։

Հեռագրաթիելերի վրայից ճոլողելով կապույտ երկինքը սլացան ծիծեռնակները։ Իրիկնային խաղաղության մեջ գյուղի ծայրից արձագանքեց ոչխարների մայուն։

— Գնա՛, աղջի՛կս,— ասաց հայրն ինքնագոհ,— գնա և սովորիր տրակտոր վարել։ Ֆրոնտում դուշմանին զենքով են խփում, թիկունքում՝ աշխատանքով...

... Երևան մեկնելու հանդապարհին Մարիամի հայացքը մեկ էլ կանգ առավ լուռ ու մունջ կանգնած տխրատեսիլ տրակտորների վրա, որոնք դեռ գարնանը հայրենի դաշտն ու անդաստանը երգով ու երջանկությամբ էին լցնում... Նվ թախծալի կարոտով հիշեց տրակտորիստ այն տղին, որ կռվի գնաց՝ սիրո առաջին ծիլերը սրտում...

— Քո տրակտորը շուտով ծուխ կարձակի, վաղո՛,— շշնջաց նա, ու անորոշ հրճվանքից բաբախեց սիրտը։

***

Ուշ աշնան լիալուսին գիշեր։ Զիլհանքով գյուղը խոր քուն էր մտել։ Կես գիշերվա խաղաղությունը խռովում էր միայն հեռավոր դաշտերից հասնող տրակտորի հռնդյունը։

Այդ Մարիամն էր, որ աշնանացարը էր կատարում։

Նրա տրակտորն աշխատում էր լիաթոք, անխափան։ Վարի խորությունն ամեն տեղ պահպանվում էր 24—26 սանտիմետր։ Նվ չնայած գիշերային աշխատանքի դժվարությանը՝ դաշտում ոչ մի տեղ խարակներ չէին թողնվում։

Տրակտորի ղեկը ամուր բռնած՝ հողի կուրծքը ճեղքելով, նա առաջ էր գնում՝ սև ալիքներ սփռելով աջ ու ձախ։ Հետո կոշտացած ափերի մեջ ավելի ամուր սեղմելով ղեկը՝ նա ձայնակցեց իր տրակտորի հռնդյունին.

Տրաքտորը հասավ արտը,
Ապրի ղեկավար մարդը,
Դուշմանի մեջ ընկնի ջարդը.
Ա՛յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր...
Դու՛ մեր հոգի, ջա՜ն տրաքտոր...

Կես գիշերն անց երկինքն ամպեց։ Թուխպը ծածկեց լուսինն ու աստղերը։ Դաշտը խավարեց և դժվարացավ վարի որակին հետևելը։ Մարիամը մի պահ կանգ առավ և աչքաչափով որոշեց հերկած հողը։ Պլանն արդեն գերակատարված էր։ Կարելի էր տուն գնալ ու հանգստանալ, մանավանդ որ սկսեց անձրևել։ Բայց նա որոշել էր առավոտյան անակնկալի բերել կոլտնտեսության նախագահին և բոլոր կոլտնտեսականներին։ Մինչև լուսաբաց նա ուզում էր վարել ամբողջ դաշտը։ Թող առավոտյան բոլորը տեսնեն համատարած սևին տվող արտը և հրճվեն իր հետ միասին։

Այս մտքերով տարված՝ Մարիամն առժամանակ անձրևից պաշտպանվելու համար կուչ եկավ տրակտորի տակ, նոր վարած հողի վրա։ Անձրևը կաթկթում ու ծծվում էր շապիկից ներս։

Նա երկար չսպասեց։ Շուտով ձյունոտ բարձունքներից փչեց սառը քամին, ամպերը լուսնի վրայից արագահոս հեռացան, աստղերը ցրտից դողդողալ պլպլացին երկնքի խորքում ու լիալուսնի շողերը ողողեցին երկիրը։

Աղջիկը նորից բարձրացավ իր տրակտորի վրա։ Ջրհեղեղատեքամին սարսուռ առաջացրեց նրա թաց մարմնում։ Նա ուժգին ցնցվեց, բայց ամուր ձեռներով բռնեց ղեկը և տրակտորը նորից ծխերի քուլաներ արձակելով՝ առաջ նետվեց։

Լուսադեմին ամբողջ դաշտը համատարած ծխում էր ևս ավելի։ Մարիամն ուրախ սրտով մեկ էլ դիտեց աշնանամարը ու հանապարհվեց դեպի դյուղ։ Գլուխը պտույտ էր գալիս։ Տուն հասնելով՝ նա նետվեց անկողին և միայն մի շաբաթ հետո վեր կացավ անկողնից...

***

Անցան պատերազմի դաժան տարիները։ Մեծագույն արհավիրքների միջից Մեծ Նավավարը սովետական նավը հասցրեց հազթանակի նավահանգիստը։ Այդ անմոռանալի օրերին Մարիամ Մարտիրոսյանն իր տրակտորի ղեկը հանձնեց Բեռլինից փառքով վերադարձած շքանշանակիր ռազմիկին։

— Վաղո՛ ջան,— ասաց աղջիկը,— քո տրակտորը հանձնում եմ քեզ ... Պատերազմի տարիներին երբեք չհանդամ նրա ծուխը...

Եվ այնուհետև Մարիամը որպես օդակավարուհի աշխատանքի անցավ դաշտավարական բրիգադում։

Հին, փորձված երկրագործ հայրը ուրախությամբ էր հետևում քանամյա աղջկա ջանքերին։

— Աղջի՛կս,— ասաց նա,—քեզանից շատ շնորհակալ եմ։ Պատերազմի տարիներին դու ինձ պարզերես հանեցիր։ Այժմ նոր պատերազմ է սկսվում Հայրենիքի վերքերը դարմանելու համար... Անհնածները շատ վնաս հասցրին... Պետք է շատ քրտինք թափել... Բայց ամեն ինչից առաջ պիտի սիրել հողը, հասկանալ նրա լեզուն... Հողը, աղջիկս, բարիքների մայր է, ամեն բարիք ծնվում է հողից, եթե դու սիրես նրան լի սրտով ու խնամես հարազատի պես, նա էլ քեզ հարազատ մայրություն կանի...

Մարիամը լուռ ու հուզված լսում էր հորը, զգում իր նոր աշխատանքի պատասխանատվությունը։ Աշխատանքի հանդեպ այդ պատասխանատվությունը նրա մեջ աճել էր մանկուց, և՛ տանը, և՛ դպրոցում, և՛ կոմերիտական ժողովներում։ Հայրենի հողի հանդեպ սիրո նվիրական զգացումներ էր դաստիարակել նրա մեջ մայրենի

գրականությունը, որի մոլի ընթերցողն էր նա դեռ աշակերտական նստարանից։ Ընթերցանությամբ գիշերներ էր լուսացնում՝ ինչպես իր հայրը՝ ինքնուս ու շատ կարդացած քեռի Պետրոսը։

Մարիամն իր երիտասարդական օղակի անդամների հետ անցավ գործի։ Նախքան հողամասը վարելը, տասը հեկտար տարածությունից հավաքեցին բոլոր քարերը և փոխանակ արտի մեջ քարակույտեր դիզելու՝ ցանքադաշտից դուրս թափեցին։

— Հարկավոր է,— ասում էր Մարիամը,— ամեն մի թիզ հողն օգտագործել։ Եթե Հայաստանի բոլոր կոլտնտեսությունների ցանքադաշտերից դուրս թափվեն քարակույտերը, մենք հսկայական հողամաս կշահենք, մինչև այժմ չօգտագործված այնպիսի հողամաս, որ առատ բերք կտա։

Սկսվեց մանրակրկիտ, քրտնաջան աշխատանք հողի հետ։ Հորդ անձրևներից հետո, երբ երևացին մոլախոտերն ու հողի երեսը կեղևակալվեց, Մարիամի օղակը պատրաստվեց կրկնավարի։ Ցելը երկու անգամ կուլտիվացիայի ենթարկելուց՝ հետո, նրանք աշնանացանը կատարեցին արագաորային շարքացանով, ճիշտ ժամանակին և ընտիր, լիարժեք սերմով։

Բարձր բերքի նախապայմաններն ստեղծվել էին։ Սակայն Մարիամը չէր հանգստանում։ Նրան թվում էր, թե մի բան պարտական մնաց հողին, թվում էր, թե իր մրցակից ընկերուհին՝ օղակավար Օֆիկ Մադոյանը իրենից լավ է մշակում հողը։ Ու նա հաճախ այցելում էր արտը, արտաորոի վնտռում իր օղակի աշխատանքի առաջին կանաչ շյուղերը, առաջին ծիլերը...

***

Երբ արևի ջերմության տակ սկսեց հալել ձյունը և բացվեց գարունը, Մարիամն շտապեց դաշտ՝ իր և իր ընկերների քրտնաջան աշխատանքի արդյունքը դիտելու։ Արբեցումով շնչեց գարնանային զովը և լայն հայացքով ընդգրկեց իր օղակի հողամասը։ Աշնանացանը համատարած կանաչ գորգ էր փռել. դա բարձր բերքի երաշխիքներից մեկն էր։ Բայց մրցումությունից պարզերես դուրս գալու համար դեռ հարկավոր էր շատ աշխատել...

Եվ Մարիամ Մարտիրոսյանի բարձր բերքի երիտասարդական օղակն անցավ աշխատանքի։ Ցանքի լրացուցիչ սնուցումից ու հողի փխրացումից հետո, աշնանացանի բաց կանաչ ծիլերն սկսեցին

գարձրանալ փարթամորեն: Դաշտի մի փոքրիկ մասում ցանքը դանդաղ էր աճում: Այդ խիստ մտահոգեց Մարիամին: Նա դիմեց ագրոտեխնիկին ու փորձառու կոլտնտեսականներին և անմիջապես ձեռնամուխ եղավ նրանց աված խորհրդի իրագործմանը: Օղակի անդամները տակառներով գոմաղբի հեղուկ փոխադրեցին դաշտ և ավելներով շաղ տվեցին դանդաղ աճող ցանքի վրա: Այս ադրոձեռնարկումը տվեց իր դրական արդյունքը: Ապա օղակը ձեռնարկեց մոլախոտերի ոչնչացմանը: Ցորենի դաշտից նրանք արմատախիլ արեցին մոլախոտերը—դանդածաղիկը, խատուտիկը, փառփառ ծաղիկը, ճնճղալեզուն...

Հասավ ամառը: Կանաչ հասկերը ծծեցին արևի ջերմությունն ու դեղնությունը, ծծեցին հողի հյութը, աճեցին, ոսկեզօծվեցին և հակիրճ հատիկներով ծանրաբեռ գլուխները կամաց-կամաց սկսեցին խոնարհել մայր հողին: Արտագծի հովը խշշալով անցավ ու ալեկոծեց ցորենի ոսկե ծովը, և կաքավը ուրախ ճիչ արձակելով թռավ փարթամացած հասկերի միջից: Սկսվեց հունձը: Երեք օր ու գիշեր Մարիամն ու իր երիտասարդ ընկերները չէին հեռանում դաշտից: Դերանդիների ու մանգաղների արծաթյա մահիկը գիշեր ու ցերեկ լողում էր ցորենի ոսկեծուփ ծովի մեջ:

Բարձր բերքի երիտասարդական օղակի անդամները իրիկնամուտին, լուսնի շողերի տակ, նստել էին ընթրիքի՝ արտի եզերքով խոխոջացող առվակի ափին: Մարիամը դիտում էր արծաթափայլ ջրերը, անխոս ունկնդրում նրանց կարկաչին և թվում էր, թե իր սրտից բխող երջանկության մեղեդին է այդ, որ առվակը կարկաչաձայն տանում է հեռուները...

Ինչքա՜ն լավ է աշխատանքը հաղթական պատերազմից հետո, հայրենի ազատ հողի վրա, հայրենի բնության գրկում...

Հեռվում առկայծեցին գյուղի էլեկտրական լույսերը:

Խոր խաղաղության մեջ լսվեց տրակտորի հռնդյուն և քաղցր հուշեր զարթեցրեց Մարիամի սրտում: Նա զգաց այն հարազատ տրակտորի բուրմունքը, որի ծուխը երբեք չհանգավ Հայրենական Պատերազմի ահեղ օրերին...

Նորից լսվեց աղջիկների զնգուն ձայնը, լուսնալույսի տակ փայլփլեցին մանգաղներն ու դերանդիները և խշշացին ցորենի հնձվող հասկերը...

Երիտասարդական ձեռքերի ճկուն աշխատանքով բերքառատ

խուրձերը խնամքով կիտվեցին դաշտում, և լուսադեմին, երբ նախագահն այցելեց նրանց՝ արդեն ամբողջ դաշտը հնձված գտավ։

— Սա՞ղ լինեք, ջահելնե՛ր,—հիացած բացականչեց նա,—ա՛յ, այսպես պետք է աշխատել. դրոհել եք, ինչպես մենք՝ Ստալինգրադում,—հիշեց նախագահը Ստալինգրադյան անմոռանալի օրերը, երբ ինքը ղեկավարում էր հակատանկային հրանոթի դումարտակը։

Հետևյալ օրն սկսեց կալսվել օղակի քրանաջան աշխատանքի արդյունքը։ Կալսիչ մեքենան երախաբաց կուլ տվեց ցորենի խուրձերը, և ոսկու նման խշշացին խոշոր, սերմացու հատիկները։ Եվ երբ կշեռքը գործի դրվեց, Թրթռաց Մարիամի սիրտն ու երջանկությունից լցվեցին նրա երազուն աչքերը։ Պայծառացավ նրա արևախանձ դեմքը։ Տասը հեկտար ցանքից նա ստացել էր 395 ցենտներ ցորեն... հեկտարից 39,5 ցենտներ ամառահատիկ...

— Մարիա՛մ, աղջի՛կս, շա՛տ ապրես, հազա՛ր ապրես...

Հուզվել էր հայրը՝ քեռի Պետրոսը։

***

Ռադիոալիքները Մոսկվայից լեռնային Ջիլհանքով գյուղը հասցրին Կառավարական որոշումը՝ կոմերիտական Մարիամ Մարտիրոսյանին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու մասին։ Առաջին հայուհին էր նա, որ արժանացավ նման բարձր կոչման։ Այդ լուրը խորապես հուզեց Ջիլհանքով գյուղի կոլտնտեսականներին։

Այդ օրը Ջիլհանքով լեռնային գյուղում կարծես ավելի վառ շողշողացին էլեկտրական լամպերը։

Եվ ալեհեր, հին երկրագործ քեռի Մինասը մոտենալով Մարիամին՝ դեղչկական կոշտ բազուկներով ամուր գրկեց նրան։ Երջանկությունից ծերունին թեթևաշարժ պատանի էր դարձել։

— Չորանաս ու չծերանաս, աղջիկս,—դողդողաց նրա ձայնը,—ես ութսուն տարեկան մարդ եմ, յոթանասուն տարի ռանչպարություն եմ արել, բայց այս հողում առաջին անգամ եմ տեսնում այսքան առատ բերք...։ Դու քո հունարով ես թողիր իմ յոթանասուն տարվա ռանչպարությունը, աղջի՛կս։ Դե՛, գիտե՛մ, գոր ու դիշեր քրտինք թափեցիր, աշխատանքը սրտի գործ դարձրիր... ապրե՛ս, հաղթեցի՛ր...

ԻՄ ԳՈՐԾԸ

Ես այնպե՛ս եմ ելնում իմ անից՝
Կարծես թե մոռացա եմ իմ առ՛ջը,
Մեր երկրում՝ ամե՞ն ինչ մոտ է ինձ,
Ամե՛ն ինչ ինձ սիրով ժպտում է։

Մեր ամեն քայլը ե՛րգ է ծնում...
Ահա այս շենքն արդեն շարե՛լ են,
Նոր ջրանցքն արդեն ջո՛ւր է բերում,
Ծաղկե՛լ են նոր անկած ծառերը։

Պանդուխտն իր նոր տունը շինո՛ւմ է,
Նոր ե՛րգ է դրել իմ ընկերը,
Ջինվորը նոր սերմ է ցանո՛ւմ ու
Մաքրում է հողից հին արկերը...

Ինչ լա՛վ է, երբ որ դու տան տե՛ր ես,
Ամեն տեղ զգում ես քո ձե՛ռքը,
Բայց ամե՞ն տեղ ունես քո տեղը
Նվ ուր էլ որ լինես—դու պե՛տք ես։

Ես քայլո՛ւմ եմ, հրճվո՛ւմ ու երգո՛ւմ՝
Մաքով հյո՛ւր եմ գնում Գալիքին,
Ինչ լա՛վ է երազանքը կյանքում,
Երբ նա ո՛ւժ է տալիս քո ձեռքին։

Նվ դիտած ամե՛ն ինչ գալիքից
Ամե՛ն ինչ գալիքով աոուգած,

Դառնում եմ անհատ ու անհանդիստ՝
Ապրելու ներկայում՝ ապագան։

Ես դիտե՛մ իմ գործը մարտական,
Պոեզը—գալիքի դեսպա՛նն է,
Բղթակի՛ցը նրա անփոխարինելի
Եվ նրա խղճմտա՛նքն ու ձա՛յնը։

Թե՞ կարծում էիք իմ երգը դեռ
Միայն սե՛րն ու սիրո հոգո՛ցն է...
—Ժա՛մ առաջ կոմունիզմը կերտել՝—
Ահա իմ փա՛ռքը և իմ դո՛րձը։

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Մեծ հոկտեմբերն է մեր օրորոցը
Եվ «Ավրորայի» որոտն՝ օրոր,
Ով որ վախկոտ է գրողի ծոցը
Քաջի սերունդ ենք մենք փառավոր։

Մեր երկիրն է մեր հարազատ տունը.
Նրա բախտով ենք մենք բախտավոր,
Նրան է սազում լոկ մեր անունը
Ոմ սիրտն արծիվ է մի թևավոր։

Մենք միշտ այնտեղ ենք, որտեղ դժվար է,
Ուր դեռ չի դիպել ոտքը մարդու,
Մենք ուր լինում ենք՝ ծաղկում է քարը
Եվ ջուր է բխում անապատում։

Մեր դեմ անզոր են ձյունն ու ձմեռը,
Հավետ ջահել ենք մենք մնալու,

Այնքան շա՜տ են մեր վսեմ գործերը,
Որ միջոց չկա ծերանալու։

Պատգամ է տվել մեզ պատմությունը,
Փրկություն բերել ողջ աշխարհին.
Սիրահարվա՜ծ է մեզ հաղթությունը
Մեր եռանից է փառքը գալիս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Ծրիւռ խոսք	3
Հավետ Շիրազ—*Մեծ Սուլթանին*	5
Վահագն Դավթյան—*Մեր փոքրիկ ուղին*	7
Թարուլ Հուրյան—*Աստղը*	9
Գեղամ Սարյան—*Հետախույզը*	12
Սա. Կուրտիկյան—*Անմահները*	17
Թևան Խաչյան—*Դուքաս Դուկասյանին*	36
Հոիփսիմե Պողոսյան—*Նա չի մոռացվի*	37
Գարեգին Բես—*Ընկերները*	38
Աբսեն Հովհաննիսյան—*Սանիտարուհին*	43
Գառույր Միքայելյան—*Այն բարի ուկրաինուհին*	44
Սարմեն—*Արձանի մոտ, Վարդան, Կոմերիտական քայլերգ*	45
Վ. Սարաֆյան—*Կոմերիտական հերոսները*	51
Սաղ. Հարությունյան—*Կոմերիտմիության տոմսը*	61
Աշոտ Գրաշի—*Վիճինյան սերունդ*	63
Սաղ. Հարությունյան—*Անվհատ տանկիստը*	65
Հենր. Թումանյան—*Մեր սերունդը*	70
Վահագն Կարենց—*Եվ քո գլխարիկը կապույտ և այն վարդը սպիտակ*	72
Գաբրիել Սրեյան—*Վիշապաջուր*	74
Արշալույս Սարոյան—*Վերնուշ, Հնձվորներ*	79
Համո Սահյան—*Կոմերիտականների երգը*	82
Ռ. Ինյարեանյան—*Անմահության հուշարձան*	84
Սիլվա Կապուտիկյան—*Ֆրադմենտ, Սևանշինում*	89
Աղավնի—*Անակնկալ հանդիպում*	91
Մարտին Քարամյան—*Վաստակ*	97
Ա. Թամազյան—*Երիտասարդ ռազմիկներին մոտ*	99
Միրոփչ Կոչուն—*Երգ կոմսոմոլին*	104
Արշալույս Միրաս—*Կոմերիտուհին*	105
Արարատ Այվազյան—*Կոմերիտուհի Սիրվարդ Արշակյանին*	107
Սա. Կուրտիկյան—*Դյումուշդէսի երիտասարդ կառուցողները, Հերոսուհին*	109
Գևորգ Էմին—*Իմ դործը, Կոմերիտական քայլերգ*	125

Շապիկը՝ նկարիչ ՀՈՎՀ. ՇԱՀՄԱՐԾԻ

Տէխ. խմբագիրը՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ԴԱՒԹՅԱՆ

Վ/Ց 00219: Պատվեր 426: Տիրաժ 3000:
Հերթն. 5,7 մամուլ, տպ. 8¼ մամ.:
Ձանձնված է արտ. 25/X 1948 թ.:
Տառատպվ. է տպ. 15/XII 1948 թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին
կից Պոլիգր. և հրատ. վարչ.
№ 3 տպարան, Ալավերդյան, № 65, Երևան, 1948 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030856

A II 30856

[504.]